

ԱՊՀ ՄԱՄՆԱԿԻՅ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ  
Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և քաղաքացիների  
ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի  
միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆ

**ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ  
ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ)**



ԵՐԵՎԱՆ - 2018

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻԶԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

*Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և  
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության  
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ  
ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

Երևան  
«Հայրապետ» հրատարակչություն  
2018

ՀՏԴ 342.8 (07)  
ԳՄԴ 67.400.5g7  
Ը 610

Ընտրական իրավունքի սահմանադրաիրավական հիմքերի  
և ընտրական իրավունքի խախտումների քննության մեթո-  
ղիկայի արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: Գիտամեթոդա-  
կան ձեռնարկ/ Հեղինակային խումբ ; ԱՊՀ ՄԽՎ քարտու-  
ղարություն.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2018. – 208 էջ:

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղը (այսուհետ՝ Մասնաճյուղ) Հայաստանի Հանրապետությունում գործունեություն է ծավալում շուրջ յոթ տարի, որի ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նվիրված են եղել ժողովրդավարության, պառլամենտարիզմի և ընտրական իրավունքի իրականացման խնդիրների վերհանմանն ու այդ իրավունքների իրականացմանը օժանդակելուն (Մասնաճյուղի կողմից իրականացված աշխատանքներին կարող եք ծանոթանալ [www.mimrd.am](http://www.mimrd.am) կայքում): Սույն գիտամեթոդական ձեռնարկը Մասնաճյուղի կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության մասնակցությամբ անցկացված հերթական գիտագործնական ուսումնասիրությունն է, որի նպատակն է բացահայտել ընտրական իրավունքի իրականացման սահմանադրաիրավական հիմքերի հետ կապված արդի հիմնախնդիրները, ընտրական իրավախախտումների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները և էությունը:

Այն կարող է օգտակար լինել ընտրական հանցագործությունների քննության հետ առնչվող իրավապահ մարմինների աշխատակիցների, դիտորդական առաքելություն իրականացնող քաղաքացիների և կազմակերպությունների, իրավաբանական բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների և ընտրական իրավունքի խնդիրներով հետաքրքրվող անձանց համար:

**Սույն ձեռնարկում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել ԱՊՀ ՄԽՎ քարտուղարության պաշտոնական դիրքորոշումներին:**

ՀՏԴ 342.8 (07)  
ԳՄԴ 67.400.5g7

ISBN 978-9939-838-79-3

© ԱՊՀ ՄԽՎ քարտուղարություն 2018

Աշխատանքային խմբի ղեկավար՝ ԱՊՀ ՄԽՎ ԺԶՄՄԻ Երևանյան  
մասնաճյուղի տնօրեն,  
իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր **Վ.Դ. Ավետիսյան**

Մասնագիտական խմբագրեր՝ ՀՀ հատուկ քննչական  
ծառայության պետի տեղակալ,  
արդարադատության առաջին  
դասի խորհրդական  
**Վ.Պ. Հովհաննիսյան,**

ՀՀ հատուկ քննչական  
ծառայության աշխատակազմի  
իրավական ապահովման բաժնի  
պետ **Ս.Հ. Գալստյան**

## Հեղինակներ՝

ԵՊՀ քրեական դատավարության և  
կրիմինալիստիկայի ամբիոնի  
պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր  
**Վ.Գ. Ենգիբարյան,**

ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ.  
թեկնածու, դոցենտ **Վ.Ն. Այվազյան,**

ՀՀ հատուկ քննչական ծառայության  
աշխատակազմի իրավական  
ապահովման բաժնի գլխավոր  
մասնագետ **Ն.Տ. Տեր-Թորոսյան**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>8</b>
<b>1. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....</b>	<b>12</b>
§ 1.1. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի դերն ազատ ընտրությունների կազմակերպման գործում .....	12
§ 1.2. Ընտրությունների նախապատրաստական փուլի առանձնահատկությունները .....	23
§ 1.3. Քվեարկության կազմակերպումն ու անցկացումը .....	36
§ 1.4. Քվեարկության արդյունքների ամփոփումն ու հրապարակման կարգը.....	55
<b>2. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....</b>	<b>69</b>
§ 2.1. Ընտրական իրավունքների դեմ ուղղված վարչաիրավական բնույթի խախտումները .....	69
§ 2.2. Ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունները .....	93
§ 2.2.1. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (հոդված 149) .....	93
§ 2.2.2. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց .....	97
հրաժարվելուն հարկադրելը (հոդված 149.1) .....	97
§ 2.2.3. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150).....	101

§ 2.2.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (հոդված 152) .....	107
§ 2.2.5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (հոդված 153).....	109
§ 2.2.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (հոդված 154).....	111
§ 2.2.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը (հոդված 154 <sup>1</sup> ).....	114
§ 2.2.8. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154.2) .....	119
§ 2.2.9. Ջենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը (հոդված 154 <sup>4</sup> ).....	126
§ 2.2.10. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (հոդված 154 <sup>5</sup> )	128
§ 2.2.11. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154. <sup>6</sup> ).....	130
§ 2.2.12. Քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնաստանձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ	

համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը (հոդված 154.7)..... 133

§ 2.2.13. Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը (հոդված 154.8) ..... 136

§ 2.2.14. Ընտրակաշառքի միջնորդությունը (հոդված 154.9)141

**3. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ .....144**

§ 3.1. Ընտրական հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը ..... 144

§ 3.2. Քննչական իրադրության և պարզաբանման ենթակա հանգամանքների առանձնահատկություններն ընտրական հանցագործությունների վերաբերյալ գործերով..... 158

§ 3.3. Քրեական գործի հարուցման փուլի առանձնահատկություններն ընտրական հանցագործությունների քննության գործերով ..... 167

§ 3.4. Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում կատարվող քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջաջառումների առանձնահատկությունները ..... 185

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....202**



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի վերջին Երկիր մոլորակի քաղաքական քարտեզը միանգամայն նոր երանգ ստացավ, մասնավորապես ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ինչպես իր տարածքում, այնպես էլ Արևելյան Եվրոպայի հատվածում ձևավորվեցին որակապես նոր պետություններ, որոնք ներկայում գտնվում են ժողովրդավարության կերտման ճանապարհին: Այդ խնդրի իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե նշված երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, ժողովուրդը որքանով է ունակ իրացնելու իրեն պատկանող իշխանությունը: Իսկ անմիջական ժողովրդաիշխանության իրացման առաջնային ձևը ընտրություններն ու հանրաքվեն են:

Տարբեր ժամանակներում ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման փորձը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության այդ կարևոր ինստիտուտները, ըստ էության, դեռևս գտնվում են ձևավորման փուլում: Այդ մասին են վկայում միջազգային վերլուծաբանների տվյալները, համաձայն որոնց՝ ԱՊՀ երկրներում, Եվրամիության անդամ երկրների համեմատ, ընտրական գործընթացների վարկանիշը 2006 թվականի դրությամբ ցածր է ավելի քան 3,5 անգամ, իսկ վերջին 10 տարիների ընթացքում այն նվազել է 12 տոկոսով (Հայաստանում այդ տվյալները կազմում են համապատասխանաբար՝ 3,62 անգամ և 4,6 տոկոս)<sup>1</sup>: Վերը նշվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չեն ձևավորվել միջազգային չափանիշներին համարժեք երաշխավորված ժողովրդավարական ընտրություններ ինչպես օրենսդրական նախադրյալների, ինստիտուցիոնալ որոշումների, այնպես էլ գործընթացի կազմակերպման և իրացման առումով: Այդ ինստիտուտների կայացմանը խոչընդոտում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, ինչպիսիք են՝ ընտրական օրենսդրության անկատարությունը, հասարակության սոցիալ-տնտեսական վատ դրությունը, ազատ և արդար ընտրությունների մշակույթի բացակայությունը և այլ հանգամանքներ,

---

<sup>1</sup>Տե՛ս Բ.Գ. Арутюнян, Вступительное слово на XI Ереванской международной конференции: «Роль конституционных судов в обеспечении демократических выборов» (5-7 октября 2006 г.). Альманах, Ереван, 2006, էջ 5:

որոնցից օգտվելով՝ որոշ քաղաքական ուժեր ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քվեարկության արդյունքները հաշվեգրում են իրենց օգտին: Արդյունքում՝ հասարակության շրջանում առաջանում են դժգոհություններ, նվազում է վստահությունը ձևավորված իշխանությունների նկատմամբ, ինչն էապես խոչընդոտում է երկրի առաջընթաց զարգացմանը:

Վերոգրյալը հաշվի առնելով, ինչպես նաև թեմայի ուսումնասիրության ամբողջականության ապահովման նպատակով՝ գիտամեթոդական ձեռնարկում անդրադարձ է կատարվել ընտրական իրավունքների դեմ ուղղված և՛ վարչաիրավական, և՛ քրեաիրավական բնույթ ունեցող խախտումներին:

Ընտրական իրավունքների դեմ ուղղված վարչաիրավական բնույթի խախտումների պարագրաֆում ներկայացվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված ընտրական իրավախախտումների ընդհանուր բնութագիրը, 2014-2018թթ. օրենսդրական փոփոխությունները, դրանց մեկնաբանությունները՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի դրույթների լույսի ներքո: Ուսումնասիրվել են մի շարք հարակից օրենքներ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կայացված որոշումներ:

Ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների պարագրաֆում՝ որպես «Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում»՝ «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայի համատեքստում» գիտամեթոդական ձեռնարկի շարունակություն, ներկայացվել են 2014 թվականից ի վեր կատարված օրենսդրական փոփոխությունները, դրանց մեկնաբանությունները «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի դրույթների լույսի ներքո, ինչպես նաև ընտրական գործընթացներին վերաբերող մի շարք քրեական գործեր:

Ընտրական հանցագործությունների դեմ պայքարի գործում հարկ է ընդգծել Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության դերը: Բանն այն է, որ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի համաձայն՝ «Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատես-

ված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև **ընտրական գործընթացների հետ կապված** քրեական գործերով նախաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի **149, 150, 154.1 , 154.2, 154.9, 314.2, 314.3, 310.1** հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 149-ով (*«Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը»*), 150-ով (*«Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը»*), 154<sup>1</sup>-ով (*«Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը»*) 154<sup>2</sup>-ով (*«Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը»*) և 154.9-ով (*«Ընտրակաշառքի միջնորդությունը»*) քրեական գործերով նախաքննությունն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:

Ուսումնասիրության թեմայի լիարժեքության պահպանման նպատակով սույն աշխատանքում ներկայացվել են ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկայի հիմնախնդիրները, բացահայտվել են այս տեսակ հանցագործությունների քննությանը բնորոշ որոշակի օրինակափոխություններ և մարտահրավերներ:

Այդ նպատակով ուսումնասիրվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից 2015-2017թթ. ընթացքում քննված 54 քրեական գործերի նյութեր, որոնք վերաբերել են ինչպես համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, այնպես էլ հանրաքվեի ընթացքում արձանագրված իրավախախտումների դեպքերին: Ընդ որում, ուսումնասիրվել և վերլուծ-

վել են վիճակագրական տվյալներ, որոնք թույլ են տվել բացահայտել ընտրական հանցագործություն կատարող անձին բնութագրող տիպային հատկանիշները, հանցագործության կատարման տիպային եղանակները, միջոցները, ժամանակահատվածը, իրադրությունը և այլն:

Ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկայի կառուցվածքի և բովանդակության, ինչպես նաև դրանց քննության արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքում որոշակի տրամաբանական հաջորդականությամբ ուսումնասիրվել են այս տեսակ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը, ապա այդ հիմքի վրա՝ պարզաբնաման ենթակա հանգամանքների տիպային շրջանակը և քննչական իրադրությունն ու քննության պլանավորման առանձնահատկությունները: Կրիմինալիստիկական մասնավոր մեթոդիկայի վերը թվարկված տարրերի բացահայտման արդյունքներով ներկայացվել են քննության սկզբնական փուլի էությունն ու նշանակությունը, ինչպես նաև այդ և հետագա փուլերի ընթացքում կատարվող քննչական գործողությունների կազմակերպական ու տակտիկական առանձնահատկությունները:

Աշխատանքի կառուցվածքը հնարավորություն է տալիս նյութն ուսումնասիրել գիտականորեն հիմնավորված, համակարգված և առավել մատչելի, ինչպես նաև հստակ պատկերացում կազմել այս տեսակ հանցագործությունների քննության վիճակի, օրնաչափությունների և հնարավոր հակազդեցությունների մասին:

# 1. ԸՆՏՐՈՎԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

## §1.1. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի դերն ազատ ընտրությունների կազմակերպման գործում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածում ժողովրդաիշխանության ձևերի թվարկված հերթականությամբ կարելի է ենթադրել, որ ժողովրդին պատկանող իշխանության իրականացման գործում երկրի հիմնական օրենքն առաջնային ձև է ճանաչում անմիջական ժողովրդաիշխանությունը («ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների (...) միջոցով»), այնուհետև վկայակոչվում են ներկայացուցչական ժողովրդաիշխանության ձևերը («(...) ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»): Ներկայացուցչական ժողովրդաիշխանության ձևերը, ի դեմս Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների, ձևավորվում են անմիջական ժողովրդաիշխանության ձևերի միջոցով և գտնվում են ժողովրդի վերահսկողության ներքո:

Եթե հիմք ընդունենք այն, որ Հանրապետության Հիմնական օրենքի 2-րդ հոդվածում ժողովրդաիշխանության իրացման ձևերը թվարկվում են ըստ կարևորության, ապա պարզ կդառնա, որ դրանց թվում առաջին կարևորության ձևն **ազատ ընտրություններն են**: Ընդ որում, ժողովրդին պատկանող իշխանության իրացման այդ ձևի կարևորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ընտրությունների միջոցով և դրա վերջնարդյունքում ձևավորվում է ողջ պետական ապարատը, այլ նաև նրանով, որ ՀՀ Սահմանադրության համաձայն (48-րդ հոդված)՝ հանրապետության քաղաքացիները կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցում են երկրի պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը:

Հայաստանի Հանրապետության հասարակական և պետական կյանքի այդ կարևոր հիմնախնդիրների արդյունավետ լուծման գործում չափազանց կարևոր է հանրապետությունում գործող ընտրական համակարգի դերը: Խնդիրն այն է, որ կախված նրանից, թե որքանով է այդ համակարգն ապահովում ազատ ընտրությունների անցկացումը, այդքանով էլ կարող է ապահովված լինել պետական իշխանության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների իրական լեգիտիմությունը<sup>1</sup>:

Սահմանադրական իրավունքի պատմությունը վկայում է, որ «**ընտրություն**» հասկացությունն ունի խոր արմատներ: Այն սկիզբ է առնում տոհմատիրական կարգերից, և պետականության բաղադրամասերից է եղել որոշ հին ստրկատիրական պետություններում, ինչպես նաև ֆեոդալիզմի շրջանի որոշ քաղաք-պետություններում: Ընտրությունները, ընտրական իրավունքը և ընտրական համակարգն առանձնահատուկ տարածում գտան կապիտալիստական կարգերի առաջացման և զարգացման ժամանակաշրջանում:

Իրավաբանական գրականության մեջ «**ընտրություն**» հասկացությունը մեկնաբանվում է որպես *համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց, որն իրականացվում է իրավազոր անձանց քվեարկության միջոցով:*

Ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրականացնում են իրենց կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը, որոշում իրենց ներկայացուցիչներին համապատասխան ընտրովի մարմնում և օժտում նրանց ժողովրդաիշխանության իրականացման մանդատներով սահմանադրությամբ նախատեսված շրջանակներում:

Ընտրությունների միջոցով են կազմավորվում խորհրդարանները, տեղական ինքնակառավարման մարմինները, որոշ երկրներում՝ պետության գլուխը, կառավարությունը, դատական իշխա-

---

<sup>1</sup> Սահմանադրական իրավունքում լեգիտիմություն (լատիներեն legitimus-օրինական) է անվանվում պետական իշխանության մարմնի կամ բարձրագույն պաշտոնատար անձի իրավունքների և լիազորությունների օրինականության, ինչպես նաև Սահմանադրությանը և ժողովրդի օրինական արտահայտած կամքին դրանց խստագույնս համապատասխանության ճանաչումը:

նության մարմինները:

Եթե «ընտրություններ» եզրույթը, ինչպես արդեն նշվեց, մեկնաբանվում է որպես քվեարկության միջոցով որևէ մարմնի կազմավորում և այդ առումով հատուկ պարզաբանման կարիք չունի, ապա **«ընտրական իրավունք»** հասկացությունը, որպես կանոն, գործածվում է երկու իմաստով՝ **սուբյեկտիվ և օբյեկտիվ**:

**Սուբյեկտիվ իմաստով** ընտրական իրավունքը քաղաքացուն տրված հնարավորություն է մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը՝ ընտրելու (ակտիվ ընտրական իրավունք) և ընտրվելու (պասիվ ընտրական իրավունք) միջոցով:

Սուբյեկտիվ ընտրական իրավունքը քաղաքացու կոնկրետ իրավունքների համակարգ է, որի մեջ առանձնանում է **ակտիվ և պասիվ** ընտրական իրավունքը:

**Ակտիվ ընտրական իրավունքն** անվանում են նաև **ձայնի իրավունք** կամ ընդհանուր ընտրական իրավունք:

**Պասիվ ընտրական իրավունքը** ենթադրում է ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը կամ առաջադրվելու համաձայնություն տալու իրավունքը: Այսինքն, սուբյեկտիվ իմաստով «ընտրական իրավունք» հասկացությունն ընդգրկում է ինչպես ընտրելու, այնպես էլ ընտրվելու իրավունքը:

**Օբյեկտիվ իմաստով** ընտրական իրավունքն այնպիսի իրավական նորմերի համակարգ է, որը կարգավորում է ընտրովի մարմինների կազմավորման վերաբերյալ հասարակական հարաբերությունները, այսինքն՝ այդ մարմինների կազմավորման կարգը:

Այսպիսով՝ *ընտրական իրավունքը՝ որպես սահմանադրաիրավական նորմերի ամբողջություն, կազմում է սահմանադրական իրավունքի բաղկացուցիչ մասը, նրա կարևոր ինստիտուտներից մեկը և կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում, ինչպես նաև անմիջական ժողովրդահշխանության իրացման այլ գործընթացներում (հանրաքվե, ժողովրդական նախաձեռնություն և այլն):*

Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքի հետ սերտորեն կապված է **ընտրական համակարգը**, այսինքն՝ այն հասարակական հարաբերությունների ամբողջությունը, որոնք ծագում են որևէ

մարմնի ընտրության կապակցությամբ: Մասնավորապես, ՀՀ ընտրական համակարգն ընդգրկում է ՀՀ Սահմանադրությամբ և 2016թ. մայիսի 28-ին ընդունված «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական իրավունք ունեցող անձանց կողմից անմիջականորեն ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը:

Հետևաբար, ընտրական համակարգի և ընտրական իրավունքի փոխադարձ անխզելի կապն ակնհայտ է, սակայն, հարկ է նկատել, որ դրանք նույնական չեն:

Այսպես, ընտրական համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգն է, իսկ ընտրական իրավունքը՝ ընտրությունների այդ կարգը սահմանող սահմանադրաիրավական նորմերի ամբողջությունը:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ ընտրական համակարգը մեկնաբանվում է լայն և նեղ իմաստով:

Լայն իմաստով՝ ընտրական համակարգը հանրային իշխանության մարմինների ընտրությունների կապակցությամբ կարգավորված հասարակական հարաբերություններ են, որոնք կազմում են ընտրությունների կարգը:

Նեղ իմաստով՝ ընտրական համակարգը համարվում է մանրատները թեկնածուների միջև բաշխելու միջոց՝ հաշվի առնելով ընտրողների քվեարկության արդյունքները:

Մեր օրերում արտասահմանյան երկրների ճնշող մեծամասնությունում կիրառվում է առավելապես **ընտրական համակարգերի 2 տեսակ՝ մեծամասնական և համամասնական**, իսկ որոշ երկրներում՝ դրանց համակցությունը:

Սահմանադրական իրավունքի պատմությունը ցույց է տալիս, որ առաջին ընտրական համակարգը եղել է մեծամասնական (մաժորիտար) համակարգը, որը ֆրանսիական ծագում ունի: Այս համակարգը կիրառվում է, առավելապես, միամանդատ ընտրատարածքներում, որի էությունը կայանում է նրանում, որ տվյալ ընտրատարածքում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է սահմանված ձայների մեծամասնությունը:

**Մեծամասնական ընտրական համակարգը դրսևորվում է մի քանի տարատեսակներով՝ ա) հարաբերական մեծամասնության, բ) բացարձակ մեծամասնության և գ) որակյալ մեծամասնության:**



**Մեծամասնական համակարգի հարաբերական մեծամասնության** դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է ավելի շատ ձայներ, քան իր հետ քվեարկվող մյուս թեկնածուներն առանձին-առանձին վերցրած: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն:

**Մեծամասնական համակարգի բացարձակ մեծամասնության** դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է ավելի շատ ձայներ, քան ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուները միասին վերցրած, այսինքն՝ տրված ձայների ընդհանուր թվի կեսից ավելին:

**Մեծամասնական համակարգի որակյալ մեծամասնության** էությունն այն է, որ ընտրված է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրողների ձայների կեսից զգալի թվով ավելի ձայներ (երկու երրորդը) ստացած թեկնածուն:

**Մեծամասնական ընտրական համակարգի հարաբերական մեծամասնության տեսակը կարող է կիրառվել ինչպես միամանդատ, այնպես էլ բազմամանդատ ընտրատարածքներում:**

Համամասնական ընտրական համակարգի գաղափարը նույնպես ծագել է Ֆրանսիայում 18-րդ դարի վերջին, այնուհետև 19-րդ դարի առաջին կեսերին այդ կապակցությամբ նախագծեր են առաջարկվել Ամերիկայում և Շվեյցարիայում: Սակայն, համամասնական ընտրական համակարգն առաջին անգամ կիրառվել է 1889 թ. Բելգիայում: Արդեն 20-րդ դարի սկզբին հայտնի էին ընտրական այդ համակարգի 152 տարատեսակներ:

Համամասնական ընտրական համակարգը կիրառվում է պատգամավորների ընտրությունների ժամանակ և անհրաժեշտ է, որպեսզի ընտրություններն անպայման լինեն կուսակցական ցուցակներով<sup>1</sup>: Այս համակարգի դեպքում պատգամավորական մանդատներ ստանալու համար յուրաքանչյուր կուսակցություն, որպես կանոն, պետք է ստանա ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի թվով ձայներ՝ քվոտաներ: Դրանից էլ կախված է համապատասխան կուսակցության պատգամավորական տեղերի թիվը, որը որոշելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ: Կուսակցության

---

<sup>1</sup> Այդ համակարգով է անցկացվում նաև Երևանի ավագանու ընտրությունները (տես «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150 հոդվածը):

(կուսակցությունների դաշինքի) ստացած մանդատների թիվը համապատասխանում է դրա թեկնածուների օգտին տրված ձայների թվին:

Համամասնական ընտրական համակարգը հաճախ գնահատվում է ավելի նախընտրելի և ժողովրդավարական, քան մեծամասնականը, քանի որ առաջինը համեմատաբար ճիշտ է արտահայտում հասարակական կարծիքը:

Յուրաքանչյուր ընտրական համակարգի (մեծամասնական, համամասնական կամ խառը) կիրառումը համապատասխան երկրներում կախված է օրենսդիր մարմնում քաղաքական ուժերի հարաբերակցությունից և, այս առումով, այն սուբյեկտիվ բնույթ է կրում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ներկայումս կիրառվում է միայն համամասնական ընտրական համակարգը:

Հարկ է նկատել սակայն, որ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նշված ընտրությունների իրականացման կառուցակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրական վերը նշված նորմը կյանքի է կոչվել խեղաթյուրումներով, որի արդյունքում նենգափոխվել է համամասնական ընտրական համակարգի ողջ էությունը: Ասվածի վառ ապացույցը դարձավ նաև 2018 թ. ապրիլ ամսին սկիզբ առած համաժողովրդական բուռն շարժումը, որն ավարտվեց մեր երկրում իշխանափոխությամբ, քանզի գործող ընտրական համակարգը՝ որպես համամասնական, չարտացոլեց հասարակության իրական ընտրությունը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը բաղկացած է առնվազն 101 պատգամավորից, որոնք ընտրվում են համամասնական ընտրակարգով:

Մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը բաղկացած էր 131 պատգամավորից: Ընդ որում, 90 պատգամավոր ընտրվում էր համամասնական ընտրակարգով (Հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից)՝ կուսակցությունների ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից, իսկ 41 պատգամավոր ընտրվում էր միամանդատ ընտրատարածքներից՝ մեծամասնական ընտրական համակարգի հարաբերա-

կան մեծամասնության ընտրակարգով, յուրաքանչյուր ընտրատարածքից՝ մեկ պատգամավոր:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Ազգային ժողովը, որն ընտրվել էր 1995 թ. հունիսի 5-ին «Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» 1995 թ. ապրիլի 4-ին ընդունած օրենքին համապատասխան, բաղկացած էր 190 պատգամավորից, որից 150 պատգամավոր ընտրվել էր մեծամասնական ընտրական համակարգով, իսկ 40-ը՝ համամասնական ընտրակարգով (2-րդ հոդվ.): Այդ ժամանակից սկսած՝ Հանրապետության քաղաքական շրջաններում ակտիվ գաղափարական պայքար էր տարվում այդ հարաբերակցության փոփոխման ուղղությամբ՝ հօգուտ կուսակցական ցուցակներով ընտրությունների: Արդյունքում երկրորդ գումարման Ազգային ժողովում ընտրված (1999 թ. մայիսի 30-ին) 131 պատգամավորից արդեն 56-ը ընտրվեցին համամասնական ընտրակարգով, երրորդ գումարման ժամանակ (2003թ. մայիսի 25-ին)՝ 75, իսկ չորրորդ գումարման ժամանակ (2007թ. մայիսի 12-ին)՝ 90 պատգամավոր:

Դրանից հետո, ՀՀ Ազգային ժողովի՝ ընտրության կարգի կատարելագործման գաղափարի կողմնակիցները սկսեցին հիմնավորել այն մոտեցումը, որ Ազգային ժողովի ձևավորումը նպատակահարմար է իրականացնել միայն համամասնական ընտրակարգով (կուսակցական ցուցակներով)՝ պատճառաբանելով, որ այն կնպաստի կուսակցությունների կայունացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից քաղաքական որոշումների ընդունման հեշտացմանը, որին, իբր, մեծապես խոչընդոտում են մեծամասնական ընտրական համակարգով ընտրված անկուսակցական պատգամավորները: Վերջիններս, քվեարկությունների ժամանակ միանալով այս կամ այն խմբակցությանը, փոխում են ուժերի հարաբերակցությունը:

Բանն այն է, որ Ազգային ժողովի՝ որպես պետական իշխանության օրենսդիր մարմնի և նրանում պատգամավորական տեղեր ստացած կուսակցությունների՝ որպես պետական իշխանության իրականացման մասնակիցների դերն ու նշանակությունը հաճախ ճիշտ չի ընկալվում: Պետք է նշել, որ Ազգային ժողովը ամենից առաջ պետական մարմին է՝ պետական իշխանության օրենսդիր մարմին, որը Սահմանադրության 88-րդ հոդվածի (2-րդ մաս) հիման

վրա կոչված է իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը: Նա պետք է ընդունի օրենքներ և այլ օրենսդրական ակտեր, որոնցով կարգավորվեն երկրի հասարակական և պետական կյանքի առավել կարևոր ոլորտների հարաբերությունները

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության՝ 2011թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ Ընտրական օրենսգիրքը լայն հնարավորություն էր ընձեռում կուսակցություններին՝ անգամ խառը ընտրական համակարգի պայմաններում, Ազգային ժողովը ամբողջությամբ ձևավորել կուսակցական հիմքի վրա: Այսպես, նշված օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ կուսակցությունները և կուսակցությունների դաշինքներն իրավունք ունեին համամասնական ընտրակարգով (ցուցակներով), իսկ 114-րդ հոդվածի համաձայն՝ նաև մեծամասնական ընտրակարգով (դարձյալ ցուցակներով) առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներ: Ընդ որում, այդպիսի իրավունք ունեին բոլոր կուսակցությունները՝ անկախ խորհրդարանում պատգամավորական տեղեր ունենալու հանգամանքից: Դա նշանակում է, որ կուսակցությունները լայն հնարավորություն ունեին պայքարելու ինչպես համամասնական այնպես էլ մեծամասնական ընտրական համակարգով Ազգային ժողովում նախատեսված պատգամավորական տեղերի համար:

Երրորդ, ինքնաառաջադրման կարգով մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման կարգից հրաժարվելը էապես կնեղացնի ժողովրդաիշխանության իրացման ներկայացուցչական ժողովրդավարության հիմքերը: Բացի դրանից, մեծամասնական ընտրական համակարգը, ըստ էության, ունի անվիճելի առավելություններ համամասնական ընտրակարգի նկատմամբ այն առումով, որ պատգամավորի հետ ընտրողների ավելի սերտ կապերի ստեղծման համար անհրաժեշտ է, որպեսզի վերջիններս քվեարկեն հօգուտ կոնկրետ թեկնածուի, այլ ոչ թե կուսակցության կամ դրանց դաշինքի կողմից պատրաստված պատգամավորության թեկնածուների ցուցակի:

Այլ հարց է, որ մեր օրերում ինչպես համամասնական ընտրակարգով, այնպես էլ մեծամասնական ընտրակարգով կազմակերպված Ազգային ժողովի ընտրությունների արդյունավետությունը կարող է կասկածի տակ դրվել:

Առաջինի դեպքում կուսակցությունների և դրանց դաշինքների կողմից կազմված պատգամավորության թեկնածուների ցուցակներում հաճախ ընդգրկվում են այնպիսի անձինք, ովքեր իրենց մասնագիտական, բարոյական և այլ որակներով որևէ առնչություն չունեն պառլամենտի և պառլամենտարիզմի հետ:

Երկրորդի պարագայում, ընտրությունների արդյունքների վրա իր կնիքն է թողնում ժողովրդի սոցիալական ծանր վիճակը և պառլամենտական ավանդույթների ու մշակույթի պակասը, որն էլ օգտագործվում է Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուների կողմից:

Վերջին նկատառումների համատեքստում միգուցե կարելի է արդարացված համարել այն, որ 2015թ. փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը Ազգային ժողովի ընտրության կարգը տեսնում է միայն համամասնական եղանակով(3-րդ մաս):

Ուշագրավ է, որ 2016 թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտած «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հեղինակները, այնուամենայնիվ շրջանցելով Սահմանադրության նշված նորմի (89-րդ) պահանջները, որոշ իմաստով պահպանեցին Ազգային ժողովի ընտրության ժամանակ մեծամասնական ընտրակարգի կիրառությունը՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններին իրավունք վերապահելով առաջադրելու թեկնածուների մեկ համապետական ընտրական ցուցակ և մեկական տարածքային ընտրական ցուցակ յուրաքանչյուր ընտրական տարածքի համար (83-րդ հոդվ. 1-ին մաս):

Ընտրական իրավունքի սահմանադրաիրավական հիմքերի վերհանման առնչությամբ կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում գործող ընտրական համակարգը՝ լայն առումով: Ընդ որում, ընտրական համակարգի գլխավոր առաքելությունն ուղղված է ոչ թե սոսկ «ընտրությունների», այլ «ազատ ընտրությունների» կազմակերպմանը և անցկացմանը, քանզի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2-րդ հոդվ.) ժողովրդին պատկանող իշխանության իրականացման անմիջական ժողովրդաիշխանության ձև է ճանաչում ոչ թե ընտրությունների կազմակերպումն ընդհանրապես, այլ ազատ ընտրությունները:

Ինչպես Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության, այնպես էլ սահմանադրական իրավունքի գիտության մեջ հստակ սահմանված չեն ընտրությունների «ազատ» լինելու չափանիշները:

Արդյունքում, ազատ ընտրությունների գաղափարը հաճախ հանգեցվում է ընտրական իրավունքի իրականացման ժամանակ ընտրողի նկատմամբ ճնշման, բռնության և ահաբեկման երևույթների բացառմանը: «Ազատ ընտրությունները ենթադրում են ընտրական գործընթացի վրա ամեն տեսակ ճնշումների բացառումը (ազդեցություն, ճնշում, ահաբեկչություն, սպառնալիք), որոնք անհատի վարքագիծը կախման մեջ են դնում քվեարկության կամ ընտրությունների հետևանքների բնույթից», - գրում է պրոֆ. Գ. Հարությունյանը:

Ամենևին չնսեմացնելով ընտրություններն «ազատ» որակելու հարցում վերը նշված հանգամանքների դերը՝ հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, քննարկվող հիմնախնդրի համար ելակետային չափանիշը, մեր կարծիքով, հանդիսանում է ժողովրդի կամքի լրիվ և ամբողջական դրսևորումը: Ուստի, բոլոր այն հանգամանքները, որոնք նպաստում են ընտրությունների ժամանակ ժողովրդի կամքի լիարժեք դրսևորմանը, կարող են համարվել ընտրությունների ազատ գնահատման չափանիշներ:

Ընտրական համակարգի կարևոր առաքելություններից է ընտրական իրավունքի ցանկացած սուբյեկտի կողմից իր իրավունքների բարեխիղճ կատարման ապահովումը, ինչը «ազատ ընտրությունների» կազմակերպման հաջորդ կարևորագույն չափանիշն է:

«Ազատ ընտրությունների» կազմակերպման կարևոր չափանիշներից մեկն էլ ընտրական գործընթացների հետ կապված որոշակի արարքների՝ օրենքով արգելված լինելն է:

Ընտրական իրավունքի սուբյեկտների վարքագիծը կանխորոշող, արգելքներ սահմանող և դրանց խախտման պարագայում պատասխանատվություն նախատեսող նորմերը հանդիսանում են «Ազատ ընտրությունների» իրականացման հիմնական երաշխիք:

Նմանատիպ նորմեր պարունակում են ինչպես «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ և ՀՀ քրեական օրենսգրքերը:

Այսպես, օրինակ՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.«Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:»:

Հատկանշական է, որ նման արգելքները բազմաթիվ են: Սակայն, պետք է նշել, որ որքան էլ բազմաթիվ են արգելքներ նախատեսող նորմերը, միևնույնն է, քննարկվող ոլորտում առկա են որոշ օրենսդրական բացեր, որոնք հանգեցնում են ընտրություններում քաղաքացիների ազատ կամքի դրսևորման խաթարմանը: Օրենսդրական կարգավորման բացակայությունը, բնականաբար, հնարավորություն չի ընձեռում իրավակիրառներին պատասխանատվության ենթարկել իրենց ընտրական իրավունքը չարաշահող սուբյեկտներին՝ վկայակոչելով դրա վերաբերյալ համապատասխան իրավական նորմը:

Այսպես, որոշ քաղաքացիներ, որոնք հասարակության մեջ ունեն զգալի «քաղաքական կշիռ», ազդեցություն և հեղինակություն, մասնակցում են ընտրական գործընթացին՝ ընդգրկվելով այս կամ այն կուսակցության (կուսակցությունների միավորման) պատգամավորության թեկնածուների ցուցակում (մեծամասամբ սկզբի համարներում) ոչ թե պատգամավորական մանդատ ստանալու նպատակով, այլ բացառապես այն բանի համար, որպեսզի իր հեղինակությունն օգտագործելով՝ քվեարկողների ձայներ բերի տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքների) համար: Քվեարկությունից հետո այդպիսի թեկնածուները հրաժարվում են իրենց

պատգամավորական մանդատներից և նրանց փոխարեն, օրենսդրությամբ նախատեսված կարգով, պատգամավորական մանդատ են ստանում ընտրացուցակի հաջորդ համարներում գրանցված թեկնածուները:

Փաստորեն, ստացվում է, որ նշված ընտրական տեխնոլոգիայի կիրառման արդյունքում ընտրողները քվեարկում են ցուցակում ընդգրկված կոնկրետ թեկնածուների օգտին, սակայն օրենսդիր մարմնում նրանց տեղերը զբաղեցնում են այլ անձինք:

Մինչդեռ, ընտրական իրավունքի մման դիտավորյալ չարաշահման համար ընտրական օենսդրությունը որևէ պատասխանատվություն չի նախատեսում:

## **§1.2. Ընտրությունների նախապատրաստական փուլի առանձնահատկությունները**

ՀՀ քրեական օրենսգիրքը ընտրական մի շարք խախտումների վերաբերյալ բովանդակում է պատասխանատվություն նախատեսող նորմեր: Ընդ որում՝ պատասխանատվություն է նախատեսվում ինչպես ընտրությունների նախապատրաստական, այնպես էլ անցկացման և արդյունքների ամփոփման փուլերում ընտրական իրավունքի սուբյեկտների կողմից ընտրական օրենսդրության պահանջների խախտման համար:

Այսպես, ընտրությունների նախապատրաստական փուլի հանցագործություններից է համարվում ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 152): Ընտրողներին ընտրական ցուցակներում ընդգրկելը քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման անհրաժեշտ պայմաններից է: Այդ հիմնահարցը մանրամասնված է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում:

**ՀՀ ընտրողների ռեգիստրը կազմվում է ըստ մարզերի ու համայնքների և մշտապես վարվող փաստաթուղթ է:** Դրանում ընդգրկվում են ՀՀ բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, ՀՀ որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները: Հանրապետությունում հաշվառվում չունեցող քաղաքացիները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մար-



մինների ընտրություններում քվեարկելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք ՀՀ նշված ռեզիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում ընտրողների ցուցակում ընդգրկված լինելու նրանց իրավունքը:

ՀՀ ընտրողների ռեզիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեզիստրը վարող լիազոր մարմինը, որը պատասխանատու է այդ փաստաթղթերը պատշաճ վարելու և կազմելու համար:

Ընտրողների ցուցակները «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածների և պահելու վայրերի և զինվորական մասերի ղեկավարները:

Լիազոր մարմինը տարին 2 անգամ՝ հունիսին և նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեզիստրը՝ ըստ համայնքների, իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ և 5 օր առաջ՝ նաև ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեզիստրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական և անբաժանելի մասն է:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեզիստրում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Դիմումը պետք է պարունակի անհրաժեշտ հիմնավորումները, և դրան կից պետք է ներկայացված լինեն փաստական հանգամանքների ապացույցները: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, «Բնակչության պետական ռեզիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեզիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

ՀՀ ընտրողների ռեզիստրի հիման վրա ըստ ընտրական տե-

ղամասերի կազմվում է համայնքի ընտրողների ցուցակը, որում ընդգրկվում են համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք («ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք 10-րդ հոդվ.): Ընդ որում, յուրաքանչյուր ընտրության ժամանակ ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ:

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ դիմում են լիազոր մարմին՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Նշված մարմինը դիմումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում դիմողին տալիս է տեղեկանք՝ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից նրա տվյալները հանելու և գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու մասին: Դիմումի և տեղեկանքի ձևերը սահմանում է ԿԸՀ-ը:

Ընտրական իրավունք ունեցող, բայց Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիներն Ազգային ժողովի ընտրություններում քվեարկությանը մասնակցելու համար, քվեարկությունից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմին դիմում են ներկայացնում՝ ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին՝ նշելով գտնվելու վայրի հասցեն: Նշված մարմինը եռօրյա ժամկետում ընտրողին ընդգրկում է նրա գտնվելու վայրին մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակի մեջ և այդ մասին տալիս է համապատասխան տեղեկանք:

Նույն կարգով, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները, սահմանված կարգով ժամանակավոր արձակվելու դեպքում, հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և մշտական բնակության վայրում կարող են հայտ ներկայացնելու դեպքում ընդգրկվել ընտրողների ցուցակում:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղված ոստիկանության ծառայողները լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հանվում են իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և գործուղման վայրում կազմվում է տեղամասում քվեարկող ոստիկանության ծա-

ռայոդների լրացուցիչ ցուցակ:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ժամկետային զինծառայողները, զորամասի տեղակայման տարածքում հաշվառված պայմանագրային զինծառայողները և ընտրելու իրավունք ունեցող նրանց ընտանիքների անդամները ընդգրկվում են համապատասխան զորամասի ընտրողների ցուցակում:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր, 10 օր, 6 օր առաջ, համապատասխանաբար պաշտպանության նախարարությունը, ազգային անվտանգության ծառայությունը և ոստիկանությունը լիազոր մարմին ու Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում համապատասխան զորամասերում և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թիվը:

Ձորամասի տարածքից դուրս հաշվառված պայմանագրային զինծառայողներն ընտրողների ցուցակում ընդգրկվում են ընդհանուր հիմունքներով:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, նույն կարգով սահմանում է քրեակատարողական հիմնարկի պետի կողմից քրեակատարողական հիմնարկում հաշվառված ընտրողների թվի ներկայացման ժամկետը և կարգը: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկի պետը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր, 5 օր, 3 օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում քրեակատարողական հիմնարկում հաշվառված ընտրողների թիվը՝ ԿԸՀ-ի սահմանած կարգով (10-րդ հոդվ. 11-րդ մաս):

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց բուժհաստատության ղեկավարը քվեարկությունից 7 օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում այդ անձանց և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող՝ քվեարկությանը մասնակցել ցանկացող անձանց ցուցակը և նրանց հաշվառման վայրի հասցեն: Հիմք ընդունելով ներկայացված ցուցակը՝ լիազոր մարմինը նշված անձանց հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և կազմում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ:

Ձինվորական մասում, քրեակատարողական հիմնարկում և

ծերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ցուցակները կազմում, էջակալում, ստորագրում և կնքում են համապատասխանաբար զորամասի հրամանատարը, քրեակատարողական հիմնարկի պետը և ծերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարը:

Ընտրական օրենսդրությունը սպառնիչ կերպով նախատեսում է ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջները, որոնցից ցանկացած շեղում կարող է դիտարկվել որպես խախտում, ինչն էլ կարող է հանգեցնել պատասխանատվության:

Այսպես, ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ներառվում են նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների, ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակները:

Ինչ վերաբերում է տեղամասային կենտրոնում փակցվող ընտրողների ցուցակներին, ապա դրանցում նշվում են մարզի (Երևանի) անվանումը, ընտրական տարածքի համարը, ընտրական տեղամասի հերթական համարը, համայնքի (վարչական շրջանի) անվանումը, իսկ առանձին սյունակներում՝ ընտրողի՝

1) հերթական համարը տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում.

2) ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ համապատասխան հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում).

3) ծննդյան ամսաթիվը.

4) հաշվառման վայրի հասցեն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն:

Վերը նշված ընտրողների ցուցակներում նախատեսվում է ևս 4 սյունակ՝

1) ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալների համար.

2) ընտրողի ստորագրության համար.

3) ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար.

4) լրացուցիչ նշումների համար: Ընտրողների ցուցակում լրացուցիչ նշումներ կատարվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած դեպքերում և կարգով:

Որպես կանոն, ընտրողների ցուցակները կազմվում են մատյանի ձևով և էջակալվում մինչև 1000 ընտրողի քանակով, բայց այն հաշվարկով, որ 1000-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասին հատկացվող ընտրողների ցուցակների յուրաքանչյուր մատյան ընդգրկի մոտավորապես հավասար թվով ընտրողների տվյալներ: Ընտրողների ցուցակի յուրաքանչյուր էջում կարող են նշվել առավելագույնը 20 ընտրողի վերաբերյալ տվյալներ:

Ընտրողների ցուցակը «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում լիազոր մարմնի կողմից կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակը կազմում, էջակալում, ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում է լիազոր մարմինը:

Ընտրողների ցուցակները լիազոր մարմնի կողմից կազմվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հատուկ ծրագրային ապահովմամբ: Էլեկտրոնային ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևաչափով և կարգով նախապես ներքեռնվում են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ (այսուհետ՝ տեխնիկական սարքավորում) և պարունակում են՝

1) ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ համապատասխան հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում)։

2) այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված ընտրողը։

3) ընտրողի հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում։

4) ընտրողի ծննդյան ամսաթիվը։

5) ընտրողի հաշվառման վայրի հասցեն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն։

6) ընտրողի նույնականացման քարտի, կենսաչափական անձ-

նագրի և ոչ կենսաչափական անձնագրի համարը (եթե ընտրողն ունի անձը հաստատող համապատասխան փաստաթղթեր): Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթղթի համարը:

7) տվյալ տարածքի ընտրողների համար՝ նաև թվային շտեմարանում առկա լուսանկարը (եթե ընտրողը ստացել է նույնականացման քարտ կամ կենսաչափական անձնագիր):

Ինչ վերաբերում է զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ցուցակներին, ապա դրանք կազմում, էջակալում, ցուցակների յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում են համապատասխանաբար զորամասի հրամանատարը, քրեակատարողական հիմնարկի պետը և ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարը: Վերոհիշյալ ընտրողների ցուցակները, ինչպես նաև ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակներն էլեկտրոնային եղանակով չեն կազմվում և չեն ներբեռնվում տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվող տեխնիկական սարքավորման մեջ:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի զգալի ձեռքբերումներից կարելի է համարել նաև ընտրողների ցուցակների մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված մի շարք դեպքերի, ազատ է ծանոթացման համար:

Մասնավորապես՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները, բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող՝ ընտրողների ստորագրված ցուցակների, ենթակա են հրապարակման ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: Այսպես օրինակ, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ լիազոր մարմինն ընտրողների ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր և 4 օր առաջ տեղադրում է համացանցում՝ [www.police.am](http://www.police.am) հասցեով:

Ընդ որում, համացանցում ըստ ընտրական տեղամասերի տեղադրված ընտրողների ցուցակները պետք է ունենան ներբեռնվելու հնարավորություն: Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող քվեարկության օրվանից 40 օր առաջ ընտրողների ցուցակը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց լրացուցիչ ցուցակի օրինակը քվեարկության օրվանից 2 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև քվեարկությանը հաջորդող յոթերորդ օրը: Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները քվեարկության օրվանից 10 օր առաջ փակցվում են զորամասում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում: Համայնքում մեկից ավելի ընտրական տեղամաս կազմավորվելու դեպքում լիազորմարմինը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ ընտրողներին ուղարկում է ծանուցագրեր՝ քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը կարգավորում է նաև ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու վերաբերյալ դիմումներ տալու, դիմումները քննարկելու և ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու կարգը: Այսպես, նշված օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Վերջինս դիմումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին (1-ին մաս):

Բացի այդ, քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը, յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն ընտրողների ցուցակում

ընդգրկելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Ընդ որում, ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումների վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը:

Հարցը դրական լուծվելու դեպքում անձը ընդգրկվում է քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում միայն այն դեպքում, եթե վերջինս (անձը) հաշվառված է համապատասխան ընտրական տեղամասում ընդգրկված հասցեում, սակայն դուրս է մնացել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից: Լրացուցիչ ցուցակում ընդգրկվում են նաև այն անձինք, ովքեր Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացրել են դիմում համապատասխան ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին, դիմումը չի մերժվել, սակայն նրան չեն էլ ընդգրկել համապատասխան ընտրական ցուցակում:

Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով, այսինքն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Վերադաս մարմինը կամ դատարանն ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ ակտը կայացնում է բողոքը (դիմումը) ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, իսկ քվեարկության և դրան նախորդող 3 օրվա ընթացքում՝ այնպիսի ժամկետում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը:

Վերադաս մարմինը քվեարկության և դրան նախորդող 3 օրվա ընթացքում բողոքը (դիմումը) բավարարելիս դիմողին տրամադրում է տեղեկանք քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին: Այդ գործողությունը (լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ) կատարում է բացառապես լիազոր մարմինը: Նշված ակտի հիման վրա ընտրողի տվյալները ներառվում են քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:



Դատարանների որոշմամբ՝ ընտրողների ցուցակներում ընտրողներին ընդգրկելու դեպքում դատական ակտի պատճենն ուղարկում են լիազոր մարմին՝ նաև ընտրողների ռեգիստրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքն արգելում է ընտրական հանձնաժողովներին սեփական նախաձեռնությամբ որևէ փոփոխություն ճշտում կամ լրացում կատարել ընտրողների ցուցակներում, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում (14-րդ հոդվ. 4-րդ մաս):

Քվեարկության օրը ընտրողների լրացուցիչ ցուցակները կազմում են տեղամասային ընտրական հանձնաժողովները, եթե քվեարկության օրն ընտրական տեղամաս են ներկայանում այն ընտրողները, որոնք ընդգրկված չեն ընտրողների որևէ ցուցակում և ներկայացնում են քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին վերադաս մարմնի տեղեկանքը կամ դատարանի կողմից ընդունված ակտը: Այդ փաստաթղթերը կցվում են լրացուցիչ ցուցակին: Այդ ցուցակի յուրաքանչյուր էջը ստորագրում և կնքում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, որի (լրացուցիչ ցուցակի) վերջում քվեարկության ավարտից հետո նշում է քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը:

Հարկ է նել, որ տարբեր երկրներում ընտրողների ցուցակները կազմվում են բազմակերպ՝ յուրաքանչյուր ընտրությունից առաջ (Կանադա), յուրաքանչյուր տարի (Մեծ Բրիտանիա), ընտրողների դիմումի հիման վրա (ԱՄՆ, Ֆրանսիա): Որպես կանոն, ընտրողների ցուցակները մշտական են և դրանցում փոփոխություններ են կատարում կամ յուրաքանչյուր տարի, կամ ընտրություններից առաջ:

Ներկայումս՝ մեր երկրում ընտրողների ցուցակները կազմվելու և վարելու կապակցությամբ օբյեկտիվորեն ծագում են մի շարք խնդիրներ:

Ներկայումս՝ ընտրողների ցուցակներում ընդգրկվում է ՀՀ ցանկացած քաղաքացի, ում տասնութ տարին լրացել է քվեարկության օրը: Մինչդեռ, արտագաղթի մեծ ծավալների հետևանքով ՀՀ ընտրողների ցուցակում ընդգրկված քաղաքացիների գրեթե կեսը ֆիզիկապես գտնվում է մեր երկրի սահմաններից դուրս: Այս հան-

գամանքը պարարտ հող է ստեղծում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու անձանց կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելու, դրանք կեղծ տվյալներով հրապարակելու համար: Այդ հանգամանքը նաև մեծ դժվարություններ է ստեղծում պրակտիկորեն այդ մեծ քանակի քաղաքացիների ՅՅ-ում գտնվելը ստուգելու տեսանկյունից: Այն ոչ միայն հղի է ընտրական հանցագործությունների կատարման ռիսկով, այլև անարդյունավետ է դարձնում ողջ ընտրական գործընթացը: Այս կապակցությամբ կարծում ենք, անհրաժեշտ է վերանայել ՅՅ-ում ընտրողների ցուցակի ձևավորման կարգը:

Մասնավորապես՝ անհրաժեշտ է ընտրողների ցուցակները կազմել ընտրողների դիմումի հիման վրա, ինչի արդյունքում ՅՅ ընտրողների ցուցակում կհայտնվեն բացառապես ՅՅ այն քաղաքացիներն, ովքեր փաստացի քվեարկությանը մասնակցելու հայտ կներկայացնեն: Այս հանգամանքն էապես կթեթևացնի նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքը, որոնց ծանրաբեռնվածությունը քվեարկության օրը դուրս է ողջամիտ չափանիշների շրջանակներից:

«ՅՅ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ձեռքբերումներից կարելի է համարել նաև ընտրողների ցուցակների հրապարակումը, ինչն էապես նպաստել է ընտրական իրավունքի խախտման հետ կապված հանցագործությունների նվազմանը:

Այսպես, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի

անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքները սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրողների ցուցակների սկանավորումն ու հրապարակումը հնարավորություն է ընձեռում քվեարկության արդյունքները պահել հանրության հսկողության ներքո, ինչն ընտրական հանցագործությունների կանխմանն ուղղված լրացուցիչ միջոց է:

Ընտրական գործընթացի նախապատրաստական փուլում քրեորեն պատժելի արարք է համարվում կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 154<sup>1</sup>):

Ընտրական քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, դրոշմանիշերի, կտրոնների պատրաստման և հանձնման կարգը սահմանվում է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով:

Այսպես, համապատասխան ընտրական հանձնաժողովը (Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ԿԸՀ-ն, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը) քվեաթերթիկի նմուշը սահմանում է այնպես, որ հնարավոր լինի ապահովել քվեարկության գաղտնիությունը և ներառի ծանուցում դրա (քվեաթերթիկի) լրացման կարգի մասին:

Քվեարկության ծրարը պատրաստվում է անթափանց թղթից: Ծրարի ձևը և չափերը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այն հաշվով, որ հնարավորություն ընձեռվի ծրարում գտնվող քվեաթերթիկների վրա փակցնելու ինքնաստնձվող դրոշմանիշ: Այն պաշտպանիչ շերտով դրոշմանիշ է, որի վրա նշված են ընտրության անվանման հապավումը (օրինակ, Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ «ԱԺ», տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ «ՏԻՍ»), քվեարկության ամսաթիվը և ընտրա-

կան տեղամասի համարը: Ինքնասունծվող դրոշմանիշը ենթակա է հատուկ հաշվառման:

Քվեաթերթիկները տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի՝ ընտրողների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 10 օր առաջ տրամադրված տեղեկանքի հիման վրա:

Ինքնասունծվող դրոշմանիշները տպագրվում են յուրաքանչյուր տեղամասի համար տեղամասում ընտրողների թիվը կլորացված դեպի վեր՝ մինչև մոտակա հարյուրյակը (օրինակ, եթե տեղամասում ընտրողների թիվը 1267 է, ապա տպագրված դրոշմանիշների թիվը կլինի 1300 հատ):

Քվեաթերթիկները և քվեարկության ծրարները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում են քվեարկության նախորդ օրը տեղամասում ընտրողների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 10 քվեաթերթիկ ավելին: Միաժամանակ, տարբեր քվեարկություններ անցկացնելու դեպքում քվեաթերթիկները և ծրարները պետք է պատրաստվեն այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության քվեաթերթիկները ԿԸՀ-ի սահմանած կարգով հանվում են քվեարկությունից և մարվում են, իսկ այդ կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանվում է ԿԸՀ-ի սահմանած կարգով:

Նույն կարգով՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության ընտրական ցուցակը հանվում է քվեաթերթիկներից, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում, այդ թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

### § 1.3. Քվեարկության կազմակերպումն ու անցկացումը

Ընտրական գործընթացի երկրորդ՝ վճռական փուլն է հանդիսանում քվեարկության կազմակերպումը և անցկացումը: «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը հանգամանորեն կարգավորում է քվեարկության կազմակերպման, ընտրողների գրանցման, քվեաթերթիկը լրացնելու և քվեարկության կարգը, դրա իրականացման երաշխիքները, ինչպես նաև քվեարկության հետ առնչվող մյուս հարցերը: Քվեարկության գործընթացի մանրամասն ամրագրումը «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում էական նշանակություն ունի, քանի որ այն ընտրարշավի ամենագլխավոր, ավարտական փուլերից է, որի ընթացքում գործնականում իրացվում է ժողովրդի կամքի ազատ արտահայտությունը:

**Քվեարկությունն անցկացվում է միայն ՀՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում, ժամը 8<sup>00</sup>-ից մինչև 20<sup>00</sup>-ն:** Եթե համապետական ընտրությունների քվեարկության օրը ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտրելու իրավունք ունեցող ընտանիքի անդամները գտնվում են ՀՀ տարածքից դուրս, ապա կարող են մասնակցել ընտրություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով: Այս եղանակով քվեարկությունը կարող է իրականացվել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի ավարտից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ: Նշված դրույթը տարածվում է նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից), բայց արտերկրում տեղակայված ներկայացուցչությունների ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների վրա:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բուժհաստատությամբ:

յունում: Այդ անձանց քվեարկությունը կազմակերպում է քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի առնվազն մեկ անդամ՝ շրջիկ արկղի միջոցով: Այն անցկացվում է սահմանված կարգով քվեարկության գաղտնիության պահպանմամբ, և քվեարկության կազմակերպմանը կարող են ներկա լինել նաև վստահված անձինք, դիտորդներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ձերբակալված ընտրողները քվեարկությանը մասնակցում են այն ձևով, ինչպես ստացիոնար բուժհաստատություններում բուժվողները և քվեարկությունն ավարտվում է մինչև ժամը 18<sup>00</sup>-ն:

Քրեակատարողական հիմնարկներում քվեարկությունը կազմակերպում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարը և, ելնելով ընտրելու իրավունք ունեցող անձանց թվից՝ քվեարկությունն սկսվում է ժամը 9<sup>00</sup>-ից հետո՝ ԿԸՀ-ի սահմանած հերթականությամբ, և քվեարկությունը պետք է ավարտվի ժամը 20<sup>00</sup>-ին:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքին համապատասխան՝ քվեարկությունը կատարվում է այդ նպատակով կահավորված սենյակում՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասում մեկ սենյակ հաշվարկով: Քվեարկության գործընթացը պետք է հնարավորություն ընձեռի քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքի իրականացմանը և տեսադաշտում պահել քվեարկության խցիկները, տեխնիկական սարքավորումը, քվեատուփը, ինչպես նաև քվեարկության խցիկներից մինչև քվեատուփն ընկած հատվածը: Յուրաքանչյուր 750 ընտրողի հաշվարկով պետք է հատկացվի առնվազն մեկ խցիկ, որը պետք է կահավորված լինի ամեն անհրաժեշտով, որպեսզի ընտրողը կարողանա տեղամասային կենտրոնում գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը:

Համապատասխան ընտրական հանձնաժողովը (Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ԿԸՀ-ն, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը) քվեաթերթիկի նմուշը սահմանում է այնպես, որ հնարավոր լինի ապահովել քվեարկության գաղտնիությունը և ներառի ծանուցում դրա (քվեաթերթիկի) լրացման

կարգի մասին:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը քվեարկության կազմակերպման համատեքստում մանրամասն կարգավորում է քվեարկություն անցկացնելուց առաջ ընտրական հանձնաժողովի կնիքի, հանձնաժողովի անդամի անհատական կնիքի, քվեատուփի, տեխնիկական սարքավորումների պատրաստման և հանձնաժողովին հանձնելու կարգն ու ժամկետները:

Այսպես, նշված օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների (տարածքային և տեղամասային) կնիքների և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որի պատվերով էլ դրանք պատրաստվում են: Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը պետք է ունենա քառանիշ համարանիշ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրական հանձնաժողովների կնիքները քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ հանձնում է տարածքային ընտրական հանձնաժողովին՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով: Տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության նախորդ օրը կնիքը հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ յուրաքանչյուրին՝ մեկ կնիք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին քվեարկության նախորդ օրը վիճակահանությամբ տրամադրվում են իրարից տարբերվող անհատական կնիքներ, որոնք քվեարկության ավարտից հետո փաթեթավորվում և տեղադրվում են փաստաթղթերի պարկում:

Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հատկացվում է առնվազն մեկ քվեատուփ: Տեղամասային ընտրական հանձնաժողովներն անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործել մեկից ավելի քվեատուփ, որի (քվեատուփի) օգտագործման կարգը սահմանում է ԿՀԸ-ն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվում են նաև ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորում, որը պետք է պարունակի ընտրողների էլեկտրոնային ցուցակ: Այն պետք է ունենա նաև քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու և Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի սահմանած ծրագրային այլ հազեցվածություն:

Տեխնիկական սարքավորման ծրագրային ապահովումն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկությունից առնվազն 30 օր առաջ պետք է հասանելի լինի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներին՝ տեխնիկական վերստուգում իրականացնելու համար: Ընտրողների էլեկտրոնային ցուցակի նախապատրաստումը տեխնիկական սարքավորման մեջ տեղադրելու համար ենթակա է վերահսկման ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Այդ գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորումների սպասարկումն ապահովելու համար ԿԸԴ-ը պայմանագրային հիմունքներով ընդգրկում է յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հաշվարկով մինչև 4 մասնագետ:

Քվեարկության կազմակերպման պարտականությունը կրում են տեղամասային ընտրական հանձնաժողովները: Հանձնաժողովի նախագահը պարտավոր է քվեարկության ընթացքում կարգ ու կանոն հաստատել տեղամասային կենտրոնում:

Քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնաստսնձվող դրոշմանիշերը, կնիքը պահվում են քվեարկության սենյակում գտնվող չիրկիզվող պահարանում: Քվեատուփը, տեխնիկական սարքավորումները, հանձնաժողովի անդամների աշխատասեղանները տեղադրվում են քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց համար տեսանելի տեղում:

Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ փակցվում են կուսակցությունների համապետական և տվյալ տարածքի տարածքային ընտրական ցուցակները:

Թվարկված կազմակերպական աշխատանքներից հետո, քվեարկության օրը՝ նախքան քվեարկությունը սկսելը, տեղամասային ընտրական հանձնաժողովը կատարում է որոշ կազմակերպական բնույթի գործողություններ ևս: Առավոտյան՝ ժամը 7<sup>00</sup>-ին, հանձնաժողովը տեղամասային կենտրոնում հրավիրում է նիստ, որտեղ վիճակահանությանը որոշում է՝



ա) ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամներին՝ մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամի.

բ) քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամներին՝ մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամի.

գ) ինքնասունձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու առնվազն մեկ անդամի.

դ) շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող առնվազն մեկ անդամի (եթե տվյալ տեղամասային հանձնաժողովն անհրաժեշտություն ունի կազմակերպելու նման քվեարկություն).

ե) տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը: Նախագահը և քարտուղարը վիճակահանությամբ չեն մասնակցում:

Նշված գործողությունների կատարումից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ, տեխնիկական սարքավորումների մասնագետը ստուգում է այդ սարքավորումների աշխատանքը, մուտքագրում ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք: Տեղեկանքը ստանձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Քվեարկության կազմակերպման աշխատանքներն ավարտվում են նրանով, որ տեղամասային կենտրոնում կազմակերպված նիստի վերջում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ, բացում է չիրկիզվող պահարանը, հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, ըստ անցկացված վիճակահանության տրամադրում նրանց, հանում է քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, հանձնաժողովի կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը, ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է այն (քվեատուփը): Այնուհետև, հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկները և քվեարկության ծրարները հարյուրական փաթեթով հանձնում է քվեարկողներին

քվեաթերթիկներ և ծրարներ հատկացնող անդամներին: Հարյուր ինքնասունձվող դրոշմանիշ հատկացվում է քվեատուփի համար պատասխանատու անդամին:

Կատարված գործողությունների վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելով հանձնաժողովի գրանցամատյանում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 8<sup>00</sup>-ին, հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

Քվեարկության ընթացքի կազմակերպված անցկացման, քվեարկության սենյակում պատշաճ կարգ ու կանոնի ապահովման համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Նա հսկողություն է իրականացնում հանձնաժողովի անդամների կողմից իրենց պարտականությունների հստակ կատարման նկատմամբ, անհրաժեշտության դեպքում անձամբ օգնում է նրանց:

**Արգելվում է տեղամասային կենտրոն մուտք գործել զենքով և զինամթերքով:** Ձինժառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ***ոչ շարային կարգով, առանց զենքի և զինամթերքի:*** Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք կարող են գործել միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 154.4-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից, առանց ծառայողական անհրաժեշտության, զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելու համար:

Հանձնաժողովի նախագահը իրավունք ունի նաև պահանջելու, որպեսզի տեղամասային կենտրոնում պահպանվի քվեարկողների այնպիսի քանակություն, որը չի խաթարի քվեարկության բնականոն ընթացքը: Հակառակ դեպքում, նա (նախագահը) իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան 15 ընտրող:

Դարձյալ քվեարկության անցկացման բնականոն ընթացքի ապահովման շահերից ելնելով՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմա-

նադրական օրենքը սահմանում է, որ քվեարկության սենյակում հանձնաժողովի անդամներից բացի, իրավունք ունի միաժամանակ ներկա գտնվել յուրաքանչյուր զանգվածային լրատվամիջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր, յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից մեկ դիտորդ: Օրենսգրքով սահմանված այս պահանջի խախտման դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը, որը չի կարող պակաս լինել 15-ից (65-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր):

Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելու քվեարկողի կամքի ազատ արտահայտման անհրաժեշտ պայմաններ և քվեարկության գաղտնիությունը:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության գործընթացը սկսվում է նրանով, որ քվեարկության ներկայացած յուրաքանչյուր ընտրող մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը, որպիսիք համարվում են նույնականացման քարտը, անձնագիրը, դրանց փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, իսկ զինվորականների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քաղաքացիություն չունեցող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է համարվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթերից որևէ մեկը:

Մասնագետը ընտրողի ներկայացրած անձնագրի կամ նույնականացման քարտի հիման վրա ստուգում է նրա (ընտրողի) ինքնությունը՝ ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով և ներկայացված փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական

սարքավորման մեջ:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը սահմանում է այն բոլոր իրավիճակները, երբ քվեարկության ներկայացած անձը կարող է քվեարկել մեկից ավելի անգամ, ուրիշի փոխարեն կամ անձը հաստատող կեղծ փաստաթղթով և նախատեսում է տեխնիկական սարքավորման միջոցով դրանց հայտնաբերման բոլոր տարբերակները: Ընդհանուր գաղափարն այն է, որ

ա) եթե անձը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասում, ապա անձը հաստատող փաստաթղթի ստուգման ժամանակ տեխնիկական սարքավորման էկրանին հայտնվում է դեղին նշան, որի դեպքում ընտրողը դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից.

բ) եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը և փորձում է կրկնակի մասնակցել, էկրանին հայտնվում է կարմիր նշան, որի վերաբերյալ մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին, որն էլ քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողների, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ.

գ) եթե անձը հաստատող փաստաթղթի ստուգման արդյունքում էկրանին հայտնվում է կանաչ նշան, ուրեմն ամեն ինչ օրինական է և ընտրողը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում քվեարկողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը (66-րդ հոդ. 5-րդ, 6-րդ մասեր):

Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո նա (ընտրողը) մոտենում է քվեարկողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամին: Վերջինս ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին: Քվեարկության կտրոնն ստանալուց հետո, ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնում քվեարկութ-

յան կտրոնը:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ պատասխանատու անձը ընտրողին է տրամադրում ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար, որից հետո ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը սահմանել է քվեախցիկում ընտրողի կողմից իր կամահայտնությունն իրականացնելու նոր (մինչև օրս որևէ անգամ չկիրառված) եղանակ: **Մասնավորապես՝ Ազգային ժողովի** ընտրությունների ժամանակ քվեարկողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին ընտրում է՝ **այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով (առանց դրա մեջ որևէ նշում կատարելու):** Տարածքային ընտրական ցուցակի թեկնածուներից որևէ մեկին ընտրելու դեպքում քվեարկողն իր ընտրած կուսակցության քվեաթերթիկի երկրորդ էջում միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Քվեաթերթիկը ծրարի մեջ է դրվում առանց ծալելու: **Զօգտագործված քվեաթերթիկները (մյուս կուսակցությունների անվամբ) զցվում են քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ (67-րդ հոդվ. 3-րդ մաս):**

Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ քվեարկողը միատեսակ նշում է կատարում այն կուսակցության անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում, և քվեաթերթիկը տեղավորում է քվեարկության ծրարում:

Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրության ժամանակ քվեարկողը միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց: Միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացնելու դեպքում ընտրողը յուրաքանչյուր քվեաթերթիկ տեղավորում է համապատասխան ծրարում:

Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեատուփի մոտ ինքնաստսնձվող դրոշմամիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեար-

կության կտրոնը: Վերջինս (հանձնաժողովի անդամը) ստուգում է կտրոնը, առանց քվեարկության ծրարը ընտրողից վերցնելու ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնաստանձվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամն իր հերթափոխի ավարտին, ինչպես նաև քվեարկության ավարտին հանձնաժողովի նախագահին է հանձնում չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշները և ընտրողներից ստացված քվեարկության կտրոնները: Կտրոնները և չօգտագործված դրոշմանիշերը հաշվվում են, և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Քվեարկության ընթացքում եթե ընտրողը սխալ է լրացնում կամ վնասում է քվեաթերթիկը, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին և ստանալ նոր քվեաթերթիկ: Սխալ լրացված կամ վնասված քվեաթերթիկը անմիջապես մարվում է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարևոր պարտականություններից է օգնել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողներին կատարելու իրենց ընտրությունը: Հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ քվեարկության խցիկ է հրավիրվում այլ անձ, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, ՋԼՄ-ների ներկայացուցիչ: Արգելվում է քվեաթերթիկը լրացնելիս քվեախցիկում այլ անձի ներկայությունը:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից: Քվեարկության ընթացքում թեկնածուին, կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին արգելվում է գտնվել տեղամասային կենտրոնի կամ դրան հարող՝ մինչև 50 մետր շառավղով, տարածքում: Բացի այդ, եթե վստահված անձը, դիտորդը կամ հանձնաժողովի անդամը գտնում է, որ քվեարկության ժամանակ տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա կարող են պահանջել, որ իրենց նկատած խախտման մասին արձանագրվի տեղական ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Հարկ է նկատել, որ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադ-

րական օրենքը գործուն կառուցկարգեր է սահմանել քվեարկության ժամանակ կատարվող հանցագործությունների կանխարգելման առումով, և գործնականում ուրիշի փոխարեն քվեարկելը գրեթե անհնար է: Այդուհանդերձ, ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելու, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելու, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելու, քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելու, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելու համար:

Արտասահմանյան երկրներում քվեարկության ժամանակ սովորական քվեաթերթիկների փոխարեն հաճախ օգտագործվում են հատուկ մեքենաներ, որոնք երաշխավորում են ընտրությունները հնարավոր խախտումներից: Դրանց միջոցով հեշտացվում է նաև քվեարկության նկատմամբ վերադիտումը և քվեարկության արդյունքների արագ որոշումը: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մեքենաները մարդու մտքի արդյունք են և ղեկավարվում են նրա կողմից:

Տարբեր է նաև քվեարկության բուն գործընթացը՝ ընտրողների գրանցման կապակցությամբ ներկայացվող փաստաթղթերի տեսակները, ինչպես նաև ընտրություններին իրենց բնակության վայրում չգտնվելու դեպքում քվեարկության կազմակերպումը (այսպես կոչված, փոստով քվեարկությունը և լիազորագրով քվեարկությունը):

Քվեարկությանը կամավոր մասնակցելուց զատ, կիրառվում է նաև պարտադիր քվեի ինստիտուտը: Եթե առաջինը ենթադրում է, որ ընտրողն ինքն է որոշում՝ մասնակցել ընտրություններին, թե՛ ոչ, ապա առանձին երկրներում պարտադիր քվե՝ ընտրողի պարտականությունն է մասնակցել քվեարկությանը: Չմասնակցելու դեպքում կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվու-

յան միջոցներ:

Ընտրական գործընթացների քննարկվող փուլում ընտրական հանձնաժողովների, դիտորդների, ԶԼՄ ներկայացուցիչների, վստահված անձանց անխոչընդոտ աշխատանքի ապահովման երաշխիք է ԳՅ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար:

Նույն օրենսգրքի 154<sup>5</sup>-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալու համար:

Նշված հանցակազմերն առավել համակողմանի ընկալելու համար հարկ է անդրադառնալ դիտորդների, վստահված անձանց և զանգվածային լրատվության միջոցների կարգավիճակի պարզաբանմանը:

Այսպես, «ԳՅ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա գտնվելու վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ: Ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցե-



լուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարել:

Ընտրությունների անցկացման հրապարակայնության տեսանկյունից առավել կարևորվում է դիտորդական առաքելության իրավունքի իրականացումը: Մասնավորապես՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Ընդ որում, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում: Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող: Վերը նշված կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունքը պատկանում է հանրապետության նախագահին, Ազգային ժողովի նախագահին, վարչապետին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Բացի վերը նշված սուբյեկտներից Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում նույնպես կարող են ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել ընտրական գործընթացի դիտարկում: Հրավերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում կարող են ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել ընտրական

գործընթացի դիտարկում: Տվյալ դեպքում արդեն հրավերն ուղարկում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:

Որպեսզի հասկանանք, թե որ գործողություններն են համարվում զանգվազային լրատվամիջոցների, դիտորդների և վստահված անձանց առաքելությունը խոչընդոտելուն ուղղված գործողությունները, անհրաժեշտ է պարզել նշված սուբյեկտների «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանվող իրավունքների շրջանակը, քանզի միայն նրանց իրավունքների իրացմանը խոչընդոտելը կարող է դիտարկվել որպես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է՝ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն իրավունք ունեն՝

1) ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:

2) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնաստսնծվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:

3) ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

4) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին: Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից

(բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների): Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է.

5) ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար.

6) հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ.

7) օգտվելու սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

2. Դիտորդը, այցելուն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները:

3. Դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ:

4. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար: Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև

քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար պարտադիր կարգով տեսանելի ձևով կրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանված նմուշի վկայականը:

5. Դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, այցելուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին դուրս հանելու տեղամասային կենտրոնից կամ որևէ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, 8-րդ մասով և 65-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի:

Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին տեղամասային կենտրոնից կամ ընտրական հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (հոդված 33) սահմանում է նաև վստահված անձի կարգավիճակը իր սպառիչ իրավունքներով ու պարտականություններով:

Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ընտրական ցուցակները գրանցելուց, իսկ թեկնածուները գրանցվելուց հետո ընտրական հանձնաժողովներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք: Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող անձինք:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի (բացառությամբ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամների) թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովը թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ընտրական տեղամասերի

թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ: Համապատասխան հանձնաժողովը վկայականում նշում է ընտրություններին մասնակցող կուսակցության անվանումը, համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը: Թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը կամ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը վկայականները լրացնում և տրամադրում է վստահված անձանց:

Վստահված անձ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, թեկնածուները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածը սպառիչ կերպով ամրագրում է վստահված անձի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները:

Մասնավորապես վստահված անձն իրավունք ունի՝

1) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում:

2) ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

3) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ուն կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղե-

կանքին, ինչպես նաև քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին: Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից: Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

4) Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը:

5) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:

6) չմիջամտելով հանձնաժողովի անդամի և տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (այսուհետ՝ մասնագետ) աշխատանքներին՝ ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների նույնականացումն իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող անդամների և մասնագետի, քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին:

7) ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ:

8) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2. Վստահված անձն իր իրավունքներն իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Վստահված անձինք իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, միջամտելու քվեարկության ընթացքին:

3. Ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել համայնքի ղեկավարի և ավագանու անդամի յուրաքանչյուր թեկնածուի մեկ վստահված անձ և ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկ վստահված անձ: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մինչև երկու վստահված անձ:

Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները չեն կարող ունենալ վստահված անձ:

Վստահված անձինք պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար:

4. Վստահված անձի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) վստահված անձին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրա կողմից սույն օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքերի, որոնք էապես խաթարում են ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը: Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ծայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ: Հանձնաժողովի նախագահի կողմից վստահված անձին տեղամասային կենտրոնից կամ հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրվելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

## § 1.4. Քվեարկության արդյունքների ամփոփումն ու հրապարակման կարգը

Ընտրությունների ավարտական (3-րդ) փուլն է հանդիսանում քվեարկության արդյունքների ամփոփումը և ընտրության արդյունքների որոշումը: Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին հայտարարում է քվեարկության ավարտի մասին, փակում է քվեարկության սենյակի դուռը և հնարավորություն է տալիս սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու, որից հետո փակում է քվեատուփը:

Քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսում է *քվեարկության արդյունքների ամփոփման միտող*, որին, բացի ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից (վստահված անձինք, դիտորդներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ և այլն), իրավունք ունի ներկա գտնվելու մաս թեկնածուն:

Հանձնաժողովը սկսում է նրանից, որ՝

ա) փաթեթավորում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:

բ) ըստ ընտրողների ցուցակում (այդ թվում լրացուցիչ ցուցակներում) առկա անհատական կնիքներով նշումների՝ հաշվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը: Առանձին հաշվում է նաև (եթե այդպիսիք կան)՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում առկա ստորագրությունների թիվը: Չըջիկ արկղով քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը: Այդ թվերը հրապարակվում են միստում և արձանագրվում հանձնաժողովի գրանցամատյանում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրակն տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողով:

գ) տեղամասային ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշում է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը հա-



մապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքի մեկական օրինակ, ըստ պահանջի, տրամադրվում է ընտրություններին մասնակցած յուրաքանչյուր կուսակցության մեկական վստահված անձի: Վերջիններին, մինչև ընտրողների ցուցակների փաթեթավորումը, տրվում է ընդհանուր 20 րոպե ժամանակ, որպեսզի նրանք ընտրանքային կարգով համադրեն տեղեկանքի տվյալները քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակի հետ: Եթե այդ երկու փաստաթղթերի տվյալները համապատասխանում են, նշանակում է ընտրական տեղամասում կրկնակի քվեարկություն չի եղել կամ քվեատուփում կողմնակի քվեաթերթիկներ չեն հայտնվել: Այդ ամենից հետո, ընտրողների ցուցակները և տեղեկանքը փաթեթավորվում են, փաթեթը կնքվում և տեղադրվում է փաստաթղթերի պարկում:

Տեխնիկական սարքավորման միջոցով եթե անհնար է եղել ընտրական տեղամասում ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքի տպումը, ապա «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածում (2-րդ մաս, 3-րդ կետ) մանրամասն սահմանվում են այն բոլոր դեպքերը, երբ կուսակցությունների վստահված անձինք իրենց ներկայացրած դիմումի հիման վրա կարող են ծանոթանալ իրենց ցանկացած ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներին (բացառությամբ զորամասերում կազմված ընտրողների ցուցակների), որի համար վստահված անձանց տրվում է 2 ժամ ժամանակ:

դ) հանձնաժողովն առանձին-առանձին հաշվում է ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված և համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:

ե) հաշվում է չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:

զ) հաշվում է չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:

է) առանց հաշվելու փաթեթավորում է չօգտագործված քվեաթերթիկները և ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով:

Նշված գործողությունների արդյունքները հրապարակվում են

և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Դրանից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը ձեռնանում է լինում բուն քվեարկության արդյունքների ամփոփմանը: Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, այնտեղից հանում է քվեարկության մեկ ծրար, ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար, և քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված մեծությունը, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է ընտրություններին մասնակցող կուսակցության անվանումը, որի օգտին է քվեաթերթիկը: Այն ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, որը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համապատասխան քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ: Այս գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

**Ընտրություններին մասնակցած յուրաքանչյուր կուսակցության օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին, որից հետո ստացված թվերը բարձրաձայն հայտարարվում և գրանցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:**

Հաջորդ գործողությամբ հանձնաժողովը հաշվարկում է ընտրություններին մասնակցած կուսակցությունների տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը: Այդ նպատակով հանձնաժողովի նախագահը, քվեաթերթիկների երկրորդ էջում կատարված նշումի համաձայն, հայտարարում է, թե յուրաքանչյուր կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված որ թեկնածուի օգտին է քվեարկված: Այն ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փո-

խանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Առարկության դեպքում հարցը լուծվում է քվեարկության միջոցով:

Նույն կարգով, ընտրություններին մասնակցած յուրաքանչյուր կուսակցության քվեաթերթիկները տեսակավորելուց հետո, հաշվարկվում է այդ կուսակցության տարածքային ընտրական ցուցակի յուրաքանչյուր թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը, բարձրաձայն հայտարարվում և գրանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Դրանից հետո ընտրություններին մասնակցած բոլոր կուսակցությունների կողմ քվեարկած քվեաթերթիկները փաթեթավորվում են միասին:

Նույն ընթացակարգով (ինչպես կուսակցությունների ցուցակներով կատարված ընտրության արդյունքների ամփոփումը) է իրականացվում նաև Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրության արդյունքների ամփոփումը (ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվ. 4-րդ մաս):

Բոլոր ընտրովի մարմինների ընտրության արդյունքների ամփոփման ժամանակ քվեաթերթիկները տեսակավորելիս հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել և իրենց մոտ ունենալ նշումներ կատարելու պարագաներ (գրիչ, մատիտ և այլն): Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում և ծրարը քվեաթերթիկով հանդերձ անհապաղ մարվում է, իսկ չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում:

Սահմանված նմուշի քվեաթերթիկ է համարվում ԿԸԴ-ի կողմից հաստատված նմուշի այն քվեաթերթիկը, որը քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հանձնաժողովի նախագահի կողմից հանվել է ծրարից, և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնաստանձվող դրոշմանիշը:

Անվավեր է համարվում սահմանված նմուշի քվեաթերթիկը, եթե, Ազգային ժողովի ընտրությունների դեպքում, ներառում է ավելորդ գրառում. Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրությունների դեպքում՝ ա) մեկից ավելի թեկնածուի, կուսակցության օգտին նշումներ է ներառում. բ) ներառում է ավելորդ գրառում. գ) որևէ նշում չի գրառում. դ) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները ԿԸՀ-ի սահմանած կարգով փաթեթավորվում են, որոնք (փաթեթները) կնքվում և տեղադրվում են պարկում: Փաթեթների վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք նույնպես իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա:

Տեղամասային կենտրոնում կազմակերպված քվեարկության արդյունքների վերաբերյալ գլխավոր փաստաթուղթը տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած՝ քվեարկության արդյունքների արձանագրությունն է:

Արձանագրությունը պարտադիր կերպով պետք է ներառի ընտրական տեղամասում քվեարկության գործընթացում ձեռք բերված հետևյալ տվյալները՝

- ա) ընտրական տեղամասի ընտրողների ընդհանուր թիվը.
- բ) քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը
- գ) հանձնաժողովին հատկացված ինքնասունձվող դրոշմանիշների թիվը.
- դ) հանձնաժողովին հատկացված համարակալված կտրոնների թիվը.

ե) ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը.

զ) ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների թիվը.

- է) չօգտագործված համարակալված կտրոնների թիվը.
- ը) չօգտագործված ինքնասունձվող դրոշմանիշների թիվը.
- թ) անվավեր քվեաթերթիկների թիվը.

ժ) յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը: Աժ ընտրությունների ժամանակ կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը.

- ի) թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը:

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, կնքում է հանձնաժողովի նախագահը: Արձանագրության տվյալների վերաբերյալ հատուկ կարծիք ունեցող հանձնաժողովի անդամն այդ մասին գրառում է կատարում արձանագրության մեջ դրա համար նախատեսված տե-

ղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի (որը սկսվել էր հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության ավարտից հետո ժ. 20.00-ին) վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո, հանձնաժողովն ավարտում է արձանագրության կազմումը, իսկ հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը: Այն կազմվում է չորս օրինակից. մեկ օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին, մեկ օրինակը տեղադրվում է պարկում: Փակված պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք նույնպես իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը, ինչպես նաև վերջիններիս պահանջով նրանց տրվում է այդ արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Տեղամասային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը փակված և ստորագրված պարկը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով՝ ԿԸՀ-ի սահմանած կարգով:

Հիմք ընդունելով իր ամփոփիչ արձանագրության տվյալները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է անճշտությունների չափի վերաբերյալ արձանագրություն:

Առաջին անճշտությունը հաշվարկվում է ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների թվի և չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշների թվի գումարի և տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնաստանձվող դրոշմանիշների թվի համադրմամբ:

Երկրորդ անճշտությունը հաշվարկվում է քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի և քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների գումարի համադրմամբ: Եթե քվեաթերթիկների թվերի գումարը մեծ է մասնակիցների ընդհանուր թվից, ապա տարբերությունը նշվում է որպես երկրորդ անճշտությունների չափ: Ստացվում է, որ ընտրական տեղամասում անճշտությունների չափը հավասար է առաջին և երկրորդ անճշտությունների գումարին:

Տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունները ստանալուց հետո դրանց տվյալները ԿԸՀ-ի սահմանած կարգով մուտքագրում է համակարգիչ՝ հատուկ համակարգչային ծրագրերի միջոցով: Հանձնաժողովը ոչ ուշ, քան երեք ժամը մեկ տպում է քվեարկության արդյունքների աղյուսակավորումը և այն նախագահի և քարտուղարի ստորագրությամբ ու հանձնաժողովի կնիքով կնքված անհապաղ փակցնում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ տարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 20 ժամվա ընթացքում: Աղյուսակավորման վերջնական օրինակը անհապաղ փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից 24 ժամ հետո ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Տարածքային ընտրական հանձնաժողովն այս դեպքում (Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների վերաբերյալ) արձանագրություն չի կազմում:

Դրա հետ մեկտեղ, «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների արդյունքների ամփոփումը՝ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա, վերապահում է տարածքային ընտրական հանձնաժողովին: Այդ գործո-

ղությունը վերջինս (տարածքային ընտրական հանձնաժողովը) կատարում է ընտրական տեղամասերում քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում և արձանագրությամբ վավերացնում դրանք (74-րդ հոդվ. 1-ին մաս): Արձանագրությունը (որի բովանդակած տվյալները թվարկված են Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասում) ստորագրում են հանձնաժողովի անդամները, կնքում է հանձնաժողովի նախագահը: Վերջինս հրապարակում է կազմված արձանագրությունը, ինչպես նաև դրա մեկ օրինակը փակցնում է հանձնաժողովում՝ տեսանելի տեղում: Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճենը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (74-րդ հոդվ.) սահմանված ժամկետում համայնքի ղեկավարի ընտրությունների ամփոփման արդյունքում ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) համայնքի ղեկավար ընտրվելու մասին: Համայնքի ղեկավար է համարվում ընտրված այն թեկնածուն, որն ստացել է առավելագույն կողմ ձայներ: Մեկ թեկնածուի քվեարկվելու դեպքում նա համարվում է ընտրված, եթե նրա օգտին է քվեարկել մասնակիցների կեսից ավելին: Հավասար կողմ ձայների դեպքում՝ մեկից ավելի թեկնածուների միջև կատարվում է վիճակահանություն՝ ընտրված թեկնածուին որոշելու համար:

բ) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին: Եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցող Օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա տարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին:

գ) համայնքի ղեկավարի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին: Եթե վերաքվեարկության միջոցով հնարավոր չէ շտկել առանձին ընտրական տեղամասերում կատարված խախտումների հետևանքները, ապա համայնքի ղեկավարի ընտրությունները տվյալ ընտրատարածքում անվավեր են ճանաչվում, և նշանակվում

է վերաքվեարկություն: Այն անցկացվում է քվեարկության օրվանից 21 օր հետո թեկնածուների նույն կազմով:

դ) համայնքի ղեկավարի ընտրությունը չկայացած ճանաչելու մասին: Համայնքի ղեկավարի ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝ ա) քվեարկված միակ թեկնածուն չի հավաքել անհրաժեշտ թվով ձայներ. բ) Օրենսգրքով թեկնածուի գրանցման համար նախատեսված ժամկետում վերջինս (թեկնածուն) չի գրանցվել կամ գրանցված թեկնածուների թիվը պակաս է երկուսից. գ) մինչև քվեարկության ավարտը թեկնածուներից մեկը մահացել է, կամ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման ավարտը առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն մահացել է. դ) ընտրությունից հետո ընտրված համայնքի ղեկավարը մինչև լիազորությունների ստանձնումը մահացել է. ե) վերաքվեարկության արդյունքների հիման վրա ընտրություններն անվավեր են ճանաչվել:

Տարածքային ընտրական հանձնաժողովը նույն կարգով և ժամկետում ամփոփում է ավագանու անդամների ընտրության արդյունքները և ընդունում նշված (ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածում) որոշումներից որևէ մեկը:

Համայնքում ընտրված են համարվում առավելագույն թվով կողմ ձայներ ստացած («ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասում նշված) համապատասխան թվով (հինգ, յոթ, ինը, տասնմեկ, տասնհինգ, երեսուներեք) ավագանու անդամի թեկնածուներ: Նույն հիմքերով (ինչպես համայնքի ղեկավարի ընտրության դեպքում) տարածքային ընտրական հանձնաժողովը համայնքի ավագանու ընտրությունները ճանաչում է անվավեր կամ չկայացած:

Համայնքի ավագանու անդամների ընտրության մասին որոշումն ընդունելուց հետո՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահն երկօրյա ժամկետում այն ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով և մարզպետին: Այդ որոշման հետ անհամաձայնություն ունեցող սուբյեկտները կարող են այն բողոքարկել վարչական դատարան:

Ազգային ժողովի և երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման իրավասությունն Օրենսգրքով վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (75-րդ հոդվ.):

Տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված



ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա ԿԸՀ-ը քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո, ամփոփում է Ազգային ժողովի քվեարկության արդյունքները և արձանագրությամբ վավերացնում դրանք: Բացի այդ, քվեարկության նախնական առդյունքները պաշտոնապես հրապարակվում են հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով: Դրանից հետո՝ ոչ ուշ, քան 72 ժամ անց հատուկ համակարգչային ծրագրերի միջոցով ամփոփում են տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

Այնուհետև, ԿԸՀ-ը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները և ընդունված որոշումները՝ կազմում է քվեարկության արդյունքների վերաբերյալ իր արձանագրությունը, որտեղ թվարկվում է ընտրության ընթացքում ձեռք բերված տվյալները (13 կետից բաղկացած): Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները և կնքում է հանձնաժողովի նախագահը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճենը:

Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածում նախատեսված գործողությունների ավարտից հետո, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին:

Նման բովանդակությամբ որոշում ընդունվում է այն դեպքում, եթե ընտրության արդյունքում ընտրություններին մասնակցած կուսակցություններից (դաշինքից) մեկը ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը:

Ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի (կուսակցության դեպքում) 5 և (դաշինքի դեպքում) 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե

նշված քանակությամբ (5 և 7 տոկոս) կողմ քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցություն (դաշինք):

Յուրաքանչյուր կուսակցության (դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. կուսակցությանը կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով (Ազգային ժողովի պատգամավորների նվազագույն թվով), արդյունքը բաժանվում է արգելապատնեշը (5 և 7 տոկոս ձայների շեմը) հաղթահարած ընտրություններին մասնակցած բոլոր կուսակցությունների (դաշինքի) կողմ ստացած ձայների ընդհանուր թվի վրա, ստացված թվերը հանդիսանում են յուրաքանչյուր կուսակցության (դաշինքի) հասանելիք մանդատների թիվը:

Նշված գործողության կատարումից հետո, եթե 101 մանդատը ամբողջովին չի բաշխվում, ապա մնացած մանդատները կուսակցությունների (դաշինքի) միջև բաշխվում են ըստ ձայների մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Եթե դրանից հետո նորից ազատ մանդատներ են մնում, ապա դրանք բաշխվում են կուսակցությունների (դաշինքի) միջև՝ ըստ ստացած կողմ ձայների մեծության:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքն սահմանում է նաև կուսակցությունների տարածքային ընտրական ցուցակներից ընտրված պատգամավորներից յուրաքանչյուր ընտրական տարածքին հասանելիք մանդատների թիվը որոշելու կարգը (95-րդ հոդվ. 8-րդ մաս):

Ինչ վերաբերում է *ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև պատգամավորական 4 մանդատների բաշխմանը*, ապա ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով *առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող* առաջին չորս ազգային փոքրամասնություններից *յուրաքանչյուրին տրվում է մեկ մանդատ*: Այդ նպատակով մանդատները բաշխվում են արգելապատնեշը (5 և 7 տոկոսի շեմը) հաղթահարած կուսակցությունների (դաշինքների) միջև՝ ըստ յուրաքանչյուր մանդատի համար *ստացված գործակցի*, որը հաշվարկվում է ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասում ամրագրված բանաձևով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի

ընտրությունների արդյունքները՝ վերը նշված ուղղություններով, ամփոփելուց հետո, ինչպես նշվեց, ընդունում է «Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին» («ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 95-րդ հոդվ. 1-ին մաս 1-ին կետ որոշում, եթե ամփոփման արդյունքում առկա են դրա համար բավարար հիմքեր: Նման դեպքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պահանջում է, որպեսզի «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանվեն կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման երաշխիքներ (89-րդ հոդվ. 3-րդ մաս):

Սահմանադրության այդ պահանջի գործնականում իրականացման նպատակով ընտրական օրենսգիրքը բովանդակում է հատուկ հոդված (96-րդ), որի համաձայն եթե որևէ կուսակցություն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության ժամանակ ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում նրա (կուսակցության) մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս քան 54 տոկոսը:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը նախատեսում է նաև այն իրավիճակներում կողմնորոշվելու ուղիները, երբ ընդունված որոշման (Ազգային ժողով ընտրվելու մասին) դեպքում որևէ կուսակցություն չի ստացել բաշխվող մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը: Նման դեպքում Օրենսգիրքն առաջարկում է որոշումն ընդունվելուց հետո՝ 6 օրվա ընթացքում, ընտրական արգելապատնեշը հաղթահարած ցանկացած կուսակցությանը (դաշինքին) քաղաքական կոալիցիա կազմել ընտրական արգելապատնեշը հաղթահարած այլ՝ առավելագույնը երկու կուսակցության (դաշինքի) հետ, եթե նրանց տրված ձայների գումարը բավարար է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունն ստանալու համար, և եթե նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ (97-րդ հոդվ. 1-ին մաս):

Եթե ձևավորված կոալիցիան ունենում է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա նա (կոալիցիան) ստանում է այնքան նվազագույն թվով

լրացուցիչ մանդատներ, որի արդյունքում կոալիցիայի մանդատների ընդհանուր թիվը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը:

Ազգային ժողովում կայուն խորհրդարանական մեծամասնություն ստեղծելու համատեքստում «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը պահանջում է, որպեսզի մինչև կոալիցիա ձևավորվելու վերջնաժամկետի՝ 6-րդ օրվա ժամը 18<sup>00</sup>-ն կոալիցիայի անդամ կուսակցությունները (դաշինքները) Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնեն կոալիցիա կազմելու մասին իրենց մշտական գործող ղեկավար մարմինների որոշումները: Դրանք (որոշումները) պետք է պարունակեն վարչապետի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը: Սահմանված ժամկետում նշված որոշումները չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում կոալիցիան համարվում է չձևավորված:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված վերջնաժամկետի (կոալիցիա կազմելու) ավարտի հաջորդ օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում ընտրության երկրորդ փուլ անցկացնելու կամ Ազգային ժողով ընտրվելու մասին:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվում է քվեարկության օրվանից հետո՝ 28-րդ օրը: Ընտրության երկրորդ փուլին մասնակցում են առավել թվով կողմ ձայներ ստացած երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները): Երկրորդ փուլի անցկացման և արդյունքների ամփոփման մանրամասները ամրագրված են «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 98-րդ և 99-րդ հոդվածներում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ կարող է ընդունել նաև (բացի Աժ ընտրվելու և մանդատներ բաշխելու մասին որոշումից) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու կամ Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին որոշումները:

Այսպես, եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդ-

յունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին: Իսկ եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել կատարված խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն: Իսկ եթե նշված վերաքվեարկությունների ընթացքում նորից տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու մասին և նշանակում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 15, և ոչ ուշ, քան 30 օր հետո ընտրություններին մասնակցած կուսակցությունների նույն կազմով անցկացվում է վերաքվեարկություն: Դրա (վերաքվեարկության) արդյունքները նույնպես անվավեր ճանաչելու դեպքում կայացված որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 70 օր հետո անցկացվում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություն: Այդ կապակցությամբ հանրապետության նախագահը քվեարկության օրը նշանակելու մասին հրամանագիրն ընդունում է Ազգային ժողովի ընտրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7-րդ օրը: Նոր հերթական ընտրությունն անցկացվում է նոր մասնակիցների առաջադրմամբ և արտահերթ ընտրությունների համար սահմանված կարգով ու ժամկետներում:

Հարկ է նկատել, որ ընտրական գործընթացի արդյունավետությունն ու ժողովրդաիշխանության սկզբունքի կյանքի կոչումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Որքան էլ երկրի ընտրական օրենսդրությունը լինի կատարյալ, իսկ քրեական օրենսդրությունը խստագույն, միևնույն է ընտրական իրավունքի իրացումը շարունակելու է մնալ ոչ արդյունավետ, եթե երկրում չկա ձևավորված քաղաքացիական հասարակություն՝ իրավագիտակցության պատշաճ մակարդակով:

## 2. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### § 2.1. Ընտրական իրավունքների դեմ ուղղված վարչաիրավական բնույթի խախտումները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Ընտրական իրավունքի վերոնշյալ սկզբունքների սահմանումը կարող է զուտ հռչակագրային բնույթ կրել, եթե օրենսդրությամբ չսահմանվեն երաշխիքներ, որոնք հնարավորություն կտան անխոչընդոտ իրականացնել ընտրական իրավունքը: Նման երաշխիքներ են հանդիսանում ընտրական իրավունքի խախտումների համար պատասխանատվություն սահմանող նորմերը:

Ընտրական իրավունքը անձի՝ սահմանադրական ամրագրում ունեցող քաղաքական իրավունքներից է, և դա է պատճառը, որ ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունները սահմանվում են ՀՀ քրեական օրենսգրքի՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների գլխում, իսկ ընտրական իրավունքի դեմ ուղղված վարչական իրավախախտումները՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների գլխում:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Այսպես, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 5-րդ գլխում («Քաղաքացիների իրավունքների դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ») նախատեսված են մի

շարք նորմեր, որոնք վերաբերում են ընտրական իրավունքի խախտումներին:

Հարկ է նկատել, որ 2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրագործվեց «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխանության ապահովման պահանջը, ինչը միտված էր նպաստելու «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կանոնակարգումների լիարժեք կենսագործմանը՝ պայմանավորված վարչական պատասխանատվության սպառնալիքով:

Վարչական իրարվախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում հետևյալ իրավախախտումների համար՝

1. քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը (հոդված 40.1),

2. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը (հոդված 40.2),

3. թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը կամ հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը (հոդված 40.3),

4. ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը (հոդված 40.4),

5. ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը (հոդված 40.6),

6. զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելը (հոդված 40.7),

7. քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը, քարոզչական նյութեր տարածելը, նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսներն օգտագործելը (հոդված 40.8),

8. թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար օրենքով սահմանված կարգը խախտելը (հոդված 40.9),

9. օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութեր տարածելը, քարոզչական պաստառները պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը (հոդված 40.11),

10. թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները չկատարելը (հոդված 40.12),

11. տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 40.13),

12. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը (հոդված 40.14),

13. տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելը (հոդված 40.15):

Այսպես, ՀՀ ՎԻՎՕ **40.1-րդ հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելու համար, որի համաձայն՝ քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:**

**Քվեարկության և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով քարոզչություն կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի կամ ղեկավարի նկատմամբ՝ նվազա-**



**գույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:**

Հատկանշական է, որ քննարկվող հոդվածի վերնագրի և բովանդակության մեջ առկա է անհամապատասխանություն:

Բանն այն է, որ վերնագրում նշվում է «քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը», իսկ արդեն բովանդակության մեջ՝ «քվեարկության և դրան նախորդող օրը» քարոզչություն կատարելու մասին:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը **պարտադիր է**, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» շաղկապով բաժանված պայմաններով:

Նույն հոդվածի 3-րդ մասում նշվում է՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է **միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի** առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:

Փաստորեն, ստացվում է այնպես, որ ըստ հոդվածի վերնագրի անձը ենթակա կլինի վարչական պատասխանատվության, եթե քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարի, իսկ համաձայն հոդվածի բովանդակության՝ միայն քվեարկության օրը քարոզչություն կատարելու համար անձը ենթակա չի լինի պատասխանատվության: Այսինքն՝ պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ կլինի նաև հաստատել քվեարկության նախորդ օրը քարոզչություն կատարելու հանգամանքը:

ՀՀ Սահմանադրական դատարանը N 1253 որոշման մեջ արձանագրել է, որ ՀՀ օրենսդրության մեջ առկա են «և» շաղկապով տարանջատված տարաբնույթ իրավական նորմեր, որոնցից ոչ բոլորն են ամրագրում տվյալ նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմանները: Դրանք կարող են, ի թիվս այլևի, լինել նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ, նորմ-խնդիրներ, ինչպես նաև կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող այնպիսի նորմեր,

որոնք չեն ամրագրում որևէ պայման, կամ որ նույնն է՝ տվյալ նորմի կիրառումը չեն պայմանավորում պայմանների համակցությամբ:

Այնուամենայնիվ, քննարկվող դեպքում պարզ չէ, թե «և» շաղկապին ինչպիսի նշանակություն պետք է տրվի: Ուստի, տարակաերպ մեկնաբանություններից խուսափելու համար առավել նպատակահարմար է համապատասխանեցնել քննարկվող նորմի վերնագիրն ու բովանդակությունը, ինչը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, թե որն է համարվում նախընտրական քարոզչության ժամանակահատված: Մասնավորապես՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա էթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով **արգելվում է:**

Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1.1-ին մասի՝ ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է կաբելային (մալուխային) հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակել Հայաստանի Հանրապետությունում գործող վերգետնյա էթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների վերգետնյա էթերային այն ծրագրերը, որոնք պարունակում են քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական,

փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ որևէ այլ ձևով:

Մինչև 2016 թվականի օրենսդրական փոփոխությունները ՀՀ ՎԻՎՕ 40.1-ին հոդվածի առաջին պարբերությունը պատասխանատվություն էր նախատեսում քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը նախընտրական քարոզչություն կատարելու համար, որը պատժվում էր տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեք-հարյուրապատիկից մինչև հիգհարյուրապատիկի չափով:

Ներկայումս որպես պատիժ նախատեսված է տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով: Այսինքն՝ բարձրացել են սանկցիայի նվազագույն շեմն ու առավելագույն չափը:

Հոդվածի նախորդ խմբագրությամբ 3-րդ պարբերությունը պատասխանատվություն էր նախատեսում նույն արարքը տեղամասային կենտրոնի շենքի ներսում, նուտքի մոտ կամ շենքի շուրջը բանավոր կամ գրավոր ձևով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրությունների հավաքմամբ՝ ընտրողների կամաարտահայտման վրա ներազդելու միջոցով կատարելու համար:

Ներկայիս խմբագրությամբ այս դրույթը բացակայում է:

Հոդվածի նախորդ խմբագրությամբ 5-րդ պարբերությունը պատասխանատվություն էր սահմանում նույն արարքը զանգվածային լրատվության միջոցներով կատարելու համար: Իսկ այժմ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթները «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու արդյունքում 40.1-ին հոդվածի 3-րդ պարբերությամբ պատասխանատվություն է սահմանվում քվեարկության և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով քարոզչություն կատարելու համար: Հոդվածի նախկին խմբագրությամբ սանցիան կիրառվում էր լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ, իսկ այժմ կարող է կիրառվել նաև լրատվական գործունեություն իրականացնողի ղեկավարի նկատմամբ:

ՀՀ ՎԻՎՕ 40.2-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստո-

րագրելու համար, որի համաձայն՝ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նշված հոդվածի վերնագիրը վերախմբագրվել է, և պատասխանատվություն է նախատեսվել ոչ միայն ընտրական, այլ նաև հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելու համար:

Համաձայն «ՀՀ ըտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 53-րդ հոդվածի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Իսկ նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, կնքում է հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:

ՀՀ ՎԻՎՕ 40.3 հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը կամ հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու համար, որի համաձայն՝ թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, երբ դրա բացելը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պարտականություն է, կամ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ ընտրությունների մասին առաջադրվելու համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ընտրական գրավի մեկ քառորդի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը:

Նախկին խմբագրությամբ արարքի օբյեկտիվ կողմն էր կազմում նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործ-

ման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը, իսկ այժմ, ի թիվս դրան, ավելացել է նաև թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, երբ դրա բացելը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պարտականություն է:

«ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է. «Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), 10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուները, ինչպես նաև սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում (մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն բացում է նախընտրական հիմնադրամ, եթե զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործելու է կամ արդեն օգտագործել է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար) համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում:»:

«ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ժառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ (ըստ նույն օրենսգրքի

75-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ), քան 3 օր առաջ: Հայտարարագրին կցվում են թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կնքված պայմանագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը:

ՀՀ ՎԻՎՕ **40.4 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելու համար**, որի համաձայն՝ **ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:**

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում պետք է փակվի: Տեղամասային ընտրական հանձնաժողովում այդ պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է հանձնաժողովի նախագահը:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2017թ. ունվարի 11-ի ընդունված N 9-Ն որոշման 6-րդ կետի համաձայն՝ ընտրա-

կան փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը և ընտրողների ցուցակները պարունակող պարկը փակվում են փակման համար նախատեսված տեղի ժապավենը հեռացնելու, այդ մասում պարկի երկու կողմերը իրար միացնելու և այդ միացման տեղում պարկի երկու կողմերն իրար ամուր սեղմելու միջոցով:

**ՀՀ ՎԻՎՕ 40.6 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար**, որի համաձայն՝ **ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:**

Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի N 131-Ն որոշման՝ տարածքային ընտրական հանձնաժողովի փաստաթղթերի, դիմումների հաշվառման գրանցամատյանը բաղկացած է երկու մասից: Գրանցամատյանի առաջին մասում գրառվում են հանձնաժողովի մտից և ելից փաստաթղթերը, իսկ երկրորդ մասում գրառվում են դիմողի կամ բողոք բերողի կողմից ստացված դիմումները, բողոքները: Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը լրացվում է գրանցամատյանով սահմանված ձևին համապատասխան: Երկրորդ մասում լրացվում է վստահված անձանց և դիտորդների, այցելուների, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները: Երրորդ մասում լրացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի մտից և ելից փաստաթղթերը: Փաստորեն գրանագամատյանի լրացման նշված կարգից ցանկացած շեղում կհամարվի քննարկվող հոդվածում նշված սահմանված կարգից շեղում և կհանգեցնի վարչական պատասխանատվության: Հարկ է նկատել, որ գրանցամատյանի թերի լրացումը ևս կարող է դիտարկվել որպես սահմանված կարգից շեղում:

**ՀՀ ՎԻՎՕ 40.7 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելու համար**, որի համաձայն՝ **զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ,**

սակագին և այլն չապահովելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Օրենքով սահմանված կարգով որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների ավարտն ընկած ժամանակահատվածը, հեռուստա-ռադիոընկերությունների աշխատակիցների կողմից հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) ընտրությունները լուսաբանելը և (կամ) հեռուստառադիոհաղորդում (հեռուստառադիոհաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումները (հեռուստառադիոհաղորդումները կամ ռադիո-հաղորդումները) առևտրային գովազդով ընդմիջելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի կամ ղեկավարի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 8.1-ին և 8.2-րդ մասերի՝

8.1. Հեռուստառադիոընկերությունների կողմից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նկատմամբ խտրականության դրսևորու-



մը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

8.2. Հեռուստառադիոընկերությամբ հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների և ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչությանը մասնակցող կողմերի) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչական միջոցառումների վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն չապահովելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 40.7-րդ հոդվածի նախավերջին պարբերությամբ արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումներն ընդմիջելը առևտրային գովազդով: Համաձայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի՝ առևտրային է կոչվում շահույթ ստանալու նպատակ հետապնդող գովազդը: Նախկին խմբագրությամբ արգելվում էր նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումներն ընդմիջելը ապրանքների կամ ծառայությունների գովազդով: Բացի այդ, առևտրային գովազդով նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումներն ընդմիջելու համար պատասխանատվության է ենթակա ոչ միայն լրատվական գործունեություն իրականացնողը (ինչպես նախկին խմբագրությամբ էր), այլև լրատվական գործունեություն իրականացնող անձի ղեկավարը:

ՀՀ ՎԻՎՕ **40.8 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու, քարոզչական նյութեր տարածելու, նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները օգտագործելու համար, որի համաձայն՝**

1. Քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը առաջացնում

են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Վարչական ռեսուրսի չարաշահման համար պատասխանատվություն նախատեսող նորմերի սահմանման առաջարկությունները տեղ են գտել վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած ընտրություններին և հանրաքվեին հաջորդած միջազգային մասնագիտացված կազմակերպությունների զեկուլյցներում: Այս պահանջը սահմանված է նաև Հանրապետության նախագահի կողմից 2015 թվականին հաստատված Հայաստան-ԵՄ Բյուջետային աջակցության համաձայնագրի հատուկ պայմաններում:

Հարկ է նկատել սակայն, որ միջազգային հիմնարար և խորհրդատվական բնույթի փաստաթղթերում չարաշահման համար պատասխանատվություն սահմանելու առումով չկա բացառապես քրեական պատասխանատվության սահմանման պահանջ, այլ խրախուսվում է երկրների կողմից համարժեք և արդյունավետ պատասխանատվության միջոցների սահմանումը՝ անկախ դրանց տեսակից (կարգապահական, վարչական կամ քրեական):

«Վարչական ռեսուրս» հասկացության տարբեր սահմանումների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ վարչական ռեսուրսն այն բոլոր միջոցների համախումբն է՝ մարդկային, ֆինանսական, նյութական, ոչ նյութական (նաև *in natura*), որոնք որևէ կերպ բխում են հանրային (բյուջետային) մի-

ջոցներից: Ընդ որում, միջազգային փաստաթղթերում տարբերակվում են «վարչական ռեսուրսի օգտագործում» և «վարչական ռեսուրսի չարաշահում» հասկացությունները: Այսպես, «վարչական ռեսուրսի օգտագործում»-ը այդ ռեսուրսների՝ օրենքով արտոնված օգտագործումն է, որը հավասարապես պետք է հասանելի լինի բոլոր անձանց (կուսակցություններ, թեկնածուներ): «վարչական ռեսուրսի չարաշահում» արտահայտության մեկնաբանությունները հանգում են նրան, որ չարաշահումը վարչական ռեսուրսի՝ օրենքով արգելված օգտագործումն է քաղաքական որևէ ուժի (կուսակցություն, թեկնածու) համար արտոնություններ և առավելություններ ստանալու համար: Վարչական ռեսուրսի չարաշահողների սուբյեկտային շրջանակը ներառում է հանրային ծառայողներին, պաշտոնատար անձանց, ընտրություններին մասնակցող թեկնածուներին և իշխող քաղաքական կուսակցություններին:

Նախկինում «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը սահմանում էր հանրային ռեսուրսի չարաշահումն արգելող կարգավորումներ հանրային ծառայող հանդիսացող թեկնածուների համար նախընտրական քարոզչություն իրականացնելիս (սահմանափակումներ մարդկային ռեսուրսների օգտագործման (ի պաշտոնե քարոզչություն կատարելիս) տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների օգտագործման սահմանափակումներ և այլն): Այժմ՝ 2018թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում, «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածը վերախմբագրվեց: Ներկայումս այն ունի հետևյալ բովանդակությունը.

«Հոդված 23. Նախընտրական քարոզչության սահմանափակումները

1. Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաս-

տիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

3) դատավորներին, դատախազներին, քննչական մարմիններում, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին.

4) ընտրական հանձնաժողովների անդամներին.

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց (մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք).

7) Մարդու իրավունքների պաշտպանին.

8) Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին.

9) Հաշվեքննիչ պալատի անդամներին.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.

11) ինքնավար մարմինների անդամներին:

2. Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ

քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը:

3. Հանրային ծառայող հանդիսացող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների»:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի (թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն) վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

ՀՀ ՎԻՎՕ **40.9 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար օրենքով սահմանված կարգը խախտելու համար, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշները

րի, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով նախատեսված տեղեկությունները չնշելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, հարցում իրականացնող կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ հրապարակում իրականացրած կազմակերպության նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

Մինչև ընտրության (հանրաքվեի) ժամանակ նույն խախտումը մեկից ավելի անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ հրապարակում իրականացրած կազմակերպության նկատմամբ՝ երկրորդ հրապարակման դեպքի համար, նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, իսկ յուրաքանչյուր հաջորդ խախտման համար նախորդ դեպքի համար սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով նախատեսված տեղեկությունները չնշելու համար վարչական պատասխանատվություն նախատեսվեց 2016 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի՝ թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է նշել՝

- հարցման ժամկետները,
- հարցվողների թիվը և ընտրանքի ձևը,
- հավաքման ձևը և վայրը,

- հարցի ճշգրիտ ձևակերպումը,
- հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը
- պատվիրատուին:

Արգելվում է քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը:

Որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված մինչև ընտրության (հանրաքվեի) ժամանակ նույն խախտումը մեկից ավելի անգամ կատարելը:

**ՀՀ ՎԻՎՕ 40.11 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութեր տարածելու, քարոզչական պաստառները պոկելու, պատռելու կամ դրանց վրա գրառումներ կատարելու համար, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող քարոզչական տպագիր նյութեր տարածելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Մինչև 2016 թվականի օրենսդրական փոփոխությունները ՎԻՎՕ-ի 40.11-րդ հոդվածն ուներ հետևյալ վերտառությունը՝ «Անանուն քարոզչական տպագիր նյութեր տարածելը», իսկ 40.12-րդ հոդվածը՝ «Քարոզչական պաստառները պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը»: Այժմ 40.11-րդ հոդվածով նախատեսված զանցանքի օբյեկտիվ կողմն է կազմում նաև նախընտ-

րական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը: Այսինքն՝ օրենսդիրը 40.11-րդ և 40.12-րդ հոդվածների օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները միավորել է՝ դրանք ներկայացնելով 40.11-րդ հոդվածում:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա:

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են առանց սահմանափակման փակցվել կամ օգտագործվել նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակ՝ այդ միջոցառումների անցկացման վայրում: Այդ միջոցառումների ժամանակ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը միջոցառման ավարտից հետո հանվում են համապատասխան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արգելվում են քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը պո-



կելը, պատռելը, դրանց վրա գրառումներ կատարելը կամ որևէ այլ եղանակով վնասելը:

ՀՀ ՎԻՎՕ 40.12 հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում թեկնածուի, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները չկատարելու համար, որի համաձայն՝ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները՝ դրանում նշված ժամկետներում չկատարելը կամ այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների դեպքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում՝ թեկնածուի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Միևնույն ընտրության ժամանակ նույն խախտումը նույն սուբյեկտի կողմից մեկից ավելի անգամ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր հաջորդ խախտման համար մատչելի դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

Այս հոդվածը լրացվել է 2016 թվականին՝ նպատակ ունենալով ապահովել ընտրական օրենսգրքի հոդվածների պահանջների կատարումը:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ

կիրառում նախագուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրությունների մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրությունների մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:

**ՀՀ ՎԻՎՕ 40.13 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:**

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ տեղամասային ընտրական

հանձնաժողովներին տրամադրվում են ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումներ:

Տեխնիկական սարքավորումը պետք է պարունակի ընտրողների էլեկտրոնային ցուցակը: Տեխնիկական սարքավորումը պետք է ունենա քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած այլ ծրագրային հազեցվածություն: Տեխնիկական սարքավորման ծրագրային ապահովումը Ազգային ժողովի ընտրությունների քվեարկությունից առնվազն 30 օր առաջ պետք է հասանելի լինի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներին՝ տեխնիկական վերստուգում իրականացնելու համար: Ընտրողների էլեկտրոնային ցուցակի նախապատրաստումը տեխնիկական սարքավորման մեջ տեղադրելու համար ենթակա է վերահսկման Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Տեխնիկական վերստուգումը և էլեկտրոնային ցուցակի նախապատրաստման վերահսկողությունը կազմակերպվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորումների սպասարկումն ապահովելու նպատակով պայմանագրային հիմունքներով ընդգրկում է յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հաշվարկով **մինչև 4 մասնագետ:**

Մասնագետի պարտականությունները սահմանվում են ընտրական օրենսգրքի տարբեր հոդվածներում:

Տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետ կարող է լինել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող 18 տարին լրացած անձը: Որպես մասնագետ կարող են ներգրավվել նաև հանրային ծառայողները:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտ-

քաղրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք:

Նույն օրենքի 66-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ընտրող մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը:

Եթե ընտրողը ներկայացրել է անձնագիր կամ նույնականացման քարտ, ապա մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը՝ ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով, և ներկայացված փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ:

(...) Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է կարմիր նշան, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին:

(...) Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

**ՀՀ ՎԻՎՕ 40.14 հոդվածով** պատասխանատվություն է նախատեսվում **տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելու համար, որի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:**

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող

անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ այդ պահին գործառույթ չիրականացնող հանձնաժողովի անդամը փոխարինում է մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Այսինքն՝ «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով մասնագետին փոխարինելը համարվում է նշված սուբյեկտների պարտականությունը, որի չկատարումն առաջացնում է պատասխանատվություն:

ՀՀ ՎԻՎՕ 40.15 հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելու համար, որի 1-ին մասի համաձայն՝ քվեարկության նախատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախագուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո) առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է, որ քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա գտնվելու վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթ-

ների կատարումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից:

Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար պարտադիր կարգով տեսանելի ձևով կրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանված նմուշի վկայականը («ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մաս):

## **§ 2.2. Ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունները**

### **«2.2.1. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (հոդված 149)**

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացու ընտրական համ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար:

**Հոդված 149.** Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ

հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթ հարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելով կամ պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից՝

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Քննարկվող հանցագործության օբյեկտը քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի և ընտրական հանձնաժողովների աշխատանքների ու ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է և բնութագրվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կամ մի քանիսի կատարմամբ՝

1) քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելով.

2) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելով.

3) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

4) նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար խոչընդոտի քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքներին, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը:

2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում տուժող են համարվում նաև այցելուն, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցիչը, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձը:

Այս հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ<sup>1</sup>:

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի սանկցիան վերախմբագրվեց: Եթե նախկինում հոդվածի առաջին մասում նկարագրված արարքի համար որպես պատիժ նախատեսվում էր տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, ապա այժմ տուգանքի նվազագույն շեմը և առավելագույն չափը բարձրացվել են, և սահմանվել է տուգանք նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով: Որպես ազատագրկման հետ կիրառվող լրա-

---

<sup>1</sup> Տե՛ս Ս. Առաքելյան, Հ. Բեդկյան, Վ. Ենգիբարյան «Ընտրական իրավունքի վերաբերյալ վեճերի քննության հիմնախնդիրները», Երևան, 2012, էջ 64-66:



ցուցիչ պատիժ նախատեսվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Եթե նախկինում նույն հոդվածի 2-րդ մասում որպես պատիժ նախատեսվում էր ազատազրկումը՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով, ապա այժմ պատիժը խստացվել է՝ դառնալով չորսից վեց տարի: Հոդվածի առաջին մասի սանկցիայի մասն երկրորդ մասում ևս որպես ազատազրկման հետ կիրառվող լրացուցիչ պատիժ նախատեսվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քրեական դատավարության 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի 149, 150, 154.1, 154.2, 154.9 հոդվածներով կատարում են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները: Համանման դրույթ է նախատեսված նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննարկվող հանցակազմի հատկանիշներով հարուցված և քննված քրեական գործերի օրինակներ են հետևյալները.

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Ա. Մ.- ն հայտնել է, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Երևանի Կոմիտաս 56 հասցեում գտնվող «Այո» ընտրական քարոզչական շտաբի դիմաց, իր լիազորություններն իրականացնելու ժամանակ, հիշյալ շտաբից դուրս է եկել ինքնությունը չպարզված տղամարդը, ձեռքով փակել է տեսախցիկի օբյեկտիվը՝ խոչընդոտելով տեսանկարահանման բնականոն ընթացքը և պահանջել է հանձնել տեսախցիկը կամ հիշողության կրիչը:

Բացի այդ, նույն օրը՝ ժամը 14:00-ի սահմաններում, հիշյալ շտաբի դիմաց ինքնությունը չպարզված կինը դուրս է եկել շտաբից, մոտեցել է իրեն՝ կրկին պահանջելով դադարեցնել նկարահանումները և հեռանալ: Այնուհետև նույն կինը հրել է իրեն՝ վիրավորանքներ հնչեցնելով ինչպես իր, այնպես էլ՝ նույն ռադիոկայանի օպերատորի հասցեին: Այս կերպ՝ ինքնությունը չպարզված անձինք, դիտավորյալ գործողություններով, խոչընդոտել են «Ազատություն»

նադիոկայանի լրագրող Ա. Մ.-ի և օպերատոր Գ. Ա.-ի կողմից ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքը լուսաբանելու իրենց լիազորությունների ազատ իրականացմանը:

«Ազատություն» նադիոկայանի ներկայացուցիչների կողմից հանրաքվեի ընթացքը լուսաբանելու իրենց լիազորությունների ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Մեկ այլ դեպքով՝ Երևանի ավագանու ընտրություններից հետո՝ 2017 թվականի մայիսի 16-ին, թիվ 7/51 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ պարզվել է, որ մի շարք անվավեր քվեաթերթիկների վրայից անհետացել են կողմ քվեարկած նշումների թանաքանյութերը:

Մասնավորապես, նշված ընտրատեղամասի՝ անվավեր ճանաչված 152 քվեաթերթիկներից մեծ մասի վրա առկա են եղել հավելագրումներ /մեկից ավելի նշումներ/՝ «V»-ձև նշանի կամ ձեռագիր տարբեր գրառումների տեսքով: Իսկ մնացած 37 քվեաթերթիկների վրա ընդհանրապես որևէ նշում կամ գրառում չի եղել: Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ԵԲՎ Մալաթիայի բաժնում նշանակված համալիր փորձաքննության արդյունքում նշված 37 քվեաթերթիկների վրա հայտնաբերվել են «V»-ձև նշանի ուրվագծեր և ներկանյութի հետքեր, որոնց հետագա անհետացման պատճառներն ու կատարման վաղեմությունը հնարավոր չի եղել պարզել: Ընդ որում, հիշյալ ուրվագծերն առկա են եղել ինչպես Նիկոլ Փաշինյանի, Ջարուհի Փոստանջյանի, այնպես էլ Տարոն Մարգարյանի անվան դիմաց:

### **§ 2.2.2. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը (հոդված 149.1)**

ՀՀ քրեական օրենսգրքի 149.1.-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու համար:

**Հոդված 149.1. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը**

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթ հարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով,

2) կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով,

3) զուգորդվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

5) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմն են կազմում հետևյալ գործողությունները՝

1. նախընտրական քարոզչություն կատարելուն հարկադրելը,

2. նախընտրական քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը,

3. հանրաքվեի քարոզչություն կատարելուն հարկադրելը,

4. հանրաքվեի քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը:

Փաստորեն, օբյեկտիվ կողմից սույն հանցագործությունը բնութագրվում է գործողություններով, որոնք դրսևորվում են նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելով: Հարկադրել ասելով՝ պետք է հասկանալ գործողություն՝ ուղղված անձի կամքը ճնշելուն: Գործադրվող հարկադրանքը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բնույթի: **Ֆիզիկական հարկադրանքը** կարող է արտահայտվել, օրինակ, անձին ծեծելով, ազա-

տություներից ապօրինի գրկելով, առողջությանը տարբեր աստիճանի ծանրության վնաս պատճառելով: **Հոգեբանական հարկադրանքը** տվյալ դեպքում կարող է ներառել անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, նրանց գույքը ոչնչացնելու կամ վնասելու, նրանց մասին արատավորող տեղեկություններ տարածելու սպառնալիքը (շանտաժը) և այլն:

Քննարկվող հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու պահից:

**Սուբյեկտիվ կողմից** քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ սուբյեկտը տվյալ դեպքում գիտակցում է, որ հարկադրում է նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն:

Հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Հոդվածի 2-րդ մասով նախատեսվում են ծանրացնող հանգամանքները: Մասնավորապես՝ նույն արարքը, որը կատարվել է **ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով**: Ծառայողական կախվածություն ասելով՝ հասկանում ենք կոնկրետ օղակում ենթակայության, ստորադասության հարաբերությունների առկայություն: Հանցավորից տուժողի ծառայողական կախվածության հիմքում կարող է ընկած լինել վերադասից ստորադասի ենթակայությունը: Այլ կախվածություն կարող է համարվել նյութական կախվածությունը, որը կարող է պայմանավորված լինել ցանկացած այնպիսի իրադրությամբ, երբ հանցավորից է կախված տուժողի նյութական վիճակի բարելավումը կամ վատթարացումը: Այլ կախվածության հիմքում կարող են ընկած լինել նաև անուսնական հարաբերությունները, գործատուի և աշխատողի փոխհարաբերությունները և այլն:

Այս հանցագործության ծանրացնող հանգամանք է հանդիսանում նաև **պաշտոնեական դիրքն օգտագործելով** արարքը կատարելը: Այս դեպքում որպես սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն պաշտոնատար անձինք: Իբրև այդպիսիք, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հանդիսանում են՝

1. մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք,

2. պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Հաջորդ ծանրացնող հանգամանքն է՝ արարքը բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կատարելը:

Բռնությունը դրսևորվում է տուժողի դիմադրությունը ճնշելու, հաղթահարելու համար նրա նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելով:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ ԱՐԴ/0176/01/11 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «**Բռնությունը**՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»:

**Բռնություն գործադրելու սպառնալիքը** (կամ հոգեբանական բռնությունը) կարող է արտահայտվել խոսքով կամ այնպիսի գործողությամբ, որի նպատակը տուժողի դիմադրությունը ճնշելն է (օրինակ՝ հրազենը կամ դանակը ցուցադրաբար պատյանից հանելը և ձեռքերի մեջ խաղացնելը):

Քննարկվող հոդվածի 2-րդ մասով որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված նաև արարքը **մի խումբ անձանց կողմից կատարելը**: Մի խումբ անձանց կողմից կատարված լինելը ենթադրում է՝ 1) հանցագործությանը երկու և ավելի համակատարողների մասնակցություն, 2) համակատարողների գործողությունների համաձայնեցվածություն:

Արարքը, որը զուգորդվել է անձին ազատությունից զրկելով, նույնպես հանդիսանում է քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք: **Անձին ազատությունից զրկելը** քրեորեն պատժելի է, եթե դա 1) եղել է ապօրինի, 2) կատարվել է տուժողի կամքին հակառակ:

### **§ 2.2.3. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150)**

ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելու, մուտքագրված տվյալները փոփոխելու, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

#### **Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը**

1. Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործու-

նեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությանը կամ կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատագրվմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Սույն հանցագործության անմիջական օբյեկտն ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքները կեղծելով, որը կարող է դրսևորվել հետևյալ գործողություններով՝

1) ձայներն ակնհայտ սխալ հաշվելով.

2) ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելով.

3) համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ նուտքագրելով կամ նուտքագրված տվյալները փոփոխելով.

4) ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելով.

5) որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելով.

6) ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելով:

Ձայներն ակնհայտ սխալ հաշվելը նշանակում է քվեարկության արդյունքների դիտավորյալ աղավաղում, որն առաջ է բերում «կողմ» կամ «դեմ» քվեարկած ձայների՝ իրականությանը չհամապատասխանող ավելացում կամ պակասեցում: Դա կարող է արտահայտվել, օրինակ, մեկ թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկը մեկ ուրիշ թեկնածուի օգտին հաշվելով, անցանկալի քվեաթեր-

թիկների վրա լրացուցիչ նշումներ կատարելով կամ դրանք թաքցնելով, անվավեր քվեաթերթիկներն այս կամ այն թեկնածուի օգտին հաշվելով և այլն:

Հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքներն **ակնհայտ սխալ հաստատելն** արտահայտվում է ընտրությունները կամ հանրաքվեն օրենքի խախտմամբ դիտավորությամբ կայացած կամ չկայացած, այս կամ այն թեկնածուին ընտրված կամ չընտրված հայտարարելով և այլն:

Քննարկվող հոդվածի իմաստով **համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրել կամ մուտքագրված տվյալները փոփոխել** ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ նման գործողությունները կատարվում են ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու, աղավաղելու, իրականությանը չհամապատասխանող տեսքով ներկայացնելու նպատակով: Հակառակ պարագայում՝ արարքը չի կարող որակվել Քր. օր-ի 150-րդ հոդվածով: Հետևաբար, քննարկվող հոդվածում, ինչպես և քվեատուփ հափշտակելու դեպքում, նպատակահարմար է հատուկ նշում կատարել արարքի կոնկրետ նպատակի վերաբերյալ:

**Ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված մոնուշի դարձնելը** նույնպես առաջացնում է քրեական պատասխանատվություն: Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում սահմանված մոնուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե ներառում է ավելորդ գրառում:

Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում սահմանված մոնուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

1) մեկից ավելի թեկնածուի, կուսակցության օգտին նշումներ է ներառում.

2) մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ են» և «դեմ են» բառերի դիմաց նշումներ է ներառում.

3) բացի քվեարկության համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից, ներառում է ավելորդ գրառում.

4) որևէ նշում չի ներառում.

5) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:



Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ սահմանված նմուշի քվեաթերթիկ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշի այն քվեաթերթիկը, որը հանվել է ծրարից, և որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնաստանձվող դրոշմանիշը:

Այսպիսով՝ չսահմանված նմուշի քվեաթերթիկ կհամարվի այն, որին փակցված չէ ինքնաստանձվող դրոշմանիշը կամ որը չի համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշին:

Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու **այլ եղանակներ** կարող են համարվել, օրինակ՝ քվեարկության արդյունքների վրա ազդելու նպատակով պահանջվածից ավելի տպագրված և այս կամ այն թեկնածուի օգտին նախապատեք քվեարկված քվեաթերթիկներ լցոնելը, անցանկալի թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկները ոչնչացնելը և այլն:

**Ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը** քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե կատարվել է **ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով**:

**Սուբյեկտիվ կողմից** քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար, ակնհայտորեն կեղծի հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները:

Հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ տեղամասային, ընտրատարածքային կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ, ով այս կամ այն եղանակով կեղծել է հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները:

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում **քվեատուլի հափշտակելը** հանվել է արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների շարքից: Այն նախատեսված է քրեական օրենսգրքի այլ հոդվածով:

ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի սանկցիայում 2016 թվականին կատարվել է լրացում, համաձայն որի՝ ազատագրվածան հետ կիրառվող լրացուցիչ պատիժ է նախատեսվել **որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա**:

Հողվածի երկրորդ մասը լրացվել է 2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որը պատասխանատվություն է նախատեսում արարքը **մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից** կատարելու համար:

Քննարկվող հանցակազմի հատկանիշներով հարուցվել և քննվել է հետևյալ դեպքին առնչվող քրեական գործը.

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի թիվ 28/35 տեղամասային հանձնաժողովի նախագահ Հ. Շ.-ն քվեարկության ավարտից հետո փաթեթներով լցված պարկը, գրանցամատյանի և քվեարկության արդյունքների արձանագրությունների՝ հանրաքվեի ընտրատարածքային կենտրոնական հանձնաժողովներ ներկայացվող մեկական օրինակների հետ միասին ոստիկանների ուղեկցությամբ տեղափոխել է Արուսյան քաղաքի Բարեկամության հրապարակ 1 հասցե՝ այնտեղ տեղակայված թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնելու նպատակով:

Կողմնակից լինելով սահմանադրական փոփոխություններին, դժգոհ մնալով իրենց տեղամասում քվեարկության արդյունքներից և օգտվելով վարչական շենքի միջանցքում միայնակ գտնվելու հանգամանքից՝ Հ. Շ.-ն, քվեարկության իրական արդյունքները կեղծելու դիտավորությամբ, նշված երկու արձանագրություններում և գրանցամատյանում գրիչով կրկնագծման եղանակով կեղծել է թիվ 28/35 տեղամասի քվեարկության արդյունքները և արձանագրության կեղծված երկու օրինակները գրանցամատյանի հետ հանձնել ընտրատարածքային հանձնաժողովին:

Մեկ այլ գործով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի թիվ 15/18 տեղամասային հանձնաժողովի նախագահ Ա. Ս.-ին մեղադրանք է առաջադրվել՝ հիշյալ տեղամասում քվեարկության արդյունքները կեղծելու համար:

Նա, հանդիսանալով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի՝ Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի Արագածի փողոցի 11-րդ նրբանցքի 1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքում տեղակայված թիվ 15/18 տեղամասային հանձնաժողովի նախագահը, նշված օրը՝ քվեարկության ավարտից հետո, հանձնաժողովի անդամների մասնակցությամբ

տեղամասային կենտրոնում սկսել է ամփոփել քվեարկության արդյունքները և, կողմնակից լինելով Սահմանադրության փոփոխություններին, քվեարկության իրական արդյունքները կեղծելու դիտավորությամբ, ծրարներից քվեաթերթիկները դուրս բերելուց հետո, օգտվելով հանձնաժողովի անդամների վստահությունից, դրանք սահմանված կարգով չի ցուցադրել վերջիններիս ու դիտավորությամբ ձայներն ակնհայտ սխալ հաշվելու եղանակով կեղծել է թիվ 15/18 տեղամասի քվեարկության արդյունքները:

Այնուհետև Ա. Ս.-ն կեղծված տվյալներով լրացրել է հիշյալ տեղամասում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ արձանագրության օրինակներն ու տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանը, որոնք ստորագրվել են նաև մոլորության մեջ գտնվող հանձնաժողովի մյուս անդամների կողմից: Ապա Ա. Ս.-ն արձանագրության մեկ օրինակը տեղավորել է ընտրական փաստաթղթերի պարկում, մյուսը՝ փակցրել տեղամասային կենտրոնի պատին, իսկ երկու օրինակն ու գրանցամատյանը ներկայացրել է թիվ 15 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Եվս մեկ դեպք՝ կապված 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում մի շարք ընտրական տեղամասերում հանրաքվեի արդյունքները կեղծելու հետ:

Ն. Մ.-ն, կողմնակից լինելով սահմանադրական փոփոխություններին և նպատակ ունենալով նպաստել դրանց ընդունմանը, քվեարկության իրական արդյունքները կեղծելու դիտավորությամբ, 2015թ. դեկտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը նշված տեղամասում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու, քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված ընտրական փաստաթղթերն ու արձանագրություններն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, ինչպես նաև մարման ենթակա քվեաթերթիկների հաշվին «Այո» քվեաթերթիկներն ավելացնելու եղանակով կեղծել է հանրաքվեի թիվ 4/20 տեղամասի քվեարկության արդյունքները և կազմված արձանագրության երկու օրինակներն ու գրանցամատյանը հանձնել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

#### **§ 2.2.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (հոդված 152)**

ՀՀ քրեական օրենսգրքի 152-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելու, դրանք չտրամադրելու կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելու, ինչպես նաև ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու համար:

**Հոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը**

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** քաղաքացիների ընտրական իրավունքի և պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման՝ օրենքով

սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Այս հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելով.

2) ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին սահմանված կարգով չտրամադրելով.

3) ընտրողների ցուցակները սահմանված կարգով չհրապարակելով:

4) Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելով.

**Սուբյեկտիվ կողմից** հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի, ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելու, ինչպես նաև կեղծիքներ կատարելու հանգամանքը:

Հանցագործության առարկան են կազմում ընտրողների ցուցակները, որոնցում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող ՀՀ բոլոր քաղաքացիները: Այդ ցուցակները մշտապես գործող փաստաթղթեր են, որոնք կազմվում են համայնքներում՝ ըստ ընտրական տեղամասերի:

Այս հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ ընտրողների ցուցակներ կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձը: Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից առաջ 30-րդ, 20-րդ և 10-րդ օրը, բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից **լիազորված պետական կառավարման մարմինը** հրապարակում է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների և հաշվառում չունեցող ընտրողների թիվը: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության նախորդ օրը, **լիազոր մարմինը** հրապարակում է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների,

ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների, ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում գտնվող ընտրողների ընդհանուր թիվը:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:

Օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների պետերը, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և գորամասերի հրամանատարները»:

### **§ 2.2.5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (հոդված 153)**

ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար:

#### **Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը**

**1. Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝**

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից՝**

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ

**յամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:**

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

**Օբյեկտիվ կողմից** այս հանցագործությունը բնութագրվում է հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելով, որը կարող է կատարվել հետևյալ եղանակներով՝

- 1) կեղծ տվյալներ հայտնելը.
- 2) կեղծ փաստաթուղթ ներկայացնելը.
- 3) որևէ այլ եղանակ:

**Կեղծ տվյալներ հայտնելը** համարվում է տվյալ հանցագործության եղանակ, երբ հանցավորն իրականությանը չհամապատասխանող, աղճատված տեղեկություններ հաղորդելով, մոլորության մեջ է գցում համապատասխան պատասխանատու անձին (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին)՝ ընտրողների ցուցակում գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու նպատակով:

**Կեղծ փաստաթուղթ ներկայացնելը** ևս քննարկվող հանցագործության եղանակ է, եթե դա կատարվում է ընտրողների ցուցակում ապօրինի գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու համար: Օրինակ՝ երբ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ ներկայացնելով՝ հանցավորը հանդես է գալիս տվյալ տեղամասային ընտրատարածքում ընտրելու իրավունք ունեցող մեկ ուրիշ անձի անվան տակ:

Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու **այլ եղանակ** ասելով՝ հարկ է հասկանալ ցանկացած եղանակ, որը հնարավոր է դարձնում մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը:

**Սուբյեկտիվ կողմից** այս հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ, ով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն մասնակցել է քվեարկության:

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածի սանկցիայից հանվել է տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի հինգապատիկից յոթապատիկի չափով, ինչպես նաև ազատազրկման նվազագույն շեմն իջեցվել է՝ նախկին երեքից հինգ տարվա փոխարեն նախատեսվել է երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկում, և որպես լրացուցիչ պատժատեսակ սահմանվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հոդվածը լրացվեց 2-րդ մասով, և պատասխանատվություն նախատեսվեց նույն արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կատարելու համար:

### **§ 2.2.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (հոդված 154)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելու, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելու, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելու, քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելու, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելու համար:

### **Հոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը**

**1.Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գոր-**



ծելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգ-հարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկությունը **գաղտնի է**: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

Նույն օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քվեարկության խցիկը պատրաստվում է այնպես, որ ընտրողը կարողանա քվեարկության սենյակում գտնվող անձանցից գաղտնի քվեարկել:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում քվեարկության գաղտնիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Ընդհանուր առմամբ, քվեարկության **գաղտնիության խախտումը** նշանակում է այնպիսի իրադրության ստեղծում, երբ որևէ այլ անձ հնարավորություն է ունենում հսկողություն իրականացնել քաղաքացիների կամքի ազատ արտահայտման նկատմամբ: Օրինակ՝ քվեարկության խցիկների բացակայությունը, տեսանկարահանող սարքերի միջոցով քվեարկության արդյունքն իմանալու հնարավորությունը և այլն:

**Օբյեկտիվ կողմից** արարքը բնութագրվում է քվեարկության գաղտնիությունը խախտելուն ուղղված հետևյալ գործողություններով՝

1) ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելով.

2) քվեարկած քվեաթերթիկը ստուգելով.

3) քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելով.

4) քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելով (օրինակ՝ քվեարկության խցիկում տեսաձայնագրման սարքավորումներ տեղադրելով և այլն):

Ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն **հարկադրելը** կարող է դրսևորվել անձի կամ նրա մերձավորի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելով կամ դրա գործադրման սպառնալիքով, ընտրողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, նրան տարբեր խոստումներ տալով կամ նյութապես շահագրգռելով և այլն:

2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հողվածը լրացվեց 2-րդ մասով, որով պատասխանատվություն նախատեսվեց քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելու, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելու համար:

Հողվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Ի տարբերություն հողվածի 1-ին մասի՝ 2-րդ մասի սուբյեկտը հատուկ է՝ այդպիսին հանդիսանում է քվեարկողը:

Հարկ է նկատել, որ հողվածի 2-րդ մասում երրորդ անձ (այնպիսի անձ, ում ներկայությամբ քվեարկելը առաջացնում է քրեական պատասխանատվություն) չի համարվում միայն քվեարկողին օգնող անձը: Ստացվում է, որ նույնիսկ անչափահասի համար տեսանելի ձևով քվեարկելը հանցագործություն է: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման դեպքերում քրեական հետապնդումը կդադարեցվի՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հողվածի 2-րդ մասի՝ որպես նվազ կարևոր արարք:

Հատկանշական է նաև, որ հողվածի 2-րդ մասում նկարագրված արարքը ժամանակային առումով սահմանափակված չէ, և ստացվում է, որ օրինակ՝ շահադիտական նպատակով քվեարկութ-

յան արդյունքը բացահայտելը նույնիսկ քվեարկությունից տարիներ անց, միևնույնն է, կհանգեցնի քրեական պատասխանատվության՝ անկախ այն հանգամանքից, որ նման դեպքում արարքն, ըստ էության, կորցրած կլինի հանրային վտանգավորությունը: Ուստի, կարծում ենք՝ անհրաժեշտ է նախանշել որոշակի ժամկետային սահմաններ, ինչպես օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 5-րդ մասում:

Հոդվածի 2-րդ մասում տեղ են գտել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը» կամ «քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթուղթ»: Կարծում ենք, որ վերոնշյալ արտահայտությունները տարընկալումների տեղիք են տալիս և չեն համապատասխանում իրավական տեխնիկայի կանոններին, քանի որ իրավական ակտի դրույթները պետք է լինեն հակիրճ, առանց ավելորդ տարրերի (օրինակ՝ «քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի» փոխարեն նպատակահարմար է կիրառել «քվեաթերթիկ» բառը):

**Սուբյեկտիվ կողմից** քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

**§ 2.2.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը (հոդված 154<sup>1</sup>)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>1</sup>-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելու կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելու կամ այլ եղանակով իրացնելու համար:

**Հոդված 154<sup>1</sup>. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը**

1. Անձնական դրողուններով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտը ընտրությունների անցկացման, քվեարկության օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

2016 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցակազմի առարկան ընդլայնվեց, և պատասխանատվություն նախատեսվեց նաև դրոշմանիշեր ու կտրոններ պատրաստելու, հանձնելու կամ իրացնելու համար:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ինքնասուսնծվող **դրոշմանիշը** պաշտպանիչ շերտերով տպարանային եղանակով պատրաստված դրոշմանիշ է, որի վրա նշված են ընտրության անվանման հապավունը, քվեարկության ամսաթիվը և ընտրական տեղամասի համարը: Ինքնասուսնծվող դրոշմանիշը ենթակա է հատուկ հաշվառման:

Քվեարկության կտրոնը տպվում է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացի վերջում և ընդգրկում է հետևյալ տեղեկությունները՝

- ընտրությունների անվանումը, ամսաթիվը,
- ընտրական տեղամասի համարը,
- քվեարկության կտրոնի տպման ժամը,

- ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը,
- ընտրողի անունը, ազգանունը,
- անձը հաստատող փաստաթղթի համարը,
- ընտրողի լուսանկարը, եթե այն առկա է տվյալների շտեմարանում,
- տեխնիկական սարքավորման համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ տեխնիկական սարքավորումում:

Տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվելուց հետո ընտրողը կտրոնը ներկայացնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին: Ընտրողների ցուցակի համապատասխան տողում ընտրողի ստորագրելուց հետո հանձնաժողովի տվյալ անդամն իր անհատական կնիքն է դնում կտրոնի վրա:

Համաձայն «ՀՀ Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի՝ քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեարկության կտրոնը: Հանձնաժողովի անդամն ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը: Հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:

**Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստել ասելով՝ պետք է հասկանալ դրանց լրիվ կամ մասնակի կեղծումը: Ընդ որում, քննարկ-**

վող հողվածի իմաստով պատրաստել է համարվում ոչ միայն ընտրական քվեաթերթիկի կամ քվեարկության ծրարի որևէ ռեկվիզիտ փոխելը, այլև նախատեսվածից ավել ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ թողարկելը: Օրինակ՝ երբ տպարանի աշխատակիցը տպագրում է նախատեսված թվից ավելի քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, հետագայում դրանք իրացնելու նպատակով:

Կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ **հանձնելը** նշանակում է մեկ ուրիշին դրանք փոխանցել, տրամադրել:

Կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ **իրացնելու այլ եղանակ** ասելով՝ տվյալ դեպքում հասկացվում է, հանձնելուց բացի, ցանկացած այլ ձևով դրանք շրջանառության մեջ դնելը: Օրինակ՝ որևէ թեկնածուի «կողմ» ձայների քանակն ավելացնելու համար դրանք վերջինիս կողմնակիցների վաճառելը կամ նվիրելը և այլն:

**Սուբյեկտիվ կողմից** տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սանկցիաներում որպես լրացուցիչ պատիժ նախատեսվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Բացի այդ, հարկ է նշել, որ նախկինում պատախանատվություն էր սահմանվում հողվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար, որը **կատարվել էր խոշոր չափերով**, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում «խոշոր չափերով» բառերը հանվել են: Պատճառն այն է, որ քննարկվող դրույթի բովանդակությունից հետևում էր, որ արարքը կարող էր որակվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 154<sup>1</sup>-ի 2-րդ մասով միայն այն դեպքում, երբ միաժամանակ կատարվել է և՛ խոշոր չափերով, և՛ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը **պարտադիր է**, եթե իրավական ակ-

տում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով: Բացի այդ սահմանված չէր, թե որն է համարվում խոշոր չափ, և քանի որ նորմը պրակտիկայում դարձել էր ոչ կիրառելի, փոփոխությունը միտված էր լուծելու այդ խնդիրը: Մի խումբ անձանց կողմից արարքի կատարումը արդեն իսկ պատասխանատվությունը խստացնող և արարքը որակյալ դարձնող հանգամանք է և բնավ անհրաժեշտ չէ որպեսզի այն իրականացված լինի խոշոր չափերով: Այդ իսկ պատճառով այժմ հողվածի 2-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Քննարկվող հանցակազմի հատկանիշներով հարուցվել և քննվել է հետևյալ դեպքին առնչվող քրեական գործը. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ անցկացվող հանրաքվեի ընթացքում թիվ 10/14 ընտրատեղամասում նշանակված հանձնաժողովի անդամ Ա. Հ.-ն հայտնել է, որ քվեարկության հետ կապված ճշտումներ կատարելու շուրջ վիճաբանել է իրեն անծանոթ հինգ քաղաքացիների հետ, որի ընթացքում նրանցից մեկը հարվածներ է հասցրել իրեն՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Բացի այդ, հիշյալ ընտրատեղամասում ընտրությունների անցկացման ամբողջ ընթացքում գրանցվել են բազմաթիվ խախտումներ, մասնավորապես՝ հանձնաժողովի անդամը կեղծ ստորագրություններ է դրել և կնքել գրանցամատյաններում, որից հետո տարբեր քաղաքացիներ ստացել են ծրարներ և քվեաթերթիկներ, ապա քվեարկել և հեռացել են, նույնիսկ առանձին քաղաքացիներ ներկայացել են ընտրության արդեն իսկ իրենց մոտ եղած ծրարներով և դրանք զցել քվեատուփի մեջ:

Հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը բռնություն գործադրելով զուգորդված խոչընդոտելու, քվեարկության արդյունքները կեղծելու, կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելու դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 150-րդ հոդվածով և 154<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

**§ 2.2.8. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154.2)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ընտրողներին կաշառք տալու, կաշառք ստանալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու համար:

**Հոդված 154.2. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը**

1. Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու պայմանով թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար կաշառք ստանալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որեւէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողի կամ այլ անձի համար կաշառք տալը, այսինքն՝



դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Ընտրողին թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որեւէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ քվեարկելուն կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելով կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.

2) երկու կամ ավելի անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

5. Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չզերազանցող

արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերի կամ առարկաների) տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

**6. Կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք ստանալու մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:**

Նախքան քննարկվող հանցակազմի հատկանիշներին անդրադառնալը՝ հարկ է նշել, որ մինչև 2018 թվականի սեպտեմբեր 30 ՎԻՎ օրենսգրքի 40.10 հոդվածով պատասխանատվություն էր նախատեսվում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) համար:

Վարչական պատասխանատվություն էր նախատեսվում նաև բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու համար:

Ներկայումս, փաստորեն, նշված արարքների համար վարչական պատասխանատվության փոխարեն սահմանված է քրեական պատասխանատվություն:

Այսպես, քննարկվող հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն ընտրությունների անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Լրացուցիչ անմիջական օբյեկտի դերում հանդես են գալիս մարդու կյանքը, առողջությունը, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը:

Նախկինում քննարկվող հոդվածի վերնագիրը՝ «Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը», չէր բխում հոդվածի բովանդակությունից: Այն չէր ներառում կաշառք ստանալու կամ տալու վերաբերյալ դրույթները: Այժմ հոդվածի վերնագիրը համապատասխանում է դրա դիսպոզիցիային:

Արարքի օբյեկտիվ կողմում կատարված լրացումների արդյունքում որպես հանցագործության կատարման եղանակներ նախատեսվել են **կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից)**

**րից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից** ընտրող-ներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը և ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը:

Հարկ է նշել, որ հողվածի առաջին և երկրորդ մասերի իմաստով կաշառքի առարկա են համարվում դրամը, այդ թվում շրջանառության մեջ գտնվող արտարժույթը, արդյունաբերական և այլ տեսակի ապրանքները, թանկարժեք մետաղներն ու քարերը, դրանցից պատրաստված ապրանքները, անշարժ գույքը, ընդհանրապես այն բոլոր նյութական արժեքները, որոնք գին ունեն, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունքը, արժեթղթերը կամ որևէ այլ առավելությունը:

Քննարկվող հողվածի 1-ին և 2-րդ մասերը պատասխանատվություն են նախատեսում կաշառք տալու և կաշառք ստանալու համար, մասնավորապես՝ կաշառք ստանալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը, կաշառք տալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը:

Հողվածի 1-ին մասի օբյեկտիվ կողմը դրսևորվում է **կաշառքի առարկան ստանալու կամ պահանջելու ձևով**: Ընդ որում՝ կաշառքը տրվում է հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելու պայմանով՝

1. թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ քվեարկելու պայմանով,

2. թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին դեմ քվեարկելու պայմանով,

3. ընտրություններին մասնակցելու պայմանով,

4. ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով,

5. մեկից ավելի անգամ քվեարկելու պայմանով,

6. այլ անձի փոխարեն քվեարկելու պայմանով:

Քննարկվող հողվածի 2-րդ մասի օբյեկտիվ կողմը դրսևորվում է վերոնշյալ 6 արարքներից մեկի կատարման պայմանով **կաշառքի առարկան առաջարկելու, խոստանալու կամ տրամադրելու ձևով** (կաշառք տալ):

Քննարկվող հողվածի 3-րդ մասի օբյեկտիվ կողմը դրսևորվում է թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դա-

շինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ քվեարկելուն կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելով, որը կատարվել է՝

ա) գույքին վնաս պատճառելով կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,

բ) ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով,

գ) բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

2018թ.-ի օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվեց լրացում, համաձայն որի՝ պատասխանատվություն նախատեսվեց արարքը ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով կատարելու համար, որի բովանդակությունը բացահայտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը քննարկելիս:

Հոդվածի 4-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կամ երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելու համար:

Հոդվածի 5-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով՝

ա) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերի կամ առարկաների) տալու (խոստանալու),

բ) ծառայություններ մատուցելու (խոստանալու),

գ) բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու համար:

Հանցակազմի առարկան, փաստորեն, գրեթե նույնանուն է կաշառքի առարկայի հետ. այդպիսին հանդիսանում է՝ դրամը, սննդամթերքը, արժեթղթերը, ապրանքները, ընդ որում՝ ի տարբերություն կաշառքի առարկայի այս դեպքում առկա են բացառություններ, դրանք են՝ կուսակցության անվանումը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չզերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերը կամ առարկաները:

Հանցագործության **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է նշված առարկաները անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալու (խոստանալ) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալ) ձևով: Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելով: Վերջինիս նախատեսումը սույն հոդվածում, մեր կարծիքով, տեղին չէ, քանի որ իր բովանդակությամբ լիովին այլ՝ առանձին արարք է, որի համար պատասխանատվությունը պետք է նախատեսվեր ՀՀ քրեական օրենսգրքի առանձին հոդվածով:

Հարկ է նկատել, որ քննարկվող հոդվածի ներկայիս ձևակերպումը խնդրահարույց է այն պատճառաբանությամբ, որ դրա 2-րդ և 5-րդ մասերը, ըստ էության, կրկնում են միմյանց. առաջինը պատասխանատվություն է նախատեսում ընտրակաշառք տալու, իսկ մյուսը՝ քողարկված եղանակով ընտրակաշառք տալու համար: Այսինքն՝ անկախ նրանից, թե 5-րդ մասում նկարագրված արարքը (բացառությամբ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելուց) որպես ընտրակաշառք տալու առանձին եղանակ հանցակազմում ուղղակի ամրագրված կլիներ, թե ոչ, այն կհանդիսանար քրեորեն պատժելի արարք և կհանգեցներ պատասխանատվության նույն հոդվածի 2-րդ մասով:

Անհասկանալի է նաև հոդվածի 5-րդ մասում «խոստանալ» բառը փակագծերի մեջ առնելու հանգամանքը, քանի որ ՀՀ քրեա-

կան օրենսգրքի ոչ մի նորմում երկընտրելի գործողությունները չեն վերցվում փակագծերի մեջ, այլ միմյանցից տարանջատվում են «կամ» շաղկապով, ինչը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջից, որի համաձայն. «Եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով:»:

Ձայների զննման դեպքերի կանխման, նման հանցավոր երևույթները բացահայտելու ու դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քննարկվող հոդվածը պարունակում է **խրախուսական հատուկ նորմ, համաձայն որի՝** կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք ստանալու մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Քննարկվող հոդվածի հետ կապված բերենք նախաքննական մարմնում քննված քրեական գործերից մեկի օրինակը. Գեղարքունիքի մարզի Կուտակյան համայնքի բնակիչ Լ. Մ.-ն հայտնել է նույն համայնքի ղեկավարի թեկնածուի կողմից վերջինիս օգտին կողմ քվեարկելու համար իրեն՝ որպես ընտրողի, անձամբ դրամ տրամադրելու եղանակով կաշառք տալու վերաբերյալ տվյալներ:

Մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի Կուտակյան համայնքի բնակիչ Լ. Մ.-ն հաղորդում է տվել այն մասին, որ 2016թ. հոկտեմբերի 1-ին՝ ժամը 19:25-ի սահմաններում, ինքը հանդիպել է հիշյալ համայնքի ղեկավարի թեկնածուի հետ, ով իրեն 20 հազ. ՀՀ դրամ գումար է տվել՝ 2016թ. հոկտեմբերի 2-ին կայանալիք համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ իր օգտին քվեարկելու համար:

Գեղարքունիքի մարզի Կուտակյան համայնքի բնակիչ Լ. Մ.-ի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նախաքննություն է իրականացրել նաև հետևյալ քրեական գործով. 2016թ. ապրիլի 17-ին

նշանակված՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի քաղաքապետի ընտրության նախօրեին զանգվածային լրատվամիջոցներում՝ էլեկտրոնային լրատվական կայքերում և տպագիր մամուլում հրապարակվել են տեղեկություններ այն մասին, որ քաղաքապետի թեկնածու Ա. Դ.-ի կողմնակիցները բնակչության շրջանում ընտրակաշառք են բաժանել, և որպես հավաստող տվյալներ ներկայացվել են տարբեր անձանց հարցազրույցներ պարունակող տեսանյութեր:

Բացի այդ, 2016թ. ապրիլի 12-ին քաղաքապետի թեկնածու Ս.Ս.-ի նախընտրական շտաբի պետ, ՀՀ ԱԺ պատգամավոր Ն. Փ.-ից ուստիկանության Հրազդանի բաժնում ահազանգ է ստացվել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում ընտրակաշառք բաժանելու մասին, իսկ 2016թ. ապրիլի 17-ին ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ Ն. Փ.-ն երկու հաղորդում է ներկայացրել, որոնցում հղում է կատարել համացանցում հրապարակված տեսանյութերին:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ լրատվամիջոցների հրապարակումներում և Ն. Փ.-ի հաղորդումներում հղում արված տեսանյութերում պատկերված տարբեր անձինք հայտնել են քաղաքապետի թեկնածու Ա. Դ.-ի օգտին կողմ քվեարկելու դիմաց անհայտ անձանց կողմից իրենց գումար տալու կամ գումար խոստանալու մասին:

2016թ. ապրիլի 17-ին՝ Հրազդանի քաղաքապետի ընտրության օրը և դրան նախորդող օրերին թեկնածուի օգտին կողմ քվեարկելու պայմանով կաշառք ստանալու և նույն նպատակով անհայտ անձանց կողմից կաշառք տալու դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 154.2.-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

### **§ 2.2.9. Ձենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը (հոդված 154<sup>4</sup>)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154.4-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային

կենտրոն առանց ծառայողական անհրաժեշտության մուտք գործելու համար:

**Հոդված 154<sup>4</sup>.Ձեռքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը**

**Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝**

**պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:**

Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտը ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Մինչ 2016 թվականի օրենսդրական փոփոխությունները ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>4</sup>-րդ հոդվածն ուներ հետևյալ բովանդակությունը՝ քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության: Տվյալ դեպքում օրենսդիրը տեղամասային կենտրոնը, փաստորեն, նույնացնում էր միայն քվեարկության խցիկի հետ: Այս կապակցությամբ հարց էր առաջանում, թե ինչպես վարվել այն դեպքերում, երբ արարքը կատարվում էր ոչ թե քվեախցիկում, այլ ընտրական տեղամասի սահմաններում գտնվող որևէ այլ տարածքում, օրինակ՝ քվեատուփի մոտ: Ինչպես ուղղակիորեն բխում էր քննարկվող հոդվածի բովանդակությունից, արարքը կարող էր որակվել հոդված 154<sup>4</sup>-ով, եթե հանցավորը ցուցադրաբար և առանց ծառայողական անհրաժեշտության էր զենքով մուտք գործել քվեարկության խցիկ: Վերոգրյալով պայմանավորված՝ նշված հոդվածում կատարվեց փոփոխություն, այն է՝ օրենսգրքի 154<sup>4</sup>-րդ հոդվածից հանվեցին «(քվեարկության խցիկ)» բառերը:

**Ցուցադրաբար** մուտք գործել ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ ոչ միայն զենքը ձեռքում պահելով կամ այն թափահարելով, այլ որևէ այլ կերպ դրա առկայության մասին հասկացնելով, օրինակ, ձեռքը պատյանին դնելով՝ քվեախցիկ մտնելը:

**Ծառայողական անհրաժեշտությունը** քննարկվող իրադրությունում, կարծում ենք, կարող է առկա լինել միայն արարքի հանցավորությունը բացառող այս կամ այն իրավիճակում (օրինակ՝



անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելու): Հետևաբար, ցանկացած այլ դեպքում զենքով քվեարկության խցիկ մտնելու ծառայողական անհրաժեշտությունը բացակայում է:

**Ձեռք** ասելով՝ քննարկվող հողվածի իմաստով պետք է հասկանալ միայն ծառայողական հրազենը կամ սառը զենքը:

**Սուրբեկտիվ կողմից** քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուրբեկտը** հատուկ է՝ զենք կրելու իրավունք ունեցող ծառայողը, ով, կարծում ենք, պետք է նաև քվեարկության նորմալ ընթացքն ապահովելու որոշակի պարտականություններ ունենա<sup>1</sup>:

**§ 2.2.10. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (հողված 154<sup>5</sup>)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>5</sup>-րդ հողվածով պատասխանատվություն է նախատեսվում վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալու համար:

**Հողված 154<sup>5</sup>. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը**

---

<sup>1</sup>Տե՛ս այս մասին առավել մանրամասն «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայի համատեքստում» գիատամբթողական ձեռնարկ, Երևան, 2014, էջ 83-87:

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Ընտրական փաստաթղթերին և ընտրական հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու իրավունք ունենալու համար անհարժեշտ է, որպեսզի տվյալ անձն ընտրությունների ժամանակ ունենա համապատասխան կարգավիճակ՝ լինի վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ, դիտորդ կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ: Նշված անձանց կողմից ընտրական փաստաթղթերին կամ ընտրական հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու հնարավորությունն ամրագրված է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխան հոդվածներում:

Մասնավորապես՝ նշված օրենսգրքի 8-րդ հոդված 11-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա գտնվելու վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ:

Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի և 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն, վստահված անձն իրավունք ունեն՝

- ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում,

- տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին: Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների): Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

Ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն **խոչընդոտելը** կարող է դրսևորվել նշված փաստաթղթերը չտրամադրելով, դրանց տրամադրումն անհարկի ձգձգելով, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տրամադրելով և այլն:

**Սուբյեկտիվ կողմից** տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

### **§ 2.2.11. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154.<sup>6</sup>)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>6</sup>-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

**Հոդված 154<sup>6</sup> Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտն ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

**Օբյեկտիվ կողմից** հանցագործությունը բնութագրվում է անգործությամբ՝ համապատասխան լիազորությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով: Ընդ որում, հանցագործության պարտադիր հատկանիշ է հետևանքը՝ ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփման անհնարինությունը:

**Սուբյեկտիվ կողմից** տվյալ հանցագործությունը բնութագրվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի, որ չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր լիազորությունները, նախատեսի, որ դրա արդյունքում կարող է անհնարին դառնալ ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը և ցանկանա կամ չցանկանա, բայց գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է ընտրական հանձնաժողովի նախագահի հանդիսացող անձը:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ նասի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար, ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար և քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը: Այս եղանակով կատարվում է քվեաթերթիկների հաշվարկ: Ուստի, հանձնաժո-

ղովի նախագահի կողմից այս պարտականության չկատարումը կհանգեցնի սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության, քանի որ առանց դրա անհնարին կլինի ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

Քննարկվող հանցագործության իմաստով հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները ոչ պատշաճ կատարելու օրինակ կարող է լինել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված պարտականությունները չկատարելը: Սասնավորապես, նշված իրավանորմի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Այսպիսով, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 154.6-րդ հոդվածով որակելու համար ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը պետք է հանգեցնի ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփման անհնարինության:

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 154<sup>6</sup>-րդ հոդվածի սանկցիան ունի հետևյալ բովանդակությունը՝ «Պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Նախկինում ազատազրկման հետ կիրառվող լրացուցիչ պատիժ էր որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործու-

նեությանը զբաղվելու իրավունքից զրկելը: Այժմ այն կոնկրետացվել է, մասնավորապես՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելը: Ժամկետային առումով նույնպես կատարվել է փոփոխություն: Եթե նախկին բովանդակությամբ լրացուցիչ պատժի առավելագույն չափ էր սահմանվում, այն է՝ երեք տարի, ապա այժմ սահմանվել է նաև նվազագույն շեմը, այն է՝ մեկ տարի:

**§ 2.2.12. Քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը (հոդված 154.7)**

2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է ընտրական հանցագործությունների վերաբերյալ երկու նոր հոդվածներով, որոնցից մեկը՝ 154.7-րդ հոդվածը, պատասխանատվություն է նախատեսում քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելու համար:

Հոդված 154.7. Քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասուսնծվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը

1. Անձնական դրոշմներով կամ խմբային շահերից ելնելով՝ քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասուսնծվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուցից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքը, որը կատարվել է ընտրական հանձնաժողովի անդամի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Քվեատոււի հափշտակելը մինչև օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարելը նախատեսված էր ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով, սակայն արարքը, այսինքն՝ քվեատոււի հափշտակելն, այն ժամանակ պետք է ունենար ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակ, որպեսզի որակվեր 150-րդ հոդվածով:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.7-րդ հոդվածն արդեն որպես շարժառիթ է սահմանում անձնական դրդումները կամ խմբային շահերը: Այսինքն՝ նախկինում ընտրությունները կամ քվեարկությունը խափանելու նպատակով քվեատոււի հափշտակելը չէր կարող որակվել 150-րդ հոդվածով, իսկ այժմ, շարժառիթով պայմանավորված, կվորակվի 154.7-րդ հոդվածով:

Քննարկվող հանցագործության անմիջական **օբյեկտն** ընտրությունների անցկացման, քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության **առարկան** կազմում են՝

1. քվեատոււիք,
2. ընտրողների ստորագրած ցուցակը,
3. տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
4. հանձնաժողովի կնիքը,
5. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը,
6. ինքնաստանձվող դրոշմանիշը,
7. ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը,
8. ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը,
9. կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեղադրված տեսախցիկը,



10. ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը,

11. ընտրական փաստաթղթերի փաթեթը:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է՝ վերոնշյալ առարակաները կամ դրանցից մեկը հափշտակելով: Քանի որ «հափշտակություն» հասկացության օրենսդրական ձևակերպումը բացակայում է, գործնականում այս արարքի հետ կապված խնդիրներ կարող են առաջանալ, քանի որ տեսական աղբյուրների համաձայն՝ հափշտակություն ասելով՝ հարկ է հասկանալ ուրիշի գույքը ապօրինի անհատույց շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Հափշտակությունը համարվում է ավարտված, երբ հանցավորը գույքը վերցնելուց, իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո իրական հնարավորություն ունի այն տնօրինելու կամ օգտագործելու:

**Սուբյեկտիվ կողմից** քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև **շարժառիթը**՝ անձնական դրդումները կամ խմբային շահերով դրդված լինելը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած մեղսունակ, ֆիզիկական անձը:

2018թ. կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 154.7-րդ հոդվածը լրացվեց 2-րդ և 3-րդ մասերով, որոնք նախատեսում են պատասխանատվություն արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու և ընտրական հանձանժողովի անդամի կողմից կատարելու համար:

**§ 2.2.13. Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը (հոդված 154.8)**

ՀՀ քրեական օրենսգրքի 154.8-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար:

**Հոդված 154.8.** Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը

Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորությամբ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված հայտարարություն) դիմումին կից ներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հարկ է նկատել, որ սույն հոդվածն, ըստ էության, հանդիսանում է սուտ մատնության մասնավոր դրսևորում: Սուտ մատնության հանրային վտանգավորությունը դրսևորվում է նրանում, որ այն խաթարում է իրավապահ մարմինների նորմալ գործունեությունը, որոնք հարկադրված են լինում ուժեր ու միջոցներ վատնել չկատարված հանցագործության բացահայտման համար: Բացի այդ, եթե սուտ մատնությունը վերաբերում է կոնկրետ անձի, ապա խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը:

Հանցագործության **օբյեկտիվ կողմն** են կազմում այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը.

4) քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը ներկայացնում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Նույն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումների ստուգումների կազմակերպման գործում տարածքային ընտրական հանձնաժողովի պահանջով կարող են ներգրավվել ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը և, ըստ անհրաժեշտության, այլ մարմիններ:

Եթե չկան տվյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցությունը հաստատող բավարար ապացույցներ, ապա հավաստիության կանխավարկածի սկզբունքի կիրառմամբ, բացառապես ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելու համար համարվում է, որ տեղի է ունեցել այլ անձի փոխարեն քվեարկություն:

Անկախ տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննության ընթացքից՝ բոլոր դիմումներն ուղարկվում են նաև համապատասխան իրավապահ մարմին:

Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին պետք է կցված լինի որևէ անձի **հայտարարություն** այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել, և այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ:

Հայտարարություն տվողը պետք է նաև գրավոր հավաստի և ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ **սուտ հայտարարություն** տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումի, հայտարարության ձևերը, ինչպես նաև այլ անձի փոխարեն քվեարկելու մասին սուտ հայտարարություն տալու և այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին տեղեկացված լինելու ձևաթղթերը հաստատում է **Կենտրոնական ընտրական հանձնաժողովը**:

Հայտարարությունը պետք է պարունակի հայտարարություն տվողի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաս-

տաթղթի համարը (անձնագրի դեպքում՝ սերիան և համարը), հաշվառման վայրի հասցեն, բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, հայտարարության տրման ամսաթիվը: Հայտարարության մեջ պետք է նաև նշված լինեն քվեարկությանը չմասնակցած ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը, ընտրական տեղամասի համարը, որ ցուցակի ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում: Հայտարարությունը ներկայացվում է բնօրինակով՝ ստորագրված բացառապես հայտարարություն տվող անձի կողմից:

Դիմում ներկայացնողը պետք է գրավոր հավաստի և ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Հայտարարությունը համարվում է կեղծ ստորագրությամբ հայտարարություն, եթե այն ստորագրվել է ոչ այն անձի կողմից, որի անունից տրվում է հայտարարությունը, կամ ստորագրվել է մտացածին անձի անունից: Սույն պարբերությամբ սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքի վրա, երբ դիմումը ներկայացնողը և հայտարարություն տվողը նույն անձն են:

Քննարկվող արարքի **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, չի համապատասխանում իրականությանը: Թեև հանցագործության նպատակը օրենքում որպես հանցակազմի հատկանիշ նշված չէ, բայց ենթադրելի է, որ այդպիսի նպատակ է հանդիսանում անմեղին քրեական պատասխանատվության ենթարկելուն հասնելը:

Հատկանշական է ԵԱՆԴ/0051/01/12 քրեական գործով դատարանի այն մոտեցումը, որ սուտ մատնության հողվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որ անձը հաղորդում ներկայացնելիս հաստատապես գիտակցի իր կողմից տրված հաղորդման իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը, քանի որ հակառակ պարագայում, մասնավորապես, այն դեպքում, երբ անձը ենթադրում է, որ նման հանցագործություն է տեղի ունեցել կամ կատարվել է իր կողմից մատնանշված անձի կողմից, անկախ այն հանգամանքից, թե այդ ենթադրությունը հիմնավոր է եղել, թե՛ ոչ, անձի արարքում հանցակազմը բացակայում է, քանի որ այդ պարագայում առկա չի լինում

սուբյեկտիվ կողմը՝ ուղղակի դիտավորությունը: Հետևաբար, ներկայացված հաղորդման կապակցությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացման պահանջի ապահովումը բխում է նախ և առաջ վարույթն իրականացնող մարմնի շահերից, քանի որ գործի բոլոր հանգամանքների բացահայտման դեպքում կարող է ինքնըստինքյան հիմնավորվել նաև անձի արարքում սուբյեկտիվ կողմի առկայությունը՝ կատարած արարքի գիտակցված լինելն ու դրա արդյունքում առաջացող հետևանքների անխուսափելիությունը:

Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու դեպքում սուբյեկտն ընդհանուր է, քանի որ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումին պետք է կցված լինի **որևէ անձի** հայտարարությունն այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել, և այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին **դիմում ներկայացնող** սուբյեկտը հատուկ է՝ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն, վստահված անձը, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ:

ՀՀ Ազգային ժողովի 02.04.2017 թ. ընտրությունների ավարտից անմիջապես հետո ՀՀ դատախազությունը տարածել էր հաղորդագրություն, որի մեջ, նշվում էր. «...հանցագործություն է նաև այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 154.8-րդ հոդվածով: Քաղաքացու սահմանադրական իրավունքների անշեղ պաշտպանության, հանցագործության համար քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման և, միաժամանակ, հանրությանը բացառապես օբյեկտիվ և ստուգված տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջվել է՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ կետով նախատեսված սուբյեկտների կողմից՝ այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ **սուտ հայտարարություն** տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազուգահեռված լի-

նելով ներկայացված համապատասխան դիմումները, անկախ դրանց քննարկման արդյունքներից, ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն: Միաժամանակ, հորդորում ենք բոլոր այն անձանց, ում հայտնի են դարձել այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ՝ ներկայանալ իրավապահ մարմիններ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածով սահմանված կարգով այդ հանցագործության մասին հաղորդում տալ՝ նախազգուշացվելով **սուտ մատնության** վերաբերյալ քրեական պատասխանատվության մասին: Վստահեցնում ենք, որ վերը նշված օրենքով սահմանված կարգով ներկայացված յուրաքանչյուր հաղորդում լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության առարկա կդառնա»:

#### **§ 2.2.14. Ընտրակաշառքի միջնորդությունը (հոդված 154.9)**

2018թ. կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց 154.9-րդ հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելու համար:

#### **Հոդված 154.9. Ընտրակաշառքի միջնորդությունը**

**1. Ընտրակաշառքի միջնորդությունը՝ ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելը՝**

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգ-հարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

**2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքը կամ պաշտոնից**

**բխող հեղինակությունն օգտագործելով՝**

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Ընտրակաշառքի միջնորդությանը վերաբերող հոդվածով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնելը տրամաբանական էր, քանի որ 154.2-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ընտրակաշառք տալու կամ ստանալու համար, իսկ ընտրակաշառքի միջնորդությանը վերաբերող դրույթը բացակայում էր:

Ընտրակաշառքի միջնորդության **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է նրանում, որ հանցավորը ընտրակաշառք տվողի կամ ընտրակաշառք ստացողի նախաձեռնությամբ կաշառքի առարկան ընտրակաշառք տվողից վերցնում ու փոխանցում է ընտրակաշառք ստացողին, կամ էլ նպաստում է նրանց միջև կաշառքի շուրջ համաձայնություն գալուն: Փաստորեն, ընտրակաշառքի միջնորդը կապող օղակի դեր է կատարում ընտրակաշառք տվողի կամ ընտրակաշառք ստացողի միջև: Ընտրակաշառքի միջնորդը չի կարող համարվել այն անձը, ով ընտրակաշառք տալու կամ ստանալու նախաձեռնողն է:

Ընտրակաշառքի միջնորդը տարբերվում է ընտրակաշառք տվողից նրանով, որ շահագրգռված չէ ընտրակաշառք ստացողի այն գործողություններով (անգործությամբ), որոնք վերջինս պետք է կատարի ընտրակաշառքի դիմաց: Ընտրակաշառք ստացողից ընտրակաշառքի միջնորդը տարբերվում է նրանով, որ ընտրակաշառքի առարկան ընտրակաշառք տվողից վերցնում է ոչ թե իր համար, այլ ընտրակաշառք ստացողին հանձնելու նպատակով:

Ընտրակաշառքի միջնորդությունը պետք է տարբերակել ընտրակաշառք տալուն կամ ստանալուն օժանդակելուց:

Ընտրակաշառք տալու կամ ստանալու օժանդակող է հանդիսանում այն անձը, ով այս կամ այն ձևով նպաստում է ընտրակաշառք տալուն կամ ստանալուն: Ի տարբերություն միջնորդի՝ օժանդակողը կապված չէ կաշառակերության երկու կողմերի հետ և նրանց միջև կապող օղակ չի հանդիսանում: Օժանդակողը գործում է կամ ընտրակաշառք տվողի կամ ընտրակաշառք ստացողի կողմից և նպաստում է նրանցից որևէ մեկի հանցագործությանը: Օժանդակությունը է համարվում օրինակ՝ ընտրակաշառք տվողի համար ընտրակաշառքի առարկա հայթայթելը կամ ընտրակաշառքի առարկան ստացողի փոխարեն վերցնելը:

Ընտրակաշառքի միջնորդության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. անձը պետք է գիտակցի, որ նպաստում է ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի

միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը:

Ընտրակաշառքի միջնորդության **սուբյեկտ** կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքը, որը կատարվել է պաշտոնական դիրքը կամ պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով: Պաշտոնական դիրքն օգտագործելը, ըստ էության, վերաբերում է պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելուն, երբ անձը իր պաշտոնական դիրքը օգտագործում է ծառայության շահերին հակառակ:



### 3. ԸՆՏՐՎԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

#### § 3.1. Ընտրական հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը

Ընտրական հանցագործությունների ամբողջական պատկերի ու դրանց քննության օրինաչափությունների բացահայտման նպատակով, նախևառաջ, անհրաժեշտ է ուսումնասիրել այս հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը: Այլ կերպ ասած՝ առանց խորությամբ ընկալելու այս տեսակ հանցագործությունների կատարման մեխանիզմի ընդհանուր բնութագիրն ու առանձնահատկությունները, հնարավոր չէ կազմակերպել դրանց արդյունավետ ու որակյալ քննությունը, առավել ևս՝ մշակել ու կատարելագործել քննության մասնավոր մեթոդիկաները:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի սահմանումը մասնագիտական գրականության մեջ միանշանակ չի ընդունվում: Մասնավորապես, Ի. Ս. Լուզգինի բնորոշմամբ՝ այն պետք է դիտարկել որպես հանցագործության դեպքի տեղեկատվական մոդել, որն իրականացնում է մի շարք գործառույթներ<sup>1</sup>: Որոշ հեղինակներ հանցագործության կրիմինալիստիկական բնութագրում ներառում են նաև հանցագործության քննության բնութագիրը: Մասնավորապես Վ. Կ. Գավլյոյի առաջարկած և նրա հետնորդների կողմից զարգացված՝ հանցագործությունների քննության մեթոդիկայի տեսական հայեցակարգի համաձայն՝ հանցագործությունների քննության մեթոդիկայի հիմքը կազմում են հանցագործությունների կրիմինալիստիկական և այդ տեսակի հանցագործությունների քննության բնութագրերը<sup>2</sup>:

<sup>1</sup> Ст'у Криминалистическая характеристика преступлений. Сборник научных трудов. М., 1984, էջ 106:

<sup>2</sup> Ст'у **Гавло В. К.** Теоретические и методологические основы и функции системы криминалистической методики расследования преступлений // Правовая реформа и актуальные вопросы борьбы с преступностью. Владивосток, 1994, էջ 133; **Гринькин В. А.** Теоретические проблемы и практика расследования убийств лиц, занятых в сфере бизнеса: Автореф. дис.... канд. юрид. наук. Барнаул, 2000, էջ 11; **Бобуа З. Б.** Расследование и предупреждение краж, совершаемых в сфере промышленного производства: Автореф. дисс.... канд. юрид. наук. Кемерово, 1999, էջ 8:

Հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը կազմված է հանցագործության բոլոր հատկանիշների վերաբերյալ տվյալներից, ինչպես նաև այնպիսի փաստերից, որոնք, խիստ ասած, ոչ մի կերպ չեն դասվում հանցագործության հանգամանքների թվին, սակայն դրանք բոլոր դեպքերում կապված են հանցագործության հետ և պարունակում են քննությանը հետաքրքրող տեղեկատվություն<sup>1</sup>:

Հանցագործության կրիմինալիստիկական բնութագիրն ունի բավականին բարդ կառուցվածք: Որպես կանոն այն ներառում է՝

- որոշակի տեսակի հանցանքի կատարմանը նպաստող տիպային հանգամանքների վերաբերյալ տվյալները,
- տիպային ելակետային տվյալները,
- հավանական հանցագործի անձի և հանցագործության հավանական շարժառիթների և նպատակների վերաբերյալ տվյալները,
- հանցագործության հավանական տուժողի անձի և հանցագործության տիպային առարկայի վերաբերյալ տվյալները,
- հանցանքի իրականացման որոշակի տիպային հանգամանքների (տեղի, ժամանակի, պարագաների) վերաբերյալ տվյալները,
- տվյալ տեսակի հանցանքի կատարման և քողարկման տիպային միջոցների վերաբերյալ տվյալները և դրանց օգտագործման տիպային հետևանքները:

Վերը ներկայացված կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում արտահայտված են բոլոր այն տիպային հանգամանքները, որոնք ենթակա են պարզաբանման տվյալ տեսակի քրեական գործերով ապացուցման առարկային համատեքստում:

Հանցագործության կրիմինալիստիկական բնութագրի՝ որպես մասնավոր կրիմինալիստիկական մեթոդիկայի տարրի ամբողջական դիտարկման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև հանցագործության կրիմինալիստիկական մեխանիզմի բովանդակությունը, ինչպես նաև դրա փոխհարաբերակցությունը հանցագործության կրիմինալիստիկական բնութագրի հասկացության հետ:

Պետք է նշել, որ հանցագործության մեխանիզմի հիմնական տարրեր կարելի է համարել՝

---

<sup>1</sup> Տե՛ս Կրիմиналистика социалистических стран. Под ред. *В. Я. Колдина*. М., 1986, էջ 123:

- հանցագործության սուբյեկտի (հանցագործի, հանցավոր խմբի, նախնական համաձայնությամբ հանցավոր խմբի, կազմակերպված հանցավոր խմբի) գործունեությունը (առավել հազվադեպ՝ առանձին գործողություններն ու վարքագիծը),

- տուժողի գործողությունների և այլ վարքագծի համակարգը (համակցությունը),

- հանցանքի կատարման հետ անուղղակի կապված անձանց գործողությունները և այլ վարքագծի համակարգը (համակցությունը),

- հանցագործության մասնակիցների կողմից օգտագործվող՝ հանցավոր իրադրության առանձին տարրերը, հանցավոր ոտնձգության առարկան:

Այս տարրերը կազմում են հանցագործության մասնակիցների և շրջակա միջավայրի միջև փոխազդեցության հիմնական համակարգը: Դրանց թվում են հանցագործը, տուժողը, հանցագործության ուղղակի կամ անուղղակի այլ մասնակիցները, ոտնձգության առարկան, հանցավոր նպատակին հասնելու համար ընտրված գործիքներն ու միջոցները, հանցավոր իրադրության տարրերը և այլն<sup>1</sup>:

Այսպիսով, ընտրական գործընթացների ժամանակ կատարվող հանցագործությունների կրիմինալիստիկական ամբողջական բնութագրի բացահայտման համար անհրաժեշտ է համադրել տարբեր բնագավառների գիտելիքները (քրեական իրավունք, կրիմինալոգիա, սոցիոլոգիա և այլն) և գիտական տվյալները՝ ընտրական գործընթացների մասնակիցների, դրանց առանձին շերտերի, հանցավոր գործողությունների տիպային մոդելների և այլ օրինաչափությունների բացահայտման ու բնութագրման համար: Նշված նպատակը ձեռք է բերվում հաջորդական կամ միաժամանակյա մտավոր և նյութական գործողությունների իրականացման ճանապարհով թեկնածուների և ընտրողների վրա ազդեցություն գործելու, ընտրական փաստաթղթերի սկզբնական բովանդակության մեջ փոփոխություններ մտցնելու և այլ եղանակներով՝ այդպիսով անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով ազդելով ընտրության արդյունքների վրա: Բացի դրանից, այդ նպատակին հասնելու համար կարող են գործի են դրվել ամենա-

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Ենգիբարյան Վ. Պ.** Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: Բուհական դասագիրք: Երևան, 2017, էջ 37:

տարբեր միջոցներ, ինչպես նաև օգտագործել տարբեր հանգամանքներ, որոնք ուղղված են վերը նշված գործողությունների նախապատրաստմանը և կատարմանը:

Հաշվի առնելով ընտրական հանցագործությունների կատարման մեխանիզմի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց քննության օրինաչափությունները՝ կարող ենք փաստել, որ այս տեսակ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի առավել էական տարրերից են՝

- **հանցագործության կատարման իրադրությունը,**
- **հանցագործի տիպային անձը,**
- **հանցագործության կատարման եղանակը:**

Կրիմինալիստիկայի գիտության մեջ իրադրություն ասելով՝ հասկացվում է անձանց, առարկաների, երևույթների, որևէ գործունեություն կատարելու համար նպաստավոր այլ գործոնների որոշակի համակցություն: Մասնավորապես, հանցավոր իրադրությունը բաղկացած է տարբեր նյութական օբյեկտների, երևույթների, գործընթացների, վիճակի և հարաբերությունների համակցությունից, որոնք համապատասխան պայմաններ են ստեղծում որոշակի գործողությունների կատարման համար կամ խոչընդոտում են դրանց կատարումը: Բոլոր այս գործողությունները կատարվում են որոշակի պայմաններում՝ նյութական պայմաններ, ժամանակ, լուսավորություն, բնական կլիմայական գործոններ, արտադրական գործունեություն, կենցաղ, շրջապատող անձինք<sup>1</sup>:

Նշված պայմանները և հանգամանքները, որոնք դրսևորվում են որոշակի պահերի և ազդում են հանցավոր դեպքի վրա, ընդհանուր առմամբ անվանվում են հանցավոր իրադրություն: Հանցագործը և տուժողը ստիպված են հաշվի առնել այդ իրադրությունը՝ այն հարմարեցնելով հոգուտ իրենց հանցավոր մտադրությունների իրականացման:

Հանցագործության մեխանիզմի կառուցվածքում հանցավոր իրադրության տարրերը կարող են էական նշանակություն ունենալ: Վերջիններն ունակ են էական ազդեցություն գործել հանցավորի գոր-

---

<sup>1</sup> Տե՛ս Криминалистика: Учеб. для вузов / Под ред. *Р. С. Белкина*, 2-е издание, переработанное и дополненное. М., Изд. ,Норма, 2006, էջ 503:

ծողությունների և տուժողի վարքագծի վրա (օրինակ՝ եղանակային անբարենպաստ պայմանները կամ մարդկանց բացակայությունը), ընդհուպ՝ հանցագործության բնույթի փոփոխության վրա: Յնարավոր է նաև իրադրության ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը հանցագործի և տուժողի գիտակցության վրա: Ընդհանուր առմամբ հանցավոր իրադրությունը բնութագրում է այն պայմանները, որոնցում գործել են հանցագործության բոլոր մասնակիցները:

Ընտրական հանցագործությունների դեպքում հանցագործության իրադրությունը՝ որպես արտաքին միջավայր, որում տեղի է ունենում հանցագործությունը, կամ որի պայմաններում իրականացվում են հանցավոր գործողությունները, սերտ կապված է հանցավոր մեխանիզմի այլ տարրերի հետ, մասնավորապես, այդ կապն առավել ցայտուն է արտահայտվում հանցավորի անձի և հանցագործության կատարման եղանակի միջև: Ընդ որում, իրադրության տարրերի շարքում էական նշանակություն ունեն հանցագործության կատարման տեղը և ժամանակը, ընտրողների վարքագծի առանձնահատկությունները:

Պետք է նշել, որ ընտրական հանցագործությունների մեխանիզմում հանցագործության կատարման իրադրությունը միանգամայն առանձնահատուկ բնույթ ունի, քանի որ այն պայմանավորված է որոշակի ժամանակաշրջանով, այն է՝ ընտրությունների, հանրաքվեների անցկացման ժամանակահատվածը, որոնք նախապես հայտնի, որոշված օրեր են: Ընդ որում, ընտրական իրավունքների խախտումները, այդ թվում նաև՝ ընտրական հանցագործությունները կարող են կատարվել ինչպես բուն ընտրության կամ հանրաքվեի օրը, այնպես էլ դրան նախորդող և հաջորդող օրերին:

Այսպես, մեր ուսումնասիրած 53 քրեական գործերի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից 6-ը հարուցվել են նախքան ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրը կատարված դեպքերի առթիվ, 44-ը՝ ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրը կատարված դեպքերով և միայն 3-ը՝ դրան հաջորդող օրերին կատարված դեպքերով կամ այդ ժամանակահատվածում: Ընդհանրացնելով՝ կարող են արձանագրել 2015-2017թթ. ընթացքում քննված ընտրական հանցագործությունների գործերով դրանց կատարման ժամանակագրական հետևյալ պատկերը՝

- մինչև ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրը՝ 10 %

- ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրը՝ 89,5%
- ընտրության կամ հանրաքվեի անցկացման հաջորդող օրերին՝ 0,5%

Ընտրական հանցագործությունների կատարման ժամանակով պայմանավորված՝ հանցագործության կատարման տեղեր կարող են հանդիսանալ հասարակական տարբեր վայրեր (ընտրատեղամասեր, բակեր, փողոցներ, թեկնածուի գրասենյակներ, ընտրական շտաբներ), ընտրողների բնակարաններ և այլն: Սակայն առավել հաճախ որպես այդպիսիք հանդես են գալիս ընտրական տեղամասերը:

Այսպես, մեր ուսումնասիրած քրեական գործերից մեկով Ա. Գ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Երևան քաղաքի Շիրակի 3 հասցեում գտնվող թիվ 52 դպրոցում տեղակայված ԶԶ կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 8 ընտրատարածքի 54 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, ԶԶ Երևան քաղաքի ավագանու ընտրությունների քվեարկության օրը՝ 2017թ. մայիսի 14-ին՝ ժամը 14:02-ին, քաղաքացի Լ. Ս.-ի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դիտավորությամբ, մինչև քվեաթերթիկը և ծրարը փոխանցելը քվեաթերթիկում իր նախընտրած կուսակցության դիմաց համապատասխան նշում կատարելու միջոցով քվեարկել է Լ.Ս.-ի փոխարեն, որից հետո արդեն իսկ քվեարկած քվեաթերթիկն ու ծրարը հանձնել է նրան՝ այդ կերպ խոչընդոտելով վերջինիս ընտրական իրավունքի ազատ իրականացմանը:

Այսպիսով, Ա. Գ.-ին մեղսագրվել է արարք, որը նախատեսված է ԶԶ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելը<sup>1</sup>:

Ինչպես նկատում ենք, տվյալ դեպքում ընտրական հանցագործությունը կատարվել է որոշակի հատկանշական վայրում և ժամանակում, այն է՝ ընտրական տեղամասում (քվեարկության վայրում) ընտրության անցկացման օրը՝ քվեարկության պահին:

Ինչ վերաբերում է իրադրության տարրերից՝ ընտրողների վարքագծի առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ անձինք, ուն ձայները «գնվում» են, անտարբերություն են դրսևորում քաղաքա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ, քրեական գործ № 11200517՝ ըստ մեղադրանքի Ա. Ռ. Հովհաննիսյանի:

նության, ընտրական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ, փոխարենը հետաքրքրված են իրենց ձայնի համար պարզևատրոման չափով:

Ընտրական հանցագործությունների մեխանիզմի կարևոր տարրերից են նաև տիպային հանցագործի անձը բնութագրող տվյալները, որոնք իրենց համակցության մեջ հնարավորություն են տալիս ոչ միայն կանխատեսել կամ պարզել անձի ինքնությունը, այլ նաև ընտրել վերջինիս հետախուզման ու մերկացման համար արդյունավետ մեթոդներ ու միջոցներ:

Այս տեսանկյունից, թերևս, կարելի է համաձայնել Օ. Յու Անտոնովի և Վ. Ի. Ելինսկու հետ, ովքեր նշում են, որ ներկայումս գործնականում անհնար է այն թեկնածուի ընտրությունը, ով նախընտրական քարոզարշավին գործում է միայնակ, քանի որ վերջինս չի կարող որպես թեկնածու գրանցվելու համար հավաքել անհրաժեշտ ստորագրություններ: Այդ նպատակով հավաքագրվում և միավորվում են բազմաթիվ անձինք, ովքեր վերջինիս աջակցություն են ցուցաբերում: Ուստի, երբ նախընտրական քարոզարշավի ընթացքում թույլ են տրվում ընտրական օրենսդրության խախտումներ, ապա դրանք, որպես կանոն, կատարվում են նախընտրական շտաբի անդամների կամ համագործակցող այլ անձանց կողմից<sup>1</sup>:

Ըստ այդմ՝ ընտրական գործընթացներին մասնակից են դառնում տարբեր անձինք, ովքեր ունեն տարբեր մտավոր, սոցիալական զարգացվածության աստիճան, հնարավորություններ և այլն: Սակայն վերջիններիս միավորում է մեկ ընդհանուր նպատակ՝ իրենց թեկնածուի հաղթանակը, որի հետ վերջիններս կապում են իրենց որոշակի պահանջների իրականացման հնարավորությունը՝ որոշակի պաշտոնի նշանակվելու, որոշակի դրամական պարգևի, պարտքի մարման կամ զիջման և այլն:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ կարող ենք առաձնացնել ընտրական հանցագործությունների հետ առնչություն ունեցող անձանց երեք հիմնական խումբ.

---

<sup>1</sup> St´u **Антонов О. Ю., Елинский В. И.** Криминалистическая характеристика субъектов, совершающих преступления, связанные с проведением избирательных кампаний и референдумов // Российский следователь. 2011. №11, էջ 4:

1. **անձինք, ովքեր ընտարական գործընթացների հետ առնչվում են ի պաշտոնն` ընտրական հանձնաժողովի անդամներ, սպասարկող անձնակազմ և ուրիշներ,**

2. **անձինք, ովքեր որոշակի կապեր ունեն թեկնածուի հետ` թիմի անդամներ, վճարովի աշխատողներ, ընտանիքի անդամներ, ընկերներ, բարեկամներ և ուրիշներ,**

3. **անձինք, ովքեր անմիջականորեն առնչություն չունեն վերը նշված երկու խմբերի անձանց հետ` պատահական անձինք, լրագրողներ, կանավորներ, ակտիվիստներ և ուրիշներ:**

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ընտրական հանցագործությունների հնարավոր մասնակիցների կազմը միատարր չէ: Այն բաղկացած է տարբեր խմբերից` կազմակերպիչներ և դրդիչներ, նրանց ակտիվորեն օժանդակող անձանց խմբեր և այլք: Ընդ որում` վերջիններս անմիջականորեն չեն մասնակցում ընտրական հանցագործությունների կատարմանը, սակայն ակտիվացնում են թիմի գործունեությունը:

Միաժամանակ քննչական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն խմբակային այլ տեսակի հանցագործությունների, ընտրական հանցագործությունների քննության ընթացքում քրեական պատասխանատվության են ենթարկվում և հետագայում դատապարտվում են առավել մեծ թվով անձինք:

Ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նյութերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք առանձնացնել այս տեսակի հանցագործությունների սուբյեկտների երեք հիմնական խումբ.

1. *Անձինք*, ովքեր անմիջական մասնակցություն են ունենում ընտրական գործընթացի կազմակերպմանն ու անցկացմանը, օրինակ` ընտրական հանձնաժողովի անդամները,

2. *Անձինք*, ովքեր հանցագործությունների կատարմանը մասնակցում են տարբեր եղանակներով, օրինակ` պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, դիտորդներ, թեկնածուի նախընտրական շտաբի ներկայացուցիչներ և ուրիշներ, ովքեր հիմնականում հանդես են գալիս կազմակերպիչի դերում և օգտագործում են իրենց վարչական ռեսուրսները:



3. *Անձինք*, ովքեր հանցագործությունը կատարում են՝ նյութական շահագրգռվածությունից ելնելով, օրինակ՝ նյութապես անապահով անձինք:

Ընտրական հանցագործություններ կատարող անձանց հնարավոր է դասակարգել՝ ըստ տարբեր խմբերի, սակայն այս տեսակ հանցագործությունների քննության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից առավել կարևորվում է դրանք կատարող անձանց դասակարգել՝ ըստ կարգավիճակի և իրականացվող գործառույթների: Ըստ այդմ՝ մանօրինակ դասակարգման հիմքում մատակարարմար է դիտարկել հանցագործության սուբյեկտի պաշտոնատար անձ հանդիսանալու հանգամանքը: Այս տարբերակն ընտրական հանցագործությունների առավել ամբողջական ուսումնասիրման տեսանկյունից առավել արդարացված է, քանզի թույլ է տալիս ոչ միայն կանխատեսել կատարված հանցավոր գործողության մեխանիզմը՝ ամբողջական շղթան, այլ նաև դատողություններ անել հանցագործության մատակարարման, հետքերը թաքցնելու հնարավոր եղանակների, դրանց, ինչպես նաև հնարավոր առնչակից անձանց հայտնաբերման և, վերջին հաշվով, քննությանը հնարավոր հակազդման մեխանիզմների մասին:

Անշուշտ, պաշտոնատար անձի կողմից ընտրական հանցագործությունների կատարմանը ներգրավված լինելու փաստն ինքնին որոշիչ նշանակություն է ունենում ոչ միայն քննության պլանավորման, վարկածների առաջադրման, այլ նաև՝ քննության ընդհանուր տակտիկական ուղղվածության՝ տակտիկական գծի ընտրության համար:

Այսպես, մեր ուսումնասիրած 53 քրեական գործերի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես մեղադրյալ ներգրավված 18 անձանց շարքում.

- պաշտոնատար անձինք՝ տեղամասային հանձնաժողովի մատակարար կամ անդամներ են՝ 9-ը (50%),

- ոչ պաշտոնատար անձինք՝ 9 (50%), այդ թվում 1 լրագող և 1 դիտորդ:

Հարկ է նկատի ունենալ, որ ընտրական հանցագործություններն առավելապես կատարվում են խմբակային եղանակով: Ընդ որում՝ կազմակերպիչներն ու կատարողները, որպես կանոն, բնակության և աշխատանքի վայրում դրական են բնութագրվում, ընտրական հանձ-

նաժողովներում և նախընտրական շտաբներում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ: Վիճակագրական տվյալները փաստում են նաև, որ վերջիններս նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված կամ դատապարտված անձինք չեն, և հանցավոր գործունեության մեջ ներգրավվելու հիմնական դրդապատճառը շահն է, այսինքն՝ վերջիններիս գործունեության համար վճարվում է անմիջականորեն պատվիրատուի կողմից՝ ընտրություններում հաղթանակ տանելու նպատակով: Բացի դրանից, վերջիններիս հիմնականում բնութագրական է նաև այն, որ նրանք ներգրավված են լինում ձեռնարկատիրական գործունեության մեջ, ղեկավարում են բանկային, ֆինանսական կամ այլ կառույցներ, ունեն լավ կապեր գործադիր իշխանության մարմիններում, իրավապահ համակարգերում և այլն: Յատկանշական է, որ այս խմբի մեջ մտնող անձինք հիմնականում հանդես են գալիս կազմակերպիչի դերում և անմիջականորեն հանցագործությունների կատարմանը չեն մասնակցում, թեև իրենց տրամադրության տակ առկա ֆինանսական, վարչական և այլ ռեսուրսներով աջակցում են հանցավոր նպատակի իրականացմանը:

Քանի որ վերջիններս անմիջական մասնակցություն չեն ունենում հանցավոր գործողությունների կատարմանը, նրանց հայտնաբերելու, մեղքն ապացուցելու և քրեական պատասխանատվության ենթարկելու համար առաջանում են լուրջ դժվարություններ:

Ընտրական հանցագործությունների մեխանիզմում հատկանշական է նաև այն, որ իշխանության համար մղվող պայքարի շրջանակներում իրականացվում են ընտրական իրավունքների դեմ ուղղված տարատեսակ հանցագործություններ, մինչդեռ պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ ընտրական իրավունքների խախտումներ են ավելի շատ են, քան հարուցված քրեական գործերն ու քրեական պատասխանատվության ենթարկված անձինք: Դրա պատճառները կարող են տարբեր լինել. տարբեր մարմինների կողմից ներկայացվող վիճակագրական տվյալների անհամապատասխանությունը, քաղաքացիների կողմից ընտրական գործընթացների նկատմամբ անտարբերությունը, ձևավորված անպատժելիության մթնոլորտը, անվստահությունը պետական մարմինների նկատմամբ և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այս տեսակ հանցագործություններն ունեն լատենտայինության բարձր մակարդակ, ինչը

լուրջ խոչընդոտներ է առաջացնում այս հանցագործությունների քննության համար:

Հարկ է նշել, որ ընտրական հանցագործությունները երբեմն կապված են լինում պաշտոնական և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետ, ինչն էլ ավելի է դժվարացնում դրանց բացահայտման գործընթացը: Այն, որ ընտրական հանցագործություններին տարբեր եղանակներով կարող են մասնակցել ինչպես պաշտոնատար, այնպես էլ ոչ պաշտոնատար անձինք՝ միջնորդներ, կաշառք տվողներ և ուրիշներ, ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործություններին կազմակերպված հանցագործության բնույթ է հաղորդում:

Ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունը վկայում է այս տեսակ հանցագործությունների կատարման եղանակների բազմազանության մասին: Ընդ որում՝ դրանց շարքում հարկ է նկատի ունենալ այնպիսի ընդհանրական եղանակներ, ինչպիսիք են, օրինակ՝ իրավակական բնույթի՝ օրենսդրության բացերն օգտագործելը, իրավական որոշ դրույթները շրջանցելը, ֆինանսական բնույթի՝ տարբեր միջոցներով անձանց կաշառելը և այլն, որոնք հիմնականում կապված են թեկնածուի ֆինանսական հնարավորությունների հետ:

Բացի դրանից, որոշ դեպքերում այս տեսակ հանցագործությունների կատարման եղանակները պայմանավորված են դրանց կատարման իրադրությամբ, օրինակ՝ տարածքային հեռավորությունը, մարդկային ռեսուրսների անկառավարելիությունը, ընտրական գործընթացների վերահսկման նպատակով նորագույն տեխնոլոգիաների ներդրումը և այլն:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ սահմանված ընտրական հանցագործությունների կատարման եղանակների տեսանկյունից վերջիններս կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. ընտրական իրավունքների դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործություններ, (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 152-154.1-րդ, 154.4-154.8-րդ հոդվածներ),

2. ընտրական իրավունքների դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործություններ (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ, 154.9-րդ հոդվածներ),

3. ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործություններ, որոնք ուղեկցվում են բռնության կիրառմամբ կամ խաբեությամբ (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ, 154-րդ, 154.2-րդ հոդվածներ):

Հանցագործության կատարման եղանակի պարզաբանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն դրա ամբողջական պատկերի բացահայտման, այլ նաև հնարավոր բոլոր առնչակից անձանց հայտնաբերման համար: Այս իմաստով, հարկ է նշել, որ ընտրական հանցագործությունները, որպես կանոն, ընդգրկում են նախապատրաստման, կատարման և հանցագործության հետքերի քողարկման փուլերը:

Մեր ուսումնասիրության արդյունքներով՝ կարող ենք փաստել, որ նշված փուլերի շրջանակում կարելի է ընդգրկել հետևյալ գործողությունները՝ անձանց հավաքագրելը, գործողությունների պլանի կազմումը, դերերի նախնական բաշխումը, ընտրակաշառքի չափի սահմանումը և այլն՝ որպես նախապատրաստական փուլի տարրերի, քվեարկության գաղտնիությունը խախտելը՝ որպես կատարման փուլի տարրի և տեսաձայնագրությունները վերացնելը՝ որպես հանցագործության հետքերի քողարկման փուլի տարրի:

Մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են ընտրական հանցագործությունների կատարման եղանակների բազմազանության մասին: Այս իմաստով միանգամայն համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ ժամանակակից հանցավորությունն արագ կերպարանափոխվում է, ի հայտ են գալիս հանցագործությունների կատարման նոր եղանակներ : Ասվածն առավել հրատապ է ընտրական հանցագործությունների համար՝ նկատի ունենալով զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ընտրական գործընթացներում, ինչպես նաև դրանց կիրառումն ընտրական գործընթացների թափանցիկության և վերահսկելիության ապահովման նպատակով: Այդ համակարգերի ու տեխնիկական միջոցների ներդրումները լուրջ մարտահրավերներ են ընտրակեղծարարների համար և «ծեռնոց են նետում» վերջիններին՝ իրենց հանցավոր նպատակներին հասնելու համար նոր՝ ոչ ավանդական եղանակներ որոնելու և կիրառելու:

Այսպես, նախընտրական քարոզարշավի ընթացքում հիմնականում իրականացվում են հետևյալ հանցավոր արարքները. հակամարկետինգ, ընդհուպ՝ հակառակորդին վարկաբեկող, նշավակող տեղեկություններ տարածելը, ընտրողներին հավաքագրելը, սեփական վարկանիշի բարձրացումը, վարկանիշերի միջոցով քարոզչության (հակաքարոզչության) տեխնոլոգիայի կիրառումը, քարոզարշավի նյութերի վնասումը կամ ոչնչացումը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական փաստաթղթերի կեղծումը, բովանդակության խեղաթյուրումը, նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման կարգի ու պայմանների խախտումները և այլն: Նախընտրական քարոզարշավի կատարելագործման հետ միաժամանակ ի հայտ են գալիս հանցավոր ոտնձգությունների կատարման նոր եղանակներ, մասնավորապես, այսպես կոչված «սև փիարի» տեխնոլոգիայով ՋԼՄ-ներին, սոցիալական և այլ ցանցերն օգտագործելը, նախընտրական քարոզարշավի վերջին օրերին կամ ընտրությանն անմիջականորեն նախորդող օրերին թեկնածուին վարկաբեկող նյութերի հրապարակումը և տարածումը և այլն:

Ընդ որում, որոշ հեղինակների կարծիքով՝ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել քրեական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարել և քրեականացնել վերը նշված և այլ եղանակներով կատարվող ընտրական հանցագործությունները<sup>1</sup>:

Բացի դրանից, վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ ընտրական հանցագործությունների կատարման տարածված եղանակներից են նաև կրկնաքվեարկությունը կամ, այսպես կոչված, «կառուսելը», նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման կարգի խախտումը, կեղծ՝ դրածո թեկնածուի ընդգրկումն ընտրական գործընթացին և այլն: Սակայն պետք է նշել, որ ժամանակակից տեխնոլոգիաներով անձին անհատականացնող մեթոդների ներդրումը քվեարկության գործընթացում էապես նվազեցնում կամ գրեթե բացառում է կրկնաք-

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Матеева М.Х.* Особенности охраны избирательных прав граждан и права на участие в референдуме в уголовном законодательстве России и стран постсоветской Азии: правовой аспект // Алтайский юридический вестник. 2015. № 4 (12), էջ 92; *Невинский В.В.* Конституционное право граждан на судебное обжалование решения избирательной комиссии об итогах голосования на выборах // Российская юстиция. 2013. № 11, էջ 2:

վեարկության հնարավորությունը: Մեր ուսումնասիրած քրեական գործերի նյութերի արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական հանցագործությունները Հայաստանի Հանրապետության տարածքում վերջին տարիներին կատարվում են տարաբնույթ եղանակներով, որոնք ունեն տարածվածության տարբեր աստիճան, մասնավորապես՝ օբյեկտիվ կողմից դրանք դրսևորվում են հետևյալ կերպ.

- բռնություն լրագրողի նկատմամբ, լրագրողական գործունեությանը խոչընդոտելը- 12 դեպք կամ 22.2%,

- բռնություն դիտորդի/վստահված անձի նկատմամբ, նրանց գործունեությանը խոչընդոտելը- 6 դեպք կամ 11.1 %

- կաշառելը- 7 դեպք կամ 13 %

- խաբեություն/կեղծիք- 23 դեպք կամ 42.6 %, որից այլ անձի փոխարեն քվեարկելու 4 դեպք կամ 7.4 %, հանրաքվեի ժամանակ այո քվեաթերթիկներն ավելացնելու, ոչ-ը պակասեցնելու 6 դեպք կամ 11.1 %,

- այլ խախտումներ- 6 դեպք կամ 11.1 %:

Ընտրական հանցագործությունների կատարման արդյունքում առաջանում են այս հանցագործությանը բնորոշ հետքեր: Այս տեսակ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը ցույց է տալիս, որ դրանց կատարման արդյունքում առաջանում են նաև այնպիսի հետքեր, որոնք առավելապես բնորոշ են պաշտոնեական հանցագործություններին:

Ընտրական հանցագործությունները բազմատարր են, ընդգրկում են, ավելի քան տասնյակ առանձին հանցավոր գործողություններ<sup>1</sup>, որով էլ կարելի է բացատրել այս տեսակ հանցագործությունների կրիմինալիստիկական մեխանիզմի բարդությունն ու կրիմինալիստիկական բնութագրի բազմաբովանդակ բնույթը:

Ընդհանրացնելով՝ կարելի է մշել, որ ընտրական հանցագործությունների մեխանիզմը բարդ, բազմաբովանդակ, դինամիկ համակարգ է, որը ձևավորվում է համապատասխան արդյունքին հասնելու համար

---

<sup>1</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *Енгибарян В. Г.* Криминалистическая теория расследования массовых беспорядков (по материалам Республики Армения и Российской Федерации): Монография/ под науч. ред. засл. юриста Российской Федерации, докт. юрид. наук, проф. А. М. Кустова. М., Юрлитинформ, 2014, էջ 122:

հանցագործության սուբյեկտների, հանցագործության տուժողների և այն անձանց գործողություններից, ովքեր դարձել են համապատասխան պայմաններում ու հանգամանքներում կատարվող հանցագործությունների մասնակիցներ (ակտիվ կամ պասիվ), և որոնց ամբողջությունը բնորոշում է հանցագործությունը կատարելու և այն թացնելու մեթոդը, հանցագործության մեխանիզմի տարրերի միջև կապերն ու հարաբերությունները:

### **§ 3.2. Քննչական իրադրության և պարզաբանման ենթակա հանգամանքների առանձնահատկություններն ընտրական հանցագործությունների վերաբերյալ գործերով**

Ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների քննությունն իրականացվում է ժամանակի, տեղի, շրջակա միջավայրի, օբյեկտիվ իրականության մյուս երևույթների փոխկապվածության որոշակի պայմաններում: Փոխկապվածության այս բարդ համակարգը ձևավորում է որոշակի իրադրություն, որում քննիչը և քննության այլ սուբյեկտները բացահայտում են կատարված հանցագործության հանգամանքները: Կրիմինալիստիկայում այս իրադրությունը կոչվում է քննչական իրավիճակ: Պետք է նկատի ունենալ, որ քննության փուլերի և ստեղծված քննչական իրավիճակների միջև գոյություն ունի փոխադարձ կապ:

Քննչական իրավիճակը կարելի է բնորոշել որպես կողմնորոշող, հետախուզական և ապացուցողական բնույթի տեղեկատվության ամբողջություն, որը գտնվում է այն անձի տիրապետության տակ, ով իրականացնում է քրեական գործի քննությունը որոշակի փուլում: Այլ կերպ ասած, քննչական իրավիճակը պայման է՝ դրություն, հանգամանք, որի շրջանակներում իրականացվում է քրեական գործի քննությունը որոշակի ժամանակահատվածում: Քննչական իրավիճակը վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձին հնարավորություն է տալիս ժամանակին ընդունել ճիշտ որոշումներ, ընտրել արդյունավետ մեթոդներ և տակտիկական հնարքներ:

Քննչական իրավիճակը կարող է ունենալ հետևյալ բաղադրիչները:

1. հոգեբանական բնույթի բաղադրիչներ՝ քննիչի, ինչպես նաև քրեական գործընթացի այլ մասնակիցների հոգեբանական հատկությունների դրսևորում,

2. տեղեկատվական բնույթի բաղադրիչներ՝ քննիչի տեղեկացվածությունը հանցագործության հանգամանքների և դրանց հայտնաբերման հնարավորությունների մասին,

3. դատավարական և տակտիկական բնույթի բաղադրիչներ՝ քննության գործընթացի դրությունը, ապացուցողական բազան և դրա աղբյուրները, խափանման միջոցների ընտրությունը, քրեական գործով անցնող անձանց միմյանցից մեկուսացումը, որոշակի դատավարական գործողությունների կատարումը,

4. նյութական և կազմակերպատեխնիկական բնույթի բաղադրիչներ՝ հերթապահ մասի և օպերատիվ-քննչական խմբի միջև հաղորդակցության առկայություն, տեղեկատվության փոխանցման միջոցների առկայություն և այլն:

Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում քննչական գործողությունների և ՕՉՄ-ների բովանդակությունը, ինչպես նաև դրանց կատարման հաջողականությունը (ծրագիր-ալգորիթմը) հիմնականում պայմանավորված է քննվող իրադարձության առանձնահատկությամբ, որը, մեր ուսումնասիրությունների արդյունքներով, հանգում է հետևյալին.

**1. իրավիճակի լատենտայնությունը**, որը պահանջում է ստացված տվյալների փաստերի մանրակրկիտ վերլուծություն: Ընտրական հանցագործությունները, որպես կանոն, նախապես պլանավորվում, նախապատրաստվում են, որի ընթացքում միջոցներ են ձեռնարկվում նաև դրա հետքերի, հետևանքների քողարկման ուղղությամբ: Ավելին, այս տեսակ հանցագործությունների լատենտային բնույթն առավել ընդգծվում է, հատկապես ընտրակաշառքի դեպքերում, երբ հանցագործության մասնակիցներն առանձնապես շահագրգռված չեն հանցագործության բացահայտման գործում կամ ընդհանրապես չեն ցանկանում, որպեսզի այն բացահայտվի:

**2. Ընտրախախտումների, այդ թվում՝ հնարավոր ընտրական հանցագործությունների բազմազանությունը:** Բանն այն է, որ հատկապես համապետական ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման դեպքում միևնույն օրը ամբողջ երկրի մասշտաբով տարբեր ընտ-



րատարածքներում բացվում և գործում են հազարավոր ընտրական տեղամասեր, որտեղ միաժամանակ տարբեր թեկնածուների թիմերի անդամների կամ խմբերի կողմից իրականացվում են ընտրական իրավունքի իրականացման դեմ ուղղված ոտնձգություններ:

**3. Քննության մեծածավալ և դինամիկ բնույթը:** Այսպես, մեր ուսումնասիրած քրեական գործերի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս տեսակ հանցագործությունների քննության ընթացքում կատարվում են մեծածավալ ու լայնամասշտաբ քննչական և այլ դատավարական գործողություններ, հատկապես քննության սկզբնական փուլի ընթացքում: Ընդ որում, քննությունը կրում է դինամիկ բնույթ, քանի որ առկա քննչական իրադրությունն անընդհատ փոփոխվում է՝ կախված ընտրական գործընթացների զարգացումներից: Ընտրական հանցագործությունների դեպքերի վերաբերյալ տեղեկության առկայությունը պահանջում է ոչ միայն արագ արձագանքում, այլ նաև ստացող հաղորդման, տեղեկության գրանցում, հաշվառում, համակարգում՝ հետագա անձշտություններից, կրկնություններից խուսափելու համար: Ընդ որում, միևնույն փաստի վերաբերյալ հաղորդումներ կարող են ներկայացվել միաժամանակ տարբեր անձանց կողմից միևնույն կամ տարբեր մարմինների, ինչը վկայում է ձևավորվող քննչական իրադրության և հետագա քննչական իրադրության առանձնահատուկ բնույթի մասին:

**4. Նյութական հետքերի, իրեղեն ապացույցների սակավությունը կամ բացակայությունը:** Այս իրադրությունը պայմանավորված է նաև ընտրական հանցագործությունների լատենտային բնույթով և լավ նախապատրաստված լինելու հանգամանքով, ինչը բնորոշ է նաև պատշտոնեական հանցագործություններին կամ կազմակերպված հանցավորությանը, երբ դեռևս հանցագործության նախապատրաստական փուլում միջոցներ են ձեռնարկվում նյութական և այլ հետքերի հնարավոր վերացման կամ քողարկման նպատակով:

**5. Քննչական մարմինների կողմից դատավարական և տակտիկական որոշումների ընդունման և իրականացման համար ժամանակի սղությունը,** որն ապացուցողական տեղեկատվության ձևավորման գործում էական դեր է կատարում: Նշված իրադրությունը որոշակիորեն պայմանավորված է նաև ընտրական օրենսդրության առանձին իրավանորմերի պահանջներով, որոնք ընտրական իրավունքների պաշտպանության կամ վերականգնման համար սահմանում են

հստակ, երբեմն նաև կարճ ժամկետներ՝ սահմանափակելով անհրաժեշտ ծավալով որոշակի դատավարական գործողությունների կատարման հնարավորությունը:

**6. Զննությանը հակազդեցությունը**, որն իրականացվում է ամենատարբեր ձևերով, որոնք բնորոշ են այլ տեսակի, մասնավորապես պաշտոնեական հանցագործությունների քննությանը: Ինչպես արդեն նշել ենք, այս տեսակ հանցագործությունների կատարմանը, որպես կանոն, (մեր ուսումնասիրած գործերով 50% դեպքերում) ներգրավված են պաշտոնատար անձինք, ովքեր, օգտագործելով իրենց ծառայողական ու պաշտոնեական դիրքը, կարող են խոչընդոտել կամ լրացուցիչ դժվարություններ ստեղծել ընտրական հանցագործությունների քննության և բացահայտման համար: Միևնույն ժամանակ բացառված չէ նաև վերջիններիս կողմից ծառայողական, նյութական կամ այլ ենթակայության մեջ գտնվող անձանց վրա ներազդելու հնարավորությունը՝ քննությանը ճիշտ ուղուց շեղելու համար: Ընտրական հանցագործությունների նախապատրաստումը, դրանց կատարումը, հետքերի անհետացումը (ոչնչացումը) կրում է իրավիճակային բնույթ: Այդ պայմանների յուրահատկությունն ազդում է տեխնիկական միջոցների, բացահայտման մեթոդների, հանցագործության հետքերի հետազոտման, կրիմինալիստիկական առումով կարևոր տեղեկատվության աղբյուրների ընտրության վրա:

Այդպիսի տեղեկատվության ծավալի և որակի վրա իր հերթին ներգործում են նաև տեղեկատվություն կրողի տեսակը, հատկությունը, առանձնահատկությունները, դրա ծագման աղբյուրները, առաջացման կարգը, ժամանակահատվածը և գտնվելու միջավայրը :

Իրականում քննչական իրադրությունն իրենից ներկայացնում է բարդ, բազմատարր միջավայր, որը պարունակում է հանցագործության բացահայտման և քննության համար նշանակություն ունեցող տարբեր պայմաններ, իրավիճակներ, գործոններ<sup>1</sup>:

Իրավիճակի վրա մեծ ներգործություն են ունենում մամուլը, հեռուստատեսությունը, փոփոխությունները քաղաքական կյանքում և այլն: Քննիչները բոլոր այդ գործոնները պետք է հաշվի առնեն իրենց

---

<sup>1</sup> Տե՛ս **Чебуренков А. А.** Общетеоретические положения и практические аспекты криминалистической тактики. М., 2008, էջ 189:

աշխատանքի կազմակերպման ժամանակ՝ կանխելու համար դրանց արդյունքում հետագա անցանկալի զարգացումները:

Նման իրավիճակներում իրավապահ մարմինների խնդիրներից է նաև իրավիճակի կայունացումը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտրական հանցագործությունների կազմակերպիչներին և մասնակիցներին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ են ապացույցներ: Նման ապացույցների ձեռքբերման նպատակով քննչական մարմինները քրեադատավարական կարգով ամրագրում են ընտրական հանցագործությունների հնարավոր բոլոր հանգամանքները, քննչական գործողությունների ընթացքում պարզում և արձանագրում (ամրագրում) են հանցագործությունների հետքերը, այդ նպատակով հանձնարարություններ են տալիս օպերատիվ-հետախուզական մարմիններին:

Անհրաժեշտ է նշել, որ ընտրական հանցագործությունների քննության ժամանակ իրավիճակի տիպականությունը կապված է տվյալ տարածաշրջանում կատարված ընտրական գործընթացներից հետո անմիջապես ձևավորված ընդհանուր իրավիճակի հետ:

Ընտրական հանցագործությունների քննության ժամանակ տիպային իրավիճակը պայմանավորված է այն իրադրությունով, որը տվյալ տարածաշրջանում առկա է ընտրական և հետընտրական գործընթացների իրականացումից հետո:

Ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի արդյունավետ քննության համար կարևոր նշանակություն ունի նաև գործով պարզաբնման ենթակա հանգամանքների շրջանակի ճշգրիտ սահմանումը՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ առկա ռեսուրսների, ուժերի խելամիտ ու նպատակաուղղված օգտագործման, ինչպես նաև ժամանակի և միջոցների տնտեսման նպատակով: Այլ կերպ՝ պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակի անհարկի սահմանափակումը, մի կողմից կարող է հանգեցնել գործի մակերեսային, միակողմանի, ոչ լիարժեք քննության, իսկ այդ շրջանակի չհիմնավորված ընդլայնումը, մյուս կողմից, կարող է հանգեցնել քննության ողջամիտ ժամկետների սահմանազանցմանը, ռեսուրսների անհարկի վատնմանը և այլն: Երկու դեպքում էլ վարույթն իրականացնող մարմնի համար առկա է քրեադատավարական անցանկալի հետևանքների առաջացման հնարավորու-

յուն, հետևաբար՝ նաև դատավարության մասնակիցների իրավունքների անարդյունավետ պաշտպանություն:

Պետք է նշել, որ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է ապացուցման ենթակա հանգամանքների տիպային շրջանակը, որոնք անհրաժեշտ է վեր հանել ու պարզել ցանկացած տեսակի քրեական գործի քննության ընթացքում: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝

**«Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝**

*1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն):*

*2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին:*

*3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները:*

*4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ:*

*5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղնացնող կամ խստացնող հանգամանքները:*

*6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:*

*7) այն հանգամանքները, որոնք հիմնավորում են, որ գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված մաքսանենգության առարկա»:*

Անշուշտ, վերը նշված հանգամանքները պարտադիր ենթակա են ապացուցման նաև ընտրական հանցագործությունների վերաբերյալ գործերով, սակայն հարկ է նշել, որ ընտրական հանցագործությունների գործերով պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի որոշակիացումը մեծապես պայմանավորված է քննության սկզբնական փուլում առկա քննչական իրադրությամբ:

Ընտրական հանցագործությունների քննության սկզբնական փուլին բնորոշ են հետևյալ տիպային քննչական իրավիճակները՝

1) հանցագործը բռնվել է հանցանքի կատարման վայրում (ընտրական տեղամասում, ընտրական տեղամասի շրջակայքում, ընտրական հանձնաժողովի շտաբում, տան բակում և այլն),

2) հանցագործը հայտնաբերված չէ, բայց կա արժանահավատ տեղեկություն նրա, կազմակերպիչների և հնարավոր մյուս հանցակիցների հետախուզման համար,

3) հանցագործի մասին կա արժանահավատ տեղեկություն, բայց նրան հայտնաբերել չի հաջողվել, իսկ կազմակերպիչների և հնարավոր մյուս հանցակիցների վերաբերյալ տվյալները բավականաչափ ամբողջական չեն,

4) առկա է հանցագործության կատարման փաստը, սակայն հանցագործը հայտնաբերված չէ, և հանցագործի, կազմակերպիչի և հնարավոր մյուս հանցակիցների մասին տվյալները բացակայում են:

Ներկայացված քննչական իրադրության համակարգի հիմքում դրված են երկու հատկանիշներ. հանցավոր արարքի շարունակականության առկայությունը և կազմակերպիչների ու այլ մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների ամբողջականությունը, մինչդեռ Վ. Ե. Սիդորովը նախընտրում է երկու հատկանիշներն էլ կիրառել միաժամանակ<sup>1</sup>:

Կարծում ենք նպատակահարմար է հիմք ընդունել տվյալ իրավիճակների համար հետևյալ համալիր բաղադրատարրերը՝

- շարունակվող հանցավոր արարքի առկայությունը,
- ընտրական հանցագործությունների կազմակերպիչների և հնարավոր մյուս հանցակիցների մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների, այդ թվում՝ նրանց գտնվելու վայրի մասին տեղեկությունների լիարժեքությունը:

Առաջին տիպային ելակետային քննչական իրադրությունում քննչական մարմինների գործունեությունն ուղղված է ընտրական հանցագործությունների հետքերի հայտնաբերմանը, կազմակերպիչների, մյուս հանցակիցների, ականատեսների, տուժողների հայտնաբերմանը:

---

<sup>1</sup> Տե՛ս *Сидоров В. Е.* Начальный этап расследования: организация, взаимодействие, тактика. М., 1992, էջեր 155-157:

Երկրորդ քննչական իրադրությունը նախորոշում է կատարված հանցագործությունների, կատարողների, կազմակերպիչների և հնարավոր նյուս հանցակիցների վերաբերյալ ապացույցների և օպերատիվ տվյալների հավաքման անհրաժեշտությունը, ինչպես նաև նրանց հանցավոր գործունեության որոշակի փաստերի հաստատումը և նրանց ձերբակալման կամ ձերբակալման միջոցների ձեռնարկումը:

Երրորդ քննչական իրադրության առաջացման ժամանակ քննության մարմինների գործունեությունն ուղղված է առաջին հերթին կատարված հանցագործությունների մասնակից անձանց գտնվելու վայրի բացահայտմանը:

Չորրորդ իրավիճակի լուծման ժամանակ վարույթն իրականացնող մարմինը լուծում է ընտրական գործընթացների կազմակերպման և կատարման ժամանակ կատարված որոշակի հանցագործություններին առնչվող քննության խնդիրները:

Պետք է նաև նշել, որ բոլոր դեպքերում՝ անկախ քննչական իրավիճակից, երբ որոշվում է անձի առնչությունը կամ մեղավորությունն ընտրական հանցագործության կատարման մեջ, հարկ է նկատի ունենալ որ, անմեղության կանխավարկածի սկզբունքով պայմանավորված՝ ընտրական հանցագործության կատարման մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Այս առումով հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի Ս.Սաքանյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ « (...) ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը (...):

(...) [Ա]պացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում»<sup>1</sup>:

Քննարկվող խնդրին ԳՅ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ՝ վերահաստատելով իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշն ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած<sup>2</sup>:

Վերը նշված իրավական դիրքորոշումը զարգացնելով՝ ԳՅ վճռաբեկ դատարանը *Գրիգոր Գրիգորյանի գործով* որոշման մեջ արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործում առկա ապացույցների համակցությամբ հնարավոր չէ .հիմնավոր կասկածից վերե ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատել անձի մեղավորությունը նրան մեղսագրվող արարքում, անձի

<sup>1</sup> Մանրամասն տես Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ և 17-րդ կետերը:

<sup>2</sup> Մանրամասն տես Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

*նկատմամբ տվյալ մեղադրանքի շրջանակներում չի կարող կայացվել մեղադրական դատավճիռ<sup>1</sup>:*

Այսպիսով, կարող ենք փաստել, որ թեև ընտրական հանցագործությունների գործերով պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է ձևավորված սկզբնական քննչական իրադրության առանձնահատկություններով, փաստական տվյալների ձեռքբերման և ստուգման դժվարություններով, ժամանակի սակավությամբ և այլն, այնուամենայնիվ, քննության հետագա փուլերում գնահատականներն անհրաժեշտ է տալ՝ հաշվի առնելով քննության բազմակողմանիության, լրիվության և ամբողջականության, ինչպես նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջներն ապացուցման գործընթացի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում:

### **§ 3.3. Քրեական գործի հարուցման փուլի առանձնահատկություններն ընտրական հանցագործությունների քննության գործերով**

Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում սկզբնական տեղեկատվության նշանակությունը կարևորվում է քրեադատավարական որոշումների ընդունմամբ, սկզբնական տեղեկությունների հավաքման աշխատանքների կազմակերպմամբ, դրանց գրանցմամբ, հաշվառմամբ և համակարգմամբ: Վերջիններիս կարևորությունը ընդգծվում է նրանով, որ հատկապես ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրը միևնույն իրավախախտման փաստի մասին կարող են միաժամանակ ստացվել հաղորդումներ տարբեր քաղաքացիներից կամ իրավաբանական անձանց ներկայացուցիչներից կամ դրանք ներկայացվեն իրավապահ տարբեր մարմիններին կամ ընտրախախտումների գործերի քննությամբ զբաղվելու ոչ իրավասու մարմիններին ու կազմակերպություններին: Հետևաբար կարևոր է ոչ միայն այդ աշխատանքի համակարգումը՝ կրկնություններից կամ բացթողումներից խուսա-

---

<sup>1</sup> Տե՛ս Գրիգոր Վարուժանի Գրիգորյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի ԳՂ/0002/01/14 որոշման 17-րդ կետը:



փելու համար, այլ նաև՝ հնարավորինս կարճ ժամկետում, օպերատիվ կերպով այդ հաղորդումներն ըստ ենթակայության ուղարկելը, քանի որ դրա հապաղումը կարող է հանգեցնել հանցագործության հետքերի ոչնչացմանը կամ քողարկմանը:

Այս տեսանկյունից պետք է նշել, որ ուշագրավ է հաղորդման ներկայացման ժամանակահատվածը կամ օրը:

Այսպես, մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական իրավունքների հանցավոր խախտումների կամ հանցագործությունների մասին հաղորդումները ստացվում են.

- մինչ ընտրության/հանրաքվեի օրը- 4 դեպք կամ 7.4 %,
- ընտրության/հանրաքվեի օրը- 22 դեպք կամ 41 %,
- ընտրության/հանրաքվեի օրվանից հետո- 18 դեպք կամ 33.3 %:

Վերոգրյալից հետևում է, որ ընտրական իրավունքների խախտումների, այդ թվում՝ հանցագործությունների մասին հաղորդումները մեծամասամբ ստացվում են հենց ընտրության կամ հանրաքվեի օրը, ինչը դարձյալ վկայում է ընտրական հանցագործությունների առավել տարածված եղանակների մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն.«Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) *հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.*

2) *հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.*

3) *հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հե-տևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:*

Հանցագործության մասին հաղորդումը ստուգելու հիմնական նպատակը հանցագործության հատկանիշների հայտնաբերումն է:

Այսպես, օրինակ, ՁԼՄ-ներից, մասնավորապես «Azatutyun.am» կայքից ոստիկանության Շենգավիթի բաժին ստացված հաղորդման ստուգման արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝

ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելը, քրեական գործ է հարուցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Ա. Յ.-ի նկատմամբ: Այսպես, նշված քրեական գործը հարուցելու մասին որոշման համար հիմք է հանդիսացել այն, որ Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով, նյութեր նախապատրաստելու համար, 15.05.2017թ. ՀՀ ոստիկանության ԵԲՎ Շենգավիթի բաժին է ուղարկվել «Azatutyun.am» լրատվական կայքում տեղադրված հրապարակումն այն մասին, որ Շիրակի 3 հասցեում գտնվող թիվ 52 հիմնական դպրոցում տեղակայված թիվ 8/54 ընտրատեղամասում ընտրողներին քվեարկված քվեաթերթիկներ են տվել<sup>1</sup>:

ՀՀ ԲԴՕ 175-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

Բացի դրանից, այս տեղեկությունները նպաստում են քննչական վարկածների առաջադրմանը և քրեական գործով այլ վերլուծական աշխատանքների իրականացմանը:

Հանցագործության մասին հաղորդման ստուգման արդյունքում ստացված նյութերի գնահատումը հարկ է դիտարկել ապացուցման ենթակա հանգամանքների համատեքստում: Ըստ այդմ՝ նախևառաջ հաստատման ենթակա է հանցագործության կատարման փաստը, այլ կերպ՝ այս փուլի հիմնական խնդիրներից է պարզել, թե կատարվել է.

- ընտրական իրավունքի իրացման դեմ ուղղված հանցագործություն,
- այլ տեսակի հանցագործություն,
- վարչական իրավախախտում:

Ընդ որում՝ վերը նշված արարքները կարող են դրսևորվել ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ, քրեական գործ № 11200517՝ ըստ մեղադրանքի Ա. Ռ. Հովհաննիսյանի:

Այս փուլին բնորոշ կարևորագույն խնդիրներից է նաև պարզել, թե ինչպես և ինչ հանգամանքներում է հայտնի դարձել այդ մասին:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտրական հանցագործությունների մասին հաղորդումներ կարող են ներկայացվել տարբեր աղբյուրներից՝ պաշտոնական և ոչ պաշտոնական, ինչպես նաև տարբեր անձանց կողմից, ովքեր ի պաշտոնե ներգրավված են ընտրական գործընթացներին կամ առանձին քաղաքացիներ:

Այսպես, մեր ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս առանձնացնել հանցագործության մասին հաղորդում ներկայացնող անձանց հետևյալ պատկերը՝

- լրագրող- 14 դեպք կամ 26 %,
- դիտորդ/վստահված անձ- 10 դեպք կամ 18.5 %,
- քաղաքացի- 5 դեպք կամ 9.2 %,

• ընտրական գործընթացներին ի պաշտոնե ներգրավված անձինք- 16 դեպք կամ 30%:

Ինչպես նկատում ենք վերը ներկայացված տվյալներից, առավել հաճախ ընտրական իրավունքների խախտումների մասին հաղորդումներ ներկայացնում են այդ գործընթացներին պաշտոնապես ներգրավված անձինք, ինչը վկայում է նաև ընտրական հանցագործությունների կատարման մեխանիզմի, որոշակի հնարավոր հետքերի և քննության համար անհրաժեշտ փաստական տվյալների ձեռքբերման աղբյուրների ու եղանակների մասին:

Ինչպես նշվեց, այս փուլի հիմնական խնդիրներից է կատարված արարքի իրավական բնույթի պարզաբանումը: Այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ ընտրական իրավունքների դեմ ուղղված իրավախախտումները կամ չարաշահումները դասակարգվում են տարբեր կերպ:

Այսպես, Մ. Ս. Մատեյկովիչը, կախված պատճառված վնասի բնույթից՝ առանձնացնում է իրավախախտման երեք տեսակներ՝

1. քաղաքացիների ընտրական իրավունքների «նվազեցում»,
2. ընտրական իրավունքի չարաշահումներ, որոնք արտահայտվում են ընտրական գործընթացի այլ սուբյեկտների ընտրական իրավունքների իրացմանը խոչընդոտելով և հակասում են ընտրական մարմնի շահերին,

3. սուբյեկտների կողմից իրենց պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը<sup>1</sup>:

Մինչդեռ Ս. Յու. Կուլիկովն ընտրական իրավունքների դեմ ուղղված իրավախախտումները կամ չարաշահումները դասակարգում է՝ հիմք ընդունելով ընտրական գործընթացի փուլերը: Ըստ այդմ՝ դրանք են՝

1. ընտրությունների նշանակումը,
2. ընտրատարածքների և տեղամասերի ձևավորումը,
3. ընտրողների ցուցակների կազմումը,
4. թեկնածուների առաջադրում և դրանց գրանցումը,
5. նախընտրական քարոզարշավը,
6. քվեարկությունը,
7. քվեարկության ամփոփումը,
8. քվեարկության արդյունքների որոշում ու դրանց հրապարակումը:

Սակայն, հարկ է նկատել, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ միևնույն իրավախախտումն ընդգրկի միանգամից մի քանի փուլ՝ հատկապես նկատի ունենալով այս տեսակ հանցագործությունների կազմակերպված բնույթը: Ավելին՝ երբեմն դրանք տարբեր փուլերում կարող են տարբեր իրավական գնահատականներ ու որակումներ ստանալ՝ կախված որոշակի արարքի փաստական և իրավական կողմերի առանձնահատկություններից:

Այս տեսանկյունից միանգամայն իրավացի է Ի. Վ. Սովետնիկովը, ով նշում է, որ շատ չարաշահումներ իրենցից ներկայացնում են տևող գործունեություն և կարող են կատարվել մի քանի փուլերում: Բացի դրանից հեղինակը նկատում է, որ պետք է հաշվի առնվեն չարաշահումները, որոնք կապված են ընտրական կազմակերպության ֆինանսավորման հետ, ՁԼՄ-ների՝ ընտրողներին տեղեկացնելու գործունեության հետ և այլն<sup>2</sup>:

Ընտրական իրավունքի դեմ ուղղված ոսնձգությունների հատկանիշների վերաբերյալ էական լրացում է կատարել Լ. Յու. Բո-

---

<sup>1</sup> Տե՛ս *Матейкович М. С.* Защита избирательных прав граждан в Российской Федерации. М., 2003, էջ 136:

<sup>2</sup> Տե՛ս *Советников И. В.* Злоупотребления правом в избирательном процессе. М., 2010, էջ 33:

լուսկիխը, ով առաջարկում է հաշվի առնել դրանք հետևյալ հիմքերով՝

1. *անձանց քանակը՝ մեկ անձի կողմից կատարվող կամ խմբի կողմից կատարվող,*

2. *մեղադրյալի անձը՝ պաշտոնատար անձ կամ ոչ պաշտոնատար անձ,*

3. *հանցագործության նպատակը՝ ընտրական իրավունքների իրականացմանը խոչընդոտելը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքներին խոչընդոտելը կամ ընտրական փաստաթղթերի կեղծումը կամ ձայների սխալ հաշվարկը,*

4. *տեղը և դերը ընտրական գործընթացում՝ ընտրությունների նշանակման ընթացքում, գրանցման կամ ընտրացուցակների կազմման գործընթացում, ընտրատարածքների և տեղամասերի ձևավորման գործընթացում, թեկնածուների առաջադրման և գրանցման, նախընտրական քարոզարշավի, ընտրությունների ֆինանսավորման, քվեարկության, ձայների հաշվարկի, ընտրությունների արդյունքների հաստատման և դրանց հրապարակման ընթացքում<sup>1</sup>:*

Կարծում ենք, որ ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների թվարկված հատկանիշներն անհրաժեշտ է համադրել ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլի իրավական կարգավորման առանձնահատկությունների հետ՝ սահմանված իրավական պահանջներից շեղումների և ենթադրյալ մեղավորների գործողությունների իրավական գնահատականների բացահայտման նպատակով:

Բացի դրանից, գնահատական տալով կատարված իրադարձությանը՝ պետք է հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դեմ ուղղված ոչ բոլոր ոտնձգություններն են համարվում հանցագործություններ: Անհրաժեշտ է գնահատել տեղեկությունն այն տեսանկյունից, թե արդյոք հայտնաբերված խախտումը վարչական իրավախախտումն է:

Այս փուլում անհրաժեշտ է նաև պատշաճ ուշադրություն դարձնել և պարզել հանցագործության կատարման առարկան կամ միջո-

---

<sup>1</sup> Ст'ю *Болотских Л. Ю.* Выявление, расследование и предупреждение преступлений в сфере проведения федеральных выборов в Российской Федерации: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002. էջ 8:

ցը: Ընտրական հանցագործությունների մեխանիզմում ոչ պակաս կարևոր տեղ ունի նաև այս տեսակի հանցագործությունների միջոցները: Ըստ պրոֆեսոր Ա. Մ. Կուստովի՝ որպես այս հանցագործության միջոց պետք է հասկանալ ցանկացած նյութական իրեր և առարկաներ, որոնք օգտագործվում են հանցագործության կատարման ժամանակ, ինչպես նաև երևույթներ և գործընթացներ, որոնք կարող են օգտագործվել ուղեգրության առարկայի, տուժողի, հանցավոր գործողության այլ մասնակիցներ վրա ներագրելու համար, որպեսզի հասնեն իրենց համար ցանկալի արդյունքին<sup>1</sup>:

Այս տեսանկյունից հարկ ենք համարում մեջբերել նաև Գ. Գ. Ջուլյովի այն միտքը, ով հանցագործության միջոցի ճանաչման գործընթացը համարում է քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտման եղանակ, իսկ հանցագործության միջոցի պարզաբանումը՝ դրա բացահայտման ճանապարհը<sup>2</sup>:

Ընտրական իրավունքի դեմ ուղղված մի շարք հանցագործությունների կատարման համար որպես առարկա կամ միջոց են ծառայում ընտրական տարբեր փաստաթղթերը: Այդ իսկ պատճառով պետք է ուշադրություն դարձնել այդ օբյեկտներին, անհրաժեշտության դեպքում ներգրավել մասնագետների դրանց զննության և հետազոտության համար:

Հաջորդ հանգամանքը, որը ենթակա է գնահատման և հաստատման, հանցագործության կատարման եղանակն է: Ընտրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պարզաբանման ենթակա են՝

- ինչպես է նախապատրաստվել հանցագործությունը, ում կողմից, որտեղ և երբ է նախապատրաստվել, ով է ֆինանսավորել հանցագործության նախապատրաստումը,
- քաղաքացիների որ ընտրական իրավունքներն ու օրինական շահերն են խախտվել, ինչ եղանակով են կատարվել,
- ինչու՞մ է կայացել քաղաքացու՝ իր ընտրական իրավունքներն ազատորեն իրականացնելու խոչընդոտը,

---

<sup>1</sup> Տե՛ս *Кустов А. М.* Криминалистика и механизм преступления: цикл лекций. М., Воронеж, 2002, էջ 127:

<sup>2</sup> Տե՛ս *Зуйков Г. Г.* Криминалистическое учение о способе совершения преступления // Социалистическая законность. 1971, № 11, էջ 16:

- օգտագործվել են արդյոք կաշառքը, խաբեությունը, հարկադրանքի կիրառումը կամ դրա կիրառման սպառնալիքը, ինչու՞մ է այն արտահայտվել,

- ընտրական հանձնաժողովի աշխատանքին անձի կողմից, իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքն օգտագործելով, միջամտություն եղել է, թե՛ ոչ,

- թեկնածուի ընտրական կազմակերպության ֆինանսավորման կարգի խախտում եղել է, թե՛ ոչ,

- կեղծվել են արդյոք ընտրական փաստաթղթեր, ինչպիսի բնույթի կեղծիքներ են կատարվել,

- քվեարկության արդյունքների կեղծում եղել է, թե՛ ոչ,

- սուբյեկտը հանցագործություն կատարելիս չի օգտագործել իր պաշտոնեական լիազորությունները, ինչպիսի չարաշահումներ են եղել,

- ինչպես են ազդել հակաիրավական գործողություններն ընտրությունների ընթացքի և արդյունքների վրա և այլն:

Ընտրական հանցագործությունների շարքում առավել տարածված են այնպիսիք, որոնք իրականացվում են կաշառքի միջոցով: Ուստի, հանցագործության մասին հաղորդումը ստուգելիս կարևոր է պարզել՝

- ով և ում անունից է կաշառք տվել,

- ընտրական գործընթացի որ փուլում է այն կատարվել,

- ում է կաշառքը տրվել,

- արդյոք այդ անձինք ընտրական գործընթացի մասնակիցներ են,

- որն է եղել կաշառքի առարկան,

- երբ և ինչպիսի հանգամանքներում է կաշառք տրվել,

- ձեռնարկվել են արդյոք որոշակի միջոցառումներ կաշառքի փաստը թաքցնելու համար,

- կազմվել են արդյոք պաշտոնական փաստաթղթեր, առկա են դրանք, ում կողմից են կազմվել, ինչպիսի պայմաններ են բովանդակում,

- ինչպիսի գործողություններ է կատարել կաշառք ստացողը կաշառք տվողի շահերից ելնելով,

- ինչպես է դա ազդել քվեարկության արդյունքների վրա,

- ինչպիսի հանգամանքներում և ում կողմից է հայտնաբերվել ընտրողներին կաշառելը,

- հայտնաբերվել է արդյոք կաշառքի առարկան և այլն:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.

- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև քրեական գործի հարուցումը կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Ի տարբերություն ՀՀ քրեադատավարական օրենսդրության, ՌԴ քրեադատավարական օրենսդրությանը մինչև քրեական գործի հարուցումը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն է տալիս կատարել հետևյալ դատավարական գործողությունները՝ բացատրություն ստանալ, պահանջել և առգրավել փաստաթղթեր և առարկաներ, փաստաթղթային ստուգումների անցկացում, դրանց վերստուգում, հետաքննության մարմնին պարտադիր կատարման ենթակա գրավոր հանձնարարություններ տալը օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու համար<sup>1</sup>:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝

1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրա-

---

<sup>1</sup> Տե՛ս *Цховребова И.А.* Обновленное правовое регулирование проверки сообщений о преступлениях // Публичное и частное право. 2013. Вып.IV (XX), էջ 149:



ժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

3. Այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստանալ նշանակված փորձաքննության եզրակացությունը և առանց այդ փորձաքննության եզրակացությունը ստանալու հնարավոր չէ լուծել հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը, ապա հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը հսկող դատախազի որոշմամբ կարող է երկարացվել ևս մինչև 20 օր ժամկետով: Երկարացված ժամկետի ընթացքում այլ դատավարական գործողություններ կատարվել չեն կարող, բացառությամբ այնպիսի գործողությունների, որոնք ուղղված են փորձագետի գրավոր միջնորդության բավարարմանը, առանց որոնց հնարավոր չէ փորձաքննություն կատարելը կամ պատշաճ փորձաքննություն իրականացնելը:

Քրեական գործի հարուցումը բաղկացած է մի շարք նախապատրաստական-կազմակերպչական միջոցառումներից: Քրեական գործ հարուցելիս պետք է պարզվեն այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս որոշել ընտրական հանցագործությունների հատկանիշների առկայությունը: Բացի դրանից, առկա տեղեկությունների հիման վրա առաջադրվում են կատարված հանցագործության վարկածներ և դրանց համապատասխան կազմվում են քննության պլաններ: Այդ վարկածները ստուգվում են քննչական գործողությունների և պլանավորված միջոցառումների միջոցով:

Ընտրական հանցագործությունների մասին հաղորդումների ստուգման տակտիկայի տեսանկյունից միանգամայն արդյունավետ է անսպասելիության գործոնը: Կրիմինալիստիկայում սրա տակ հասկանում են քննիչի կամ հետաքննության մարմնի գործողությունների անսպասելիությունը դրանց կատարման տեղի և ժամանակի առումով: Անսպասելի բնույթ կարող են ունենալ դատավարական գործողությունները, որոնք կարող են կատարվել մինչև քրեական գործի հարուցումը: Այս տակտիկական միջոցը պետք է օգտագործվի բավականին հաճախ ընտրական հանցագործությունների քննության պրակտիկայում, քանի որ դրա արդյունավետությունն ակնհայտ է:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրական գործող որոշակի իրավակարգավորումների պայմաններում երբեմն հնարավոր չէ վարույթն իրականացնող մարմնի համար ապահովել հանկարծակիության կամ անսպասելիության գործոնը, օրինակ՝ հնարավոր չէ առգրավել կամ զննել ընտրական որոշակի փոստաթղթեր կամ քվեաթերթիկներ, այն պայմաններում, երբ օրենքով սահմանված կարգով թեկնածուն կամ իրավասու անձը վարչական կարգով բողոքարկում է ընտրության արդյունքները, իսկ դրանք անհրաժեշտ են վարչական վարույթի իրականացման համար և այլն:

Գործողությունների օպերատիվությունն ու անսպասելիությունը նպաստում են «հառակորդին հանկարծակիորեն նվաճելուն»։ սրանք միջոցներ են, որոնք օգտագործվում են կրիմինալիստիկայում: Իրավիճակը միշտ կլինի տակտիկապես շահեկան, երբ հանցագործը չի սպասում իր նկատմամբ որոշակի գործողությունների կատարմանը. նա վստահ է, որ չի կասկածվում, իրավապահ մարմիններին ոչինչ հայտնի չէ իր հակաիրավական գործունեության մասին: Այս տակտիկական հնարքը կիրառվում է, որպեսզի հանցագործը չհասցնի «պաշտպանության գիծ կառուցել» և ակտիվ հակազդել քննությանը:

Բացի դրանից, հանցագործության մասին հաղորդման ստուգման համար հատուկ նշանակություն ունեն այնպիսի տակտիկական հնարքների համակարգը, ինչպիսիք են հանցագործության բացահայտումը տաք հետքերով և հանցագործի ձերբակալման տակտիկան: Այստեղ նույնպես կարևոր է ժամանակի գործոնը, բայց որոշիչ նշանակություն ունի այդպիսի գործողությունների նախապատրաստման մանրակրկիտ ուսումնասիրությունը: Այսպիսով, ընտրական հանցագործությունների մասին հաղորդման ստուգումը պետք է ունենա անհետաձգելի բնույթ:

Ընտրական հանցագործությունների մասին հաղորդման ստուգման տակտիկական-կրիմինալիստիկական ապահովվածությունը ենթադրում է դատավարական և օպերատիվ-հետախուզական գործունեության հատուկ կազմակերպում՝ ուղղված հանցագործության հատկանիշների հայտնաբերմանը և ամրագրմանը:

Ընտրական հանցագործությունների մասին հաղորդման ստուգման տակտիկա-կրիմինալիստիկական ապահովվածությունը պայմանավորված է դրա մասին նախնական, ելակետային տեղե-

կությունների բնույթով: Կախված այսպիսի տեղեկության ծավալից՝ որոշվում են հստակ առաջադրանքները՝ հանցագործի ձերբակալում, նրան տաք հետքերով հայտնաբերում, հետախուզական և ապացուցողական տեղեկությունների աղբյուրների բացահայտում, հանցագործության հատկանիշների առկայությունը վկայող ապացույցների առավելագույն ծավալի ապահովում, որոշակի անձանց մասնակցությունը դրանց կատարմանը և այլն:

Այսպիսի առաջադրանքների կամ հարցերի լուծումը հնարավոր է քրեադատավարական օրենքով նախատեսված անհետաձգելի բնույթ ունեցող գործողությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարմամբ: Առաջադրված հարցերի լուծումը կարող է ապահովվել հանցագործության մասին հաղորդման ճիշտ կազմակերպված ստուգման և դատավարական գործողությունների կատարման շնորհիվ:

Արարքի ճիշտ որակումն առաջացնում է կազմակերպչական աշխատանքի անհրաժեշտություն, ուժերի և միջոցների ակտիվացում, իրավիճակների արագ տիրապետում: Ընտրական հանցագործությունների փաստերով հարուցված քրեական գործերի հարուցման վերաբերյալ որոշումներում հնարավոր չէ սպառիչ քրեաիրավական գնահատական տալ ընտրական հանցագործությունների մասնակիցների բոլոր գործողություններին: Ընդ որում, քննության այս փուլում խոսք կարող է գնալ անձի ոչ թե մեղավորության ապացուցվածության, այլ նաև՝ հիմնավոր կասկածի մասին, որի բովանդակությունը ՀՀ դատական պրակտիկայում սահմանվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն էդգար *Գեղամի Եղիազարյանի գործով* 2017 թվականի հունիսի 22-ի ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 13.2-րդ կետում արձանագրել է. «(...) «հիմնավոր կասկած» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում (տես Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K. F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, զանգատ

թիվ 144/1996/765/962, կետ 57)»:

Միևնույն ժամանակ վկայակոչված որոշման մեջ (15-րդ կետ) ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնում է նաև կասկածանքի և անձի մեղավորության փախհարաբերակցության խնդրին՝ արձանագրելով հետևյալը.

*«(...) հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված»:*

Խնդիրն առավել կարևորվում է, երբ քննության այս փուլում որոշվում է քրեական հետապնդում սկսելու և անձին նկատմամբ քրեադատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, ընդհուպ՝ ազատությունից զրկելու հարցը: Այս կասկածությանը ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ - կետերը:

իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջին՝ առկա են արդյոք կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին<sup>1</sup>:

Այսպիսով, հիմք ընդունելով իրավակիրառ պրակտիկայի վերջին զարգացումները՝ կարող ենք փաստել, որ ընտրախախտումների փաստով քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում իրականացնելու, ինչպես նաև անձի նկատմամբ քրեադատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցի լուծման համար վարույթն իրականացնող մարմնի համար, ի թիվս այլոց, որպես ուղենիշ կարող են ծառայել հիմնավոր կասկածի բովանդակությունը կազմող հանգամանքների առկայությունը:

Քրեական գործի հարուցումից հետո կազմակերպվում են ընտրական հանցագործությունների վերաբերյալ սկզբնական տեղեկությունների հավաքման աշխատանքներ: Վարույթն իրականացնող մարմնի իրավասության շրջանակների մեջ սովորաբար մտնում է բոլոր հանցագործությունների քննությունը, որոնք կատարվել են կազմակերպիչների, դրոհիչների և ընտրախախտումների մյուս մասնակիցների կողմից: Դրա վերաբերյալ տեղեկությունների մասին իրազեկվում են իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք, հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով և այլն:

Վարույթն իրականացնող մարմինը՝ ի դեմս ՀՀ հատուկ քննչական ծառայության, ընտրախախտումների վերաբերյալ ընդունում է հայտարարություններ, հաղորդագրություններ և այլ տեղեկատվություն՝ ինչպես տարածքային իրավապահ մարմինների, այնպես էլ անմիջականորեն քաղաքացիների, ձեռնարկությունների ղեկա-

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Հարություն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ2/0009/06/11 որոշման 13-րդ և 15-րդ կետերը:

վարների, հաստատությունների և կազմակերպությունների, այլ պաշտոնատար անձանց միջոցով:

Անհրաժեշտությունից ելնելով՝ քննիչներն ընտրախախտումների վերաբերյալ սկզբնական տեղեկություններ ստանալու համար հարցումներով կարող են դիմել ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ այդ նպատակով հանձնարարություն են տալիս օպերատիվ աշխատակիցներին:

Սովորական պայմաններում հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններն ստացվում են ոստիկանության տեղական մարմնի հերթապահ մասում, որտեղից ստուգումներից հետո դրանք փոխանցվում են քննչական մարմիններին: Սակայն, հաշվի առնելով հատկապես ընտրության կամ հանրաքվեի անցկացման օրն առկա ընդհանուր լարված իրադրությունը՝ նպատակահարմար է ՋԼՄ-ների կամ այլ եղանակներով հանրությանը տեղեկացնել ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ներկայացման միասնական կարգի, ճշգրիտ հասցեների մասին և այլն:

Ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրներից են հանդիսանում նաև տուժողները, այսինքն՝ այն անձինք, ում ընտրական իրավունքները խախտվել են: Նրանցից տեղեկությունների ստացումն արդյունավետ կազմակերպելու նպատակով նախաքննական մարմնի կազմում նպատակահարմար է առանձնացնել հատուկ աշխատակիցներ բանավոր և գրավոր հաղորդումներ ընդունելու համար: Տվյալ գործունեության կազմակերպման կարևորությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր անհրաժեշտ հանգամանքների արձանագրումը, լրիվությունն ու ճշգրտությունը հետագա հաջող աշխատանքի գրավականն է:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ընտրական գործընթացների ժամանակաշրջանում աշխատանքային հերթապահության ռեժիմով համանման գործառույթ են իրականացնում քաղաքացիների ընդունելության և իրավական ապահովման բաժնի աշխատակիցները:

Բացի դրանից, վերջին տարիներին համապետական ընտրությունների և հանրաքվեի անցկացման գործընթացի ողջ ժամանակահատվածում արագ արձագանքման խումբ է ստեղծվում նաև ՀՀ գլխավոր դատախազությունում:

Նման օրինակ է հանդիսանում 2018թ. սեպտեմբերի 23-ի Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ ՋԼՍ հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ահազանգերը գրանցելու և հաշվառելու, հաղորդումների քննարկման և դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի ու հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի օգոստոսի 28-ի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը:

Աշխատանքային խմբի հիմնական գործառույթների մեջ էին մտնում արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների ուսումնասիրումը, դրանց ենթակայության հարցի լուծումը, ինչպես նաև այդ հաղորդումների քննարկման, նյութերի նախապատրաստման և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին գործնական աջակցության ցուցաբերումը:

Բացի դրանից, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին հանձնարարվել էր ընտրական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումները քննարկել և դրանց ընթացք տալ սեղմ ժամկետում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից աշխատանքային խմբի առջև խնդիր էր դրվել ընտրախախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, դրանցով նախաձեռնված քրեադատավարական գործընթացների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունն օպերատիվ կերպով տրամադրելու շրջանակներում սերտորեն գործակցել ինչպես ՀՀ ԿԸՀ-ի, այնպես էլ ընտրությունները լուսաբանող լրատվամիջոցների, դիտորդական առաքելություն իրականացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ, պատշաճ և օպերատիվ լուսաբանմամբ ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական ինտերնետային կայքէջ: <http://www.prosecutor.am/am/mn/7223/>

Հարկ է նշել, որ դիմողից անհրաժեշտ է ստանալ հանցագործության որոշակի փաստերի վերաբերյալ հստակ շարադրանք, աշխատել անհապաղ վերացնել ակնհայտ հակասությունները, պարզել տեղեկացվածության աղբյուրները, կասկածյալների, վկաների շրջանակը և այլն: Այդպիսի գործողությունները թույլ կտան իրական փաստերի վերաբերյալ տեղեկությունն առանձնացնել հերյուրանքներից և տարաբնույթ ասեկոսեներից: Դրանց հետագա առավել մանրակրկիտ ուսումնասիրություններ են իրականացվում քրեական գործի վարույթի շրջանակներում՝ քննչական գործողությունների և ՕՅՄ-ների իրականացման միջոցով:

Ընտրական հանցագործությունների հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության կարևոր աղբյուր են հանդիսանում նաև տարբեր պետական և հասարակական կազմակերպություններն ու հիմնարկները, քաղաքացիների միավորումները, տեղական իրավապահ մարմինները, տարածքային կառավարման մարմինների վարչակազմերը, իրավապաշտպան, հասարակական ու միջազգային կազմակերպությունները և այլն: Անհրաժեշտ է դրանցից անմիջապես պահանջել բոլոր հնարավոր տեղեկությունները: Դա հնարավորություն կտա դրանք վերստուգել, լրացնել, ժամանակին բացահայտել և վերացնել հակասությունները:

Երբեմն ընտրության կամ հանրաքվեի օրվանից որոշակի ժամանակ անցնելուց հետո նախաքննական մարմինը քաղաքացիներից ստանում է բազմաթիվ նամակներ և բողոքներ՝ ընտրության կամ հանրաքվեի օրը հանցագործությունների վերաբերյալ, որոնք հասցեագրված են տարբեր կենտրոնական մարմինների, միջազգային կազմակերպությունների: Դրանց անհրաժեշտ է արձագանքել քանի որ ժամանակի կորստի պատճառով կարող են բացառվել օպերատիվ կարգով միջոցներ ձեռնարկելու հնարավորության ընձեռումը:

Եական տեղեկատվական արժեք ունեն զարգացումների ժամանակագրության վերաբերյալ վերլուծական տեղեկանքները, որոնք վերջին տարիներին պատրաստում է ՀՀ գլխավոր դատախազության արագ արձագանքման խումբը: Դրանցում առկա տեղեկությունները հետագա քննության ժամանակ հստակեցվում և համալրվում են: Դրանք սկզբնական փուլում կարևոր են քննչական աշխատողների ընդհանուր կողմնորոշման համար:



Տեղեկությունների բոլոր հնարավոր աղբյուրների նպաստակատուղղված օգտագործումը թույլ կտա կարճ ժամանակահատվածում ընտրական հանցագործությունների հանգամանքների վերաբերյալ հավաքել ամբողջական տեղեկություն և ստանալ դրանց ամբողջական պատկերը:

Հարկ է նշել, որ տարածքային իրավապահ մարմիններ ընտրական հանցագործությունների վերաբերյալ մուտքագրված սկզբնական տեղեկություններն ընդհանուր կանոններին համապատասխան ենթակա են գրանցման: Գրանցումից հետո նյութերն անհապաղ, առանց կրկնակի ստուգման ենթակա են հանձնման մախաքննական մարմնին: Վերջիններս ընդունելով նյութերը՝ պետք է հետամուտ լինեն, որպեսզի դրանցում չլինեն հանցագործությունների հետ կապ չունեցող փաստերի վերաբերյալ փաստաթղթեր: Նախաքննական մարմինը՝ ի դեմս, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը վարում է սկզբնական նյութերի աշխատանքային հաշվառումը: Դա թույլ է տալիս բացառել դրանց կորուստը և հնարավորություն ունենալ հետևելու դրանց ընթացքին:

Սկզբնական նյութերի հաշվառումը հնարավորություն է տալիս ավտոմատացնել դրանց համակարգումը: Միաժամանակ հայտնաբերվում են փոխարինող նյութեր, անճշտություններ՝ ներկայացված հասցեներում, ազգանուններում և այլն:

Այսպիսով, բացի վերոնշյալ աղբյուրներից, ներկայումս տեղեկատվության բավական արդյունավետ և օգտակար աղբյուր է հանդիսանում համացանցի (ինտերնետի) հնարավորությունների և էլեկտրոնային էջերի օգտագործումը, որոնք օպերատիվ կերպով արձագանքում են ընտրական հանցագործությունների ընդհանուր և առանձին փաստերին:

Հայտնի է, որ յուրաքանչյուր հանցավոր իրադարձություն նյութական աշխարհում թողնում է յուրահատուկ հետևանքներ: Սակայն բոլոր դեպքերում կան միատարր հանցագործություններ, որոնց քննության ժամանակ իրավասու մարմիններն առնչվում են տիպային իրավիճակների, և հետևաբար հավաքում և օգտագործում են հանցագործության վերաբերյալ տիպային տեղեկություններ: Այդ իմաստով ընտրական հանցագործությունները բացառություն չեն:

Ինչպես արդարացիորեն նկատում են որոշ գիտնականներ, հանցագործությունը որոշակի տարրերից կազմված իրադարձութ-

յուն է, որի բացասական հետևանքն անհրաժեշտություն է առաջացնում քննության միջոցով բացահայտել դրա պատճառը, պայմանները և փոխկապակցվածությունը<sup>1</sup>:

Այսպիսով, ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործի հարուցման առանձնահատկությունները դրսևորվում են հանցագործության տվյալ տեսակի վերաբերյալ սկզբնական տեղեկությունների հավաքման, դրանց գրանցման, հաշվառման և համակարգման աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև քրեական գործ հարուցելու վերաբերյալ անմիջականորեն որոշման ընդունման գործում:

### **§ 3.4. Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում կատարվող քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջաջառումների առանձնահատկությունները**

Հանցագործությունների քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվում են դատավարական, կազմակերպատեխնիկական և այլ գործողություններ ու միջոցառումներ:

Հանցագործության քննությունը քննչական գործողությունների և ՕՅՄ-ների համալիր է, որոնք իրականացվում են որոշակի հաջորդականությամբ և նպատակաուղղված են հանցագործություն կատարած անձանց բացահայտմանը, նրանց մեղքի ապացուցմանը և դատապարտմանը<sup>2</sup>:

Ինչպես ցանկացած հանցագործության, այնպես էլ ընտրական հանցագործությունների քննության առանցքում ընկած է քննության հաջորդականության սկզբունքը: Ըստ այդմ՝ ընտրական հանցագործությունների մասին հաղորդումները ստուգելիս՝ հավաքվում է տեղեկություն, որն անհրաժեշտ է քրեական գործ հարուցելու վե-

<sup>1</sup> Տե՛ս *Яблоков Н. П.* Криминалистическая методика расследования. М., 2005, էջ 21:

<sup>2</sup> Տե՛ս *Лузгин И. М.* Методологические проблемы расследования. М., 1973, էջ 89:

րաբերյալ որոշում կայացնելու, ընտրական իրավունքների խախտման փաստը հաստատելու, հնարավորության դեպքում հանցագործության կատարմանն անձանց մասնակցությունը հաստատելու համար և այլն:

Այնուհետև, քրեական գործ հարուցելու փուլին հաջորդում է քննության սկզբնական փուլը, որը, որպես կանոն, առավել ժամանակատար է, քանի որ այս փուլի շրջանակներում որոշվում են ոչ միայն հանցագործության բացահայտման, այլև ապացուցման հետ կապված հարցերի մեծ մասը: Որպես կանոն, սկզբնական փուլն ընդունված է ավարտված համարել, երբ քննիչի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացվում: Սկզբնական փուլում որոշվում են անձի հետախուզման և ձերբակալման, մեղադրանք առաջադրելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների հավաքման հետ կապված հարցերը:

Քննության հաջորդ՝ հետագա փուլը, որպես կանոն, սկսվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելուց և նրան մեղադրանք առաջադրելուց: Քննության այս փուլում նույնպես շարունակվում է ապացույցների հավաքումը, թեև որոշակիորեն այն կարող է կենտրոնանալ ապացույցների ստուգման, գնահատման վրա: Քննության այս փուլը եզրափակվում է՝ քրեական գործի քննության ավարտի մասին քրեադատավարական կարգով մասնակիցներին իրազեկելով: Քննության վերջնական՝ եզրափակիչ փուլը սկսվում է՝ մեղադրյալին, նրա պաշտպանին, ինչպես նաև տուժողին քրեական գործի նյութերին ծանոթացնելով: Այս փուլում լուծվում են ներկայացված միջնորդությունները, կազմվում է մեղադրական եզրակացությունը և ուղարկվում դատախազին:

Մեր ուսումնասիրած քրեական գործերի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրական հանցագործությունների քննության ժամանակ առավել տարածված քննչական գործողություններից են՝

- դեպքի վայրի զննությունը,
- հանցագործության մասին հաղորդում տված անձի հարցաքննությունը դեպքի մասին նրան հայտնի հանգամանքների, հանցագործության կատարման վայրի և ժամանակի, սուբյեկտների գործողությունների բնույթի վերաբերյալ,

- այն անձանց հարցաքննությունը, որոնց ընտրական իրավունքները խախտվել են, ինչպես նաև ընտրակաշառք ստացած ընտրողների հարցաքննությունը,

- այն անձանց հարցաքննությունը, որոնց ներկայությամբ կատարվել է հանցագործությունը, մասնավորապես այն շինության կամ բնակարանի սեփականատիրոջ հարցաքննությունը, որտեղ կատարվել է հանցագործությունը,

- ընտրական հանձնաժողովի անդամների, հանրային դիտորդների, թեկնածուների և նրանց վստահված անձանց հարցաքննությունը,

- ընտրական գործընթացի մասնակիցների վրա ազդեցության փաստը հավաստող փաստաթղթերի և առարկաների խուզարկությունը և առգրավումը,

- այն ընտրական փաստաթղթերի առգրավումը և զննությունը, որոնց միջոցով կատարվել է հանցագործությունը,

- այն անձանց հարցաքննությունը, ովքեր ընտրական գործընթացի մասնակիցների վրա ունեցել են ազդեցություն,

- այն անձանց հարցաքննությունը, ովքեր մասնակցել են հակաիրավական գործունեության խափանմանը (օրինակ՝ ոստիկանության ծառայողները, հանրային դիտորդները, ակտիվիստները և այլն),

- դատական փորձաքննությունների նշանակումը և կատարումը (ծեռագրաբանական, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննություն, համակարգչային, ֆոնոսկոպիկ, հաշվապահական և այլն):

Միաժամանակ, անհրաժեշտության դեպքում քննիչը կարող է հանձնարարել կատարել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Վերջիններիս անհրաժեշտությունը հատկապես զգացվում է ընտրական հանցագործությունների կատարմանը կազմակերպված հանցավոր խմբերի ներգրավված լինելու դեպքում:

Ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկայի կառուցվածքում կարևորվում է նաև քննիչի կողմից բոլոր հնարավոր վարկածների առաջադրումը և դրանց ստուգումը: Վարկածների շրջանակը կախված է նրանից, թե ինչ հանցագործություն է կատարվել և քննության որոշակի փուլում ինչ քննչական իրավիճակ է ստեղծվել: Մասնավորապես, կարող է առաջադրվել հակաիրավա-

կան գործողությունները ընտրական հանձնաժողովի անդամի կողմից կատարված լինելու վարկած: Այս դեպքում կարևոր է պարզել, թե ինչպիսի հանգամանքներում է հանձնաժողովի անդամը գործողությունը կատարել, ձայների սխալ հաշվարկը, թե ընտրությունների արդյունքների սխալ հաստատումը, գիտեր անձը հետևանքների մասին, այն անուշադրության, թե անզգուշության հետևանք է, գործողություններն ուղղված են եղել հոգուտ որևէ թեկնածուի և դրա դիմաց ստացել է պարգևատրում, որոշակի գործողություններ չի կատարել հոգուտ որևէ թեկնածուի:

Մասնագիտական գրականության մեջ տարածված է հանցագործությունների քննության ծրագրա-նպատակային մեթոդը: Այս մեթոդի հիմքում ընկած է քննության կազմակերպման և կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տեղեկատվության ստացման գիտական վերլուծությունը, որն իրականացվում է նախապես մշակված կրիմինալիստիկական տիպային ծրագրերի միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են հանձնարարությունների համակարգ քրեական գործով քննության կազմակերպման և տեղեկությունների ստացման վերաբերյալ:

Քրեադատավարական օրենքով նախատեսված քննչական գործողությունները կրիմինալիստիկայի ուսումնասիրության առարկան են դրանք կատարելու տակտիկական հնարքների տեսանկյունից: Անկախ նրանից քննչական գործողությունն ունի որոնողական կամ ճանաչողական ուղղվածություն, այն ուղղված է նյութական (գրավոր) կամ վերբալ (բանավոր) տեղեկատվության ստացմանը, կապված է վարկածի ստուգման կամ արժանահավատ տեղեկատվության զարգացման հետ: Կախված այն հանգամանքից, թե տեղեկատվության հավաքման և օգտագործման որ ձևն է բնորոշ այդ քննչական գործողությանը, դրա կատարումը մշտապես բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից.

**1.Ճանաչողական-որոնողական փուլ:** Այս փուլում քննիչի կողմից այս կամ այն քննչական գործողության կատարումն ուղղված է հանցագործության տեղի, ժամանակի, հետքերի, պայմանների վերաբերյալ տեղեկատվության ստացմանը: Այդ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ստացումը թույլ է տալիս կողմորոշվել իրավիճակում, պարզաբանել, հստակեցնել գործունեությունը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

**2.Անմիջական կոնտակտ կամ առանց կոնտակտի փոխազդեցությունն օբյեկտի հետ:** Այս փուլում քննչական գործողության նպատակներն իրականացվում են վարկածների ստուգման միջոցով: Քննիչի փոխազդեցությունն ուսումնասիրվող օբյեկտների հետ իրականացվում է վերբալ, գործիքային, փորձարարական ընհանուր, ճյուղային և հատուկ մեթոդների, հնարքների միջոցով: Քննչական գործողությունների նպատակին հասնելու համար կարևոր նշանակություն ունեն տեսողական, լսողական և այլ օրգանների միջոցով օբյեկտները ճանաչելու մեթոդները:

**3.Ստացած արդյունքների, իրեղեն ապացույցների, դատավարական ձևակերպումների և այլնի վերլուծություն:** Այս վերջնական փուլում համակարգվում և գնահատվում է հավաքված տեղեկատվությունը, վերլուծվում են կատարված աշխատանքի քայլերը և արդյունքները, կատարվում են անհրաժեշտ եզրափակիչ գործողությունները և կազմվում է արձանագրություն:

Այսպիսով, ընտրական հանցագործության քննության ժամանակ քննչական գործունեությունը բաղկացած է հետևյալ հաջորդական գործողություններից.

- քննչական գործունեության մտավոր մոդելի ստեղծում՝ հիմնված քննչական իրավիճակի վրա, լուծում պահանջող հարցերի շրջանակի որոշում,

- քննչական գործունեություն իրականացնելու մասին որոշման կայացում,

- համապատասխան գործողության նպատակի, հարցերի որոշում, դրա կատարման պլանի կազմում,

- տիպային և մասնավոր վարկածների առաջադրում,

- կազմակերպչական, տեղեկատվական, տեխնիկական, կադրային, օպերատիվ և այլ ապահովածության ծրագրերի մշակում և իրականացում,

- պլանավորված գործողությունների փուլային իրականացում,

- քննչական գործունեության արդյունքների ամփոփում, իրավիճակի մտավոր մոդելի վերլուծություն և գնահատում, հետագա որոշումների կայացում:

## **Ձևնություն և առգրավում:**

Հատկապես խմբի կողմից կատարված ընտրական հանցագործությունների քննության ընթացքում կատարվող քննչական գործողություններից են փաստաթղթերի (ընտրական, հաշվապահական և այլն), տեղեկատվության տարբեր կրիչների, առարկաների, իրերի (համակարգչային տեխնիկա, կապի միջոցներ, կաշառքի առարկան կազմող իրեր) առգրավումը և զննումը: Այդ գործողություններին նպտակահարմար է մասնակից դարձնել համապատասխան բնագավառի մասնագետների:

Ընտրական հանցագործությունների քննության ժամանակ առավել հաճախ զննության օբյեկտներ կարող են հանդես գալ հետևյալները.

1) **Դեպքի վայրը:** Այս տեսակ հանցագործությունների քննության դեպքում հարկ է նկատի ունենալ, որ «դեպքի վայր» հասկացությունը կարող է տարբերվել «հանցագործության վայր» հասկացությունից: Դեպքի վայրն այն տեղանքն է կամ շենքը, որտեղ հայտնաբերվել են հանցագործության հետքերը, այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվել է մեկ այլ վայրում: Այսպիսով, դեպքի վայրն ու հանցագործության վայրը կարող են համընկնել, իսկ առանձին դեպքերում՝ չհամընկնել: Օրինակ՝ ընտրական փաստաթղթերի կեղծումը կատարվել է ընտրական տեղամասից դուրս, իսկ այդ փաստաթղթերը հայտնաբերվել են ընտրական տեղամասում զննություն կատարելիս:

Անշուշտ, ընտրական հանցագործությունների քննության ժամանակ դեպքի վայրի զննությունը պահանջում է հատուկ մոտեցում: Դրա ճիշտ կազմակերպումը, համապատասխան բնագավառի մասնագետի մասնակցության ապահովումը, գիտատեխնիկական միջոցների առավել լայն օգտագործումը կբարձրացնի այս քննչական գործողության որակն ու արդյունավետությունը:

2) **Տեղանքը, շենքը, շինությունը,** որոնք դեպքի վայր չեն հանդիսանում, սակայն հանցագործության հետ ունեն առնչություն:

3) **Առարկաները և փաստաթղթերը՝** ընտրական փաստաթղթերը, մասնավորապես քվեաթերթիկներ, վկայագրեր, քվեատուփեր և այլն:

Այսպես, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ

քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից և թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովից առգրավվել և զննվել են համապատասխանաբար թիվ 8/54 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը և նույն ընտրատեղամասի ընտրական ցուցակները: Բացի դրանից, զննվել է նաև «www.azatutyun.am» լրատվական կայքում հրապարակված «Դիտորդը կարծում է, որ բողոք ներկայացրած ընտրողին վախեցրել են» վերտառությամբ հոդվածը և նշված հոդվածը լուսաբանող տեսանյութը, որոնք զննությամբ նշված կայքից պատճենահանվել են, իսկ տեսանյութը ներբեռնվել է էլեկտրոնային կրիչի վրա :

Հատկանշական է, որ ընտրական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով որպես զննության օբյեկտներ կարող են հանդես գալ նաև էլեկտրոնային փաստաթղթերը կամ կիչները: Ըստ այդմ` վերը ներկայացված գործով զննվել է նաև թիվ 8/54 ընտրատեղամասում տեղադրված տեսանկարահանող սարքի 14.05.2017թ.` ժամը 13:50-ից մինչև ժամը 14:10-ն ընկած ժամանակահատվածը ընդգրկող տեսագրությունը պարունակող լազերային կրիչը: Վերը նշված զննությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ Երևան քաղաքի ավագանու ընտրությունների օրը` 14.05.2017թ.` ժամը 14:00-ին, մինչ այդ կատարված հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանության արդյունքների համաձայն, հանձնաժողովի անդամ Ա. Հ.-ն, որպես ընտրողների քվեաթերթիկներ և ծրարներ հատկացնող, զբաղեցրել է ընտրողների առաջին ցուցակը սպասարկող սեղանը: Նույն պահին ընտրատեղամաս են մտել Ն. Ս.-ն և Լ. Ս.-ն, ովքեր, մոտենալով տեխնիկական սարքավորումները սպասարկող հանձնաժողովի անդամներին և ստանալով իրենց անվամբ կտրոնները, ժամը 14:02-ին մոտեցել են ընտրական առաջին ցուցակը սպասարկող սեղանին: Դրանից հետո հանձնաժողովի անդամ Ա. Հ.-ն մինչև քվեաթերթիկը և ծրարը Լ. Ս.-ին փոխանցելը ձեռքին եղած գրչով քվեաթերթիկում իր նախընտրած կուսակցության դիմաց համապատասխան նշում կատարելու միջոցով քվեարկել է Լ. Ս.-ի փոխարեն, որից հետո արդեն իսկ քվեարկած քվեաթերթիկն ու ծրարը հանձնել է նրան: Նույն պահին, ընտրատեղամասի մուտքի դռնից արագ քայլելով, Լ. Ս.-ին է մոտեցել Ա. Գ.-ն, ով վերջինիս ձեռքից վերցրել է քվեաթերթիկն ու ծրարը:



Ա. Յ.-ն, փորձելով Ա. Գ.-ի ձեռքից վերցնել քվեաթերթիկն ու ծրարը, վեր է կացել և մոտեցել է Ա. Գ.-ին: Ա. Գ.-ի և Ա. Յ.-ի վիճաբանությանը միջամտել են հանձնաժողովի նախագահ Գ.Ա.-ն և «Ելք» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Ն. Ղ.-ն, ովքեր հանդարտացրել են կողմերին, որից հետո Ա. Գ.-ն նրանց ցույց է տվել Ա.Յ.-ի կողմից քվեարկված և Լ. Ա.-ին հատկացրած քվեաթերթիկն ու ծրարը, որի վերաբերյալ արդեն հանձնաժողովի գրանցամատյանում կազմվել է արձանագրություն, իսկ քվեաթերթիկն ու ծրարը մարվել և կցվել են արձանագրությանը կից՝ գրանցամատյանում:

Բացի վերոնշյալից, նախաքննության ընթացքում զննվել են նաև «www.elections.am» ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքից ազերային կրիչի վրա բեռնված ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացին /ստուգարքին/ մասնակցած և ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու իրավունք ստացած քաղաքացիների ցուցակը և նույն կայքից տպագրված թիվ 8/54 ընտրատեղամասի գտնվելու վայրի, նույն տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմի վերաբերյալ փաստաթղթերը, որոնց համաձայն՝ Աշխեն Հովհաննիսյանը մասնակցել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անցկացված ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացին, հանձնել ստուգարք, ստացել ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու իրավունք, որի հիման վրա նրան տրվել է թիվ 002287 որակավորման վկայականը:

Ձննության արդյունքներով վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը որոշում է կայացրել զննված վերը նշված օբյեկտները որպես այլ փաստաթուղթ ճանաչել ապացույց և թողնել քրեական գործում:

Հարկ է նշել, որ զննումն անհրաժեշտ է կատարել անհապաղ՝ քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո, քանի որ հանցագործները հնարավոր է միջոցներ ձեռնարկեն իրենց հանցավոր գործունեության հետքերը թաքցնելու կամ ոչնչացնելու համար: Բոլոր այն փաստաթղթերը, որոնք կասկած են հարուցում, ինչպես նաև այս կամ այն կերպ հաստատում են ընտրական գործընթացներից ներգրավված պաշտոնատար անձի կողմից որևէ գործողության կատարումը կամ դրանից ձեռնպահ մնալը, պետք է առգրավվեն և այդ մասին պետք է նշվի արձանագրության մեջ:

### **Հարցաքննություն:**

Ինչպես ցանկացած, այնպես էլ ընտրական հանցագործությունների քննության ժամանակ հարցաքննությունն ունի դատավարական մեծ նշանակություն և իրենց տեսակարար մեծ կշռի շնորհիվ քրեական գործով ապացուցողական տեղեկատվության հիմքն են կազմում:

Հարցաքննությունը քրեական գործի քննության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու միջոց է: Այս քննչական գործողությունն ունի տակտիկական, դատավարական և հոգեբանական հիմքեր: Քննիչը, անկախ հարցաքննվողի ունեցած դատավարական կարգավիճակից, պետք կարողանա հմտորեն օգտագործել տակտիկական հնարքներ:

Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում հարցաքննության արդյունավետ իրականացումը պահանջում է դրա մանրակրկիտ նախապատրաստում, ուստի, նպատակահարմար է կազմել պլան՝ մատնանշելով որոշակի հարցեր, որոնք բովանդակում են հետևյալ հիմնաբառերն ու արտահայտությունները՝ ծայների հաշվարկ, վերահաշվարկ, քվեաթերթիկներ, հարցաթերթիկներ, թեկնածուներ, թեկնածություն, ընտրական տեղամասեր, ընտրական հանձնաժողով, ընտրողներ, քարոզչություն, թուլցիկներ, նախընտրական քարոզարշավ, նախընտրական լուծություն, ծայների կեղծում, քվեաթերթիկների կեղծում, դիտորդներ, կամավորներ, ընտրական հանձնաժողովի անդամներ, ծայների ավտոմատ հաշվարկի համակարգ, քվեարկության գաղտնիություն, ընտրական իրավունքներ, քվեարկություն, թեկնածուների գրանցում, հանրաքվե, ընտրությունների արդյունքների նախնական և պաշտոնական հայտարարություն, ընտրական կազմակերպության ֆինանսավորում, վկայագրեր, քվեարկության խոչընդոտում, կեղծիք, խաբեություն, հարկադրանք, սպառնալիք և այլն:

Վերը թվարկավածները կարող են դյուրինացնել հարցաքննության կատարումը՝ այս կամ այն հասկացության պարզաբանման համար ժամանակ խնայելով, ինչպես նաև ճիշտ ընտրելով համապատասխան արտահայտությունը:

Կարևոր է նաև մինչև հարցաքննությունը կազմել կողմորոշող հարցեր: Հարցեր կազմելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքները, որոնք քրեական գործով ենթական են ապացուցման:

Մինչ հարցաքննելն անհրաժեշտ է ուսումնասիրել հարցաքննվողի անձը բնութագրող տվյալները, ինչը կօգնի ոչ միայն վերջինիս հետ հոգեբանական շփման հաստատմանը, այլ նաև՝ տակտիկական հնարքների ճիշտ ընտրությանը: Պետք է հաշվի առնել հարցաքննվողի բարոյական նկարագիրը, հոգեբանական առանձնահատկությունները, անցյալը, ապրելաձևը, մտավոր զարգացվածության մակարդակը և այլն: Այսպիսի տեղեկություններ կարելի է ստանալ այլ անձանց ցուցմունքներից, աշխատանքի կամ ուսման վայրից տրված բնութագրից, օպերատիվ տվյալներից և այլն:

Տակտիկական տեսանկյունից հարցաքննությունը պետք է կատարվի հնարավորինս արագ, սակայն որոշ դեպքերում նպատակահարմար է այն հետաձգել, օրինակ, երբ հարցաքննվողը գտնվում է ոչ սթափ վիճակում, բժշկական օգնության կարիք ունի, եթե քննիչը բավարար չափով պատրաստ չէ հարցաքննությանը, եթե մինչև հարցաքննությունը լրացուցիչ տեղեկությունների կարիք կա, որոնք կբնութագրեն հարցաքննվող անձին և այլն:

Հարցաքննությունը, որպես կանոն, կատարվում է քննիչի աշխատասենյակում, սակայն որոշակի հանգամանքներից ելնելով՝ քննիչը կարող է նպատակահարմար գտնել հարցաքննությունն կատարել դեպքի վայրում, հարցաքննվողի աշխատանքի վայրում, նրա բնակարանում, ընտրական տեղամասում և այլն:

Ոչ կոնֆլիկտային իրավիճակում հարցաքննություն իրականացնելիս անձը գործի հանգամանքները ներկայացնում է ինքնուրույն: Տվյալ դեպքում քննիչի խնդիրն է քննվող իրադարձության իրական պատկերը վերականգնելուն օգնելը և ընտրական գործընթացների հետ կապված և մոռացված փաստերը վերհիշելուն նպաստելը: Ոչ կոնֆլիկտային իրավիճակում անձին հարցաքննելու համար գոյություն ունեն մի շարք տակտիկական հնարքներ: Նպատակահարմար է հարցաքննվողին պարզաբանել քննչական գործողության լրջությունն ու պատասխանատվությունը և միաժամանակ դա կատարել առանց ավելորդ պաշտոնական ձևի, որպեսզի չխանգարի հոգեբանական կապի հաստատմանը:

Տակտիկականպես նպատակահարմար է հարցաքննությունը կազմակերպել՝ ըստ ժամանակագրական հաջորդականության: Հարցաքննվողին առաջարկվում է վերհիշել ինչ է արել որոշակի օրերին՝ սկսած որոշակի պահից: Այդ օրվա իրադարձությունները

վերհիշելով՝ հարցաքննվողը կարող է այնպիսի փաստեր կամ հանգամանքներ նշել, որոնց մասին նախկինում չէր հիշում:

Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում վկաների հարցաքննության առարկան պայմանավորված է նրանով, թե հացաքննվողը ինչ տեղեկատվության է տիրապետում: Ըստ այդմ՝ հարկ է պարզել.

- վկան ինչ դեր է կատարել ընտրական գործընթացում, երբ է նա դարձել ընտրական գործընթացի մասնակից, ապրում է արդյոք այդ ընտրական տեղամասում, թե՛ այլ տեղամասում,

- ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործության կատարման բոլոր հանգամանքները,

- վկան ինչպիսի տեղեկություններ ունի նախընտրական կազմակերպության ֆինանսավորման մասին, հայտնի է նրան, թե ինչ միջոցներով է ձևավորվել թեկնածուի ընտրական հիմնադրամը, ինչպես և ինչ նպատակներով է այն օգտագործվել, որ աղբյուրներից և ում կողմից է վճարվել քարոզչական նյութերի պատրաստման համար և այլն,

- եթե անձը հարցաքննվում է ընտրողներին կաշառելու վերաբերյալ, անհրաժեշտ է պարզել կաշառքի առարկայի, դրա արժեքի, դրա ձևավորման աղբյուրի, ընտրողներին փոխանցելու հանգամանքների, այն անձանց շրջանակի մասին, որոնց ընտրակաշառք է բաժանվել,

- անձը, ով հարցաքննվում է քվեաթերթիկների հետ կապված իրավախախտումների վերաբերյալ, հարցաքննվում է քվեաթերթիկների հայտնաբերման եղանակի, ինչպես նաև անձանց մասին, ովքեր դրանք փոխանցել են ընտրողներին, խնդրել են քվեաթերթիկները դուրս բերել տեղամասից,

- ով է տեղյակ հանցագործության մասին, ով է դրա անմիջական կատարողը, հանցակիցներից յուրաքանչյուրն ինչ գործողություն է կատարել, հարցաքննվողն ինչ հարաբերությունների մեջ է գտնվում կասկածյալի հետ, ունեցել է նրանից կախվածություն,

- ինչ է հայտնի հանցագործության մասնակիցների հարաբերությունների մասին, օրինակ՝ պատգամավորի թեկնածուի և ընտրողներին կաշառելու կազմակերպչի միջև:

Վկաների ցուցմունքները գնահատելիս՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձինք, ովքեր հակաիրավական գործունեությանը մասնակցություն չեն ունեցել, շահագրգռված չեն այն թաքցնելուն և, որպես կանոն, հարցաքննության ժամանակ արժանահավատ տեղեկատվություն են տալիս: Բացի դրանից, միշտ չէ, որ վերջիններս լիարժեք պատկերացնում են այս կամ այն տեղեկատվության նշանակությունը, որը կարող է օգտագործվել հանցավոր գործունեության մասնակիցներից յուրաքանչյուրի մասնակցության ապացուցման և մեղքի անհատականացման համար:

Ինչ վերաբերում է կասկածյալի, մեղադրյալի հարցաքննությանը, ապա այն, որպես կանոն, իրականացվում է կոնֆլիկտային իրավիճակում, քանի որ վերջիններս հրաժարվում են ցուցմուք տալուց, տալիս են սուտ ցուցմունք կամ փոխում են ցուցմունքները: Կոնֆլիկտային իրավիճակում հարցաքննելու հնարքներից մեկը սուտ ցուցմունք տալու դրդապատճառի բացահայտումն է: Դրդապատճառ կարող է լինել քրեական պատասխանատվությունից ազատվելու ցանկությունը, հանցակիցների վրեժխնդրությունից վախենալը, նրանց կարեկցելը և այլն:

Առանձին դեպքերում ճիշտ ցուցմունքներ կարելի է ստանալ՝ ազդելով կասկածյալի կամ մեղադրյալի դրական հատկանիշների վրա: Դրա համար պետք է վեր հանել հարցաքննվողի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նրա արժանապատվությունը, խիզախությունը, մարդասիրությունը և այլն: Այս հնարքն իհարկե կիրառելի է միայն այն մեղադրյալների կամ կասկածյալների նկատմամբ, ում մոտ պահպանվել են դրական հատկանիշները:

Կոնֆլիկտային իրավիճակում արդյունավետ տակտիկական հնարք է նաև ապացույների ներկայացումը: Ապացույցները պետք է ներակայացնել ըստ աճող հաջորդականության՝ սկսելով առավել կարևոր ապացույցից: Հարցաքննվողին պետք է այնպիսի ապացույցներ ներկայացնել, որոնք նրան կհամոզեն մտածել իր ժխտողականության անհիմաստության մասին:

Անշուշտ, հարցաքննության տակտիկական հնարքները բազմազան են, սակայն հարկ է նկատի ունենալ, որը վերը նշված իրավիճակներն ու տակտիկական հնարքներն առավել բնորոշ են ընտրական հանցագործությունների ընթացքում կատարվող հարցաքննություններին: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է նկատի ունենալ,

որ ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունների արդյունքները, ընտրական հանցագործությունների կատարմանն առավելագույնս ներգրավված են նաև պաշտոնատար անձինք, որոնց հարցաքննության նախապատրաստությունն ու կատարումը պահանջում են տակտիկական գծի որոշակիացում:

### **խուզարկություն:**

Ընտրական հանցագործությունների քննության ընթացքում խուզարկությունները, որպես կանոն, կատարվում են ընտրական հանցագործությունների նախապատրաստման և կատարման ընթացքում օգտագործվող տարբեր առարկաների, փաստաթղթերի, քվեաթերթիկների պատրաստման համար տեխնիկական միջոցների ու սարքների, կեղծ քվեաթերթիկների կամ դրանց, ընտրական այլ փաստաթղթերի ձևանմուշների և այլ օբյեկտների, ինչպես նաև քողարկված հետքերի ու թաքնված անձանց հայտնաբերելու նպատակով: Բացի դրանից, այս տեսակ հանցագործությունների քննության շրջանակներում խուզարկություններ կարող են կատարվել նաև ընտրակաշառքի առարկայի, ինչպես նաև կաշառքի առարկա հանդիսացող ու որոշակի գումարի, իրերի կամ նյութական այլ արժեքների և դրանց մասին վկայող ձայնագրություններ, նամակներ, փաստաթղթեր հայտնաբերելու նպատակով, ինչպես նաև այնպիսի առարկաներ, որոնք հաստատում են կաշառքի սուբյեկտների կապի մասին: Կախված քննվող գործի առանձնահատկություններից՝ կարող է իրականացվել կասկածյալի անձնական խուզարկություն, բնակարանի, ինչպես նաև աշխատավայրի, նախընտրական շտաբերի, ինչպես նաև ընտրական տեղամասերի խուզարկություն:

Նույնիսկ այն դեպքերում, երբ ընտրակաշառքն արդեն փոխանցվել է, կաշառք տվողի կամ կաշառքի միջնորդի խուզարկությունը նույնպես անհրաժեշտ է, քանզի կարող են հայտնաբերվել տարբեր փաստաթղթեր, գրություններ, որոնք կվկայեն կաշառք վերցնողի հետ նրանց կապի մասին: Որպես կանոն, անձնական խուզարկությունը կատարվում է հանցագործության պահին ձերբակալումից հետո: Կաշառքի առարկան հաճախ թաքցված է լինում գաղտնարաններում, տարբեր թղթերի, փաստաթղթերի մեջ և այլ տեղերում, ուստի պետք է կատարվի մանրակրկիտ խուզարկություն: Նախընտրական շտաբի կամ թեկնածուի աշխատավայրի խուզարկությունը կատարվում է այնպիսի փաստաթղթեր հայտնաբերե-

լու համար, որոնք կարող են հաստատել ընտրակաշառքի տրամադրման փաստը, չափը, ստացող անձանց ցանկը և այլն:

Բոլոր դերաքերում տակտիկապես նպատակահարմար է խուզարկության ժամանակ վերցնել համակարգչային տեխնիկան, կապի միջոցները, բնօրինակ և ենթադրյալ կեղծված ընտրական փաստաթղթերը, տեխնիկական միջոցները, որոնք օգտագործվել են կեղծ փաստաթղթեր կազմելու համար, պայմանագրերը (այդ թվում քարոզչական) և դրանց չլրացված բլանկները, հաշվապահական փաստաթղթերը, սևագիր թղթերը:

### **Դատական փորձաքննությունների նշանակում և կատարում:**

Փորձաքննությունները ընտրական հանցագործությունների գործերով ապացուցման գործընթացի անհրաժեշտ և կարևորագույն տարրերից են: Գործնականում ընտրական հանցագործությունների քննության ընթացքում անհնար է արձանագրել որևէ առաջընթաց՝ առանց տարատեսակ դատական փորձաքննությունների նշանակման և կատարման: Դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով՝

1. իրադրության և միջավայրի առանձնահատկություններով, որում իրականացվում է ընտրական գործուներությունը,

2. ընտրական իրավունքների դեմ ուղղված ոտնձգությունների ուղղվածության և բովանդակության յուրահատկությամբ, որի շրջանակներում գործում են այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, ինչպիսիք են՝ տեխնիկական գործիքներն ու միջոցները, թվային և տեսաձայնագրող տեխնոլոգիաները, փաստաթղթերը, որոնց լիարժեք ուսումնասիրումը հաճախ հնարավոր չէ ինքնուրույն իրականացնել՝ առանց հատուկ գիտելիքներ ունեցող փորձագետի օգնությամբ դիմելու,

3. այս տեսակ հանցագործությունների քննության ընթացքում քննիչը տեղեկատվական փոխերգործության մեջ է մտնում ընտրական գործընթացների մասնակիցների հետ, ովքեր բավական լավ գիտեն ընտրական հանցագործությունների կատարման տեխնոլոգիան և առանձնահատկությունները: Ուստի արարքի առանձին հանգամանքները պարզաբանելու և գործով ճշմարտությունը բացահայտելու համար քննիչին անհրաժեշտ է բազմակողմանի մաս-

նագիտական օգնություն՝ ի դեմս համապատասխան բնագավառի հատուկ գիտելիքների տիրապետող անձի:

Նշված հանգամանքը պայմանավորում է ոչ միայն ժամանակին դատական փորձաքննություններ նշանակելու և կատարելու անհրաժեշտությունը, այլ նաև հետազոտման համար անհրաժեշտ օբյեկտների, իրեղեն ապացույցների, փաստաթղթերի և տեղեկատվության պատշաճ ապահովումը, որոնք ստացվել են քննչական ճանապարհով<sup>1</sup>:

Այսպիսով, դատական փորձաքննության նշանակման և կատարման եղանակով հատուկ գիտելիքների կիրառման գործընթացը ընտրական հանցագործությունների գործերով նպատակահարմար է դիտարկել որպես անընդհատ զարգացող, բարդ և դինամիկ համակարգ, որի տարրերն են՝

- քննիչի կողմից մինչև փորձաքննություն նշանակելը տեղեկատվական ապահովման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը՝ դեռևս սկզբնական քննչական գործողությունների կատարման պահից,

- փորձաքննության տեղեկատվական ապահովումը՝ ընդհուպ փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ու հետազոտման օբյեկտները փորձագետին ուղարկելը,

- փորձաքննության իրականացման գործընթացում տեղեկատվական ապահովումը՝ ինչպես քննիչի, այնպես էլ դատական փորձագետի նախաձեռնությամբ (ընդ որում՝ և՛ մեկը, և՛ մյուսը նախապես պետք է համաձայնեցվեն):

Ընտրական հանցագործությունների գործերով փորձագիտական հետազոտության օբյեկտներ են հանդիսանում ընտրական գործընթացների հետը կապված փաստաթղթերը, սարքավորումները, դրանց օգտագործման հետ կապված հետքերը: Քանի որ դրանք հիմնականում հանդիսանում են զննության, խուզարկության, առգրավման արդյունքում ստացված տվյալներ, նշված քննչական գործողություններն իրականացնելիս քննիչը պետք է հատուկ ուշադ-

---

<sup>1</sup> Ст'у Комментарий к Федеральному закону .О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации / Отв. ред. **Ю. Г. Корухов, Ю. К. Орлов, Б. Ф. Орлова.** М., Проспект, 2002, էջ 741:



րություն դարձնի համապատասխան օբյեկտների, փաստաթղթերի, իրեղեն ապացույցների բացահայտմանը և ուսումնասիրմանը, քանի որ դրանք հետագայում հանդիսանալու են փորձագիտական հետազոտման օբյեկտ և քննիչի կողմից թույլ տրված որևէ բացթողում կամ սխալ կարող է հանգեցնել փորձագետի ոչ օբյեկտիվ եզրակացության տրամադրմանը: Վերջինս, մասնավորապես՝ վերաբերում է նաև առաջին հայացքից մանրուք թվացող այնպիսի երևույթին, ինչպիսին է հայտնաբերված առարկայի ոչ ճիշտ փաթեթավորումը, ինչը կարող է հանգեցնել առարկայի հատկանիշների վնասմանը կամ ոչնչացմանը:

Ինչ վերաբերում է փորձաքննության տեղեկատվական ապահովմանը, ապա նկատի ունենք փորձաքննության տեղեկատվական բազայի ընդարձակումը և ճշգրտումը փորձաքննությանը համընթաց իրականացվող քննչական գործողությունների միջոցով, որի արդյունքները կարող են ներկայացվել փորձագետին լրացուցիչ օբյեկտների և փորձաքննության համար անհրաժեշտ տեղեկությունների տեսքով: Սակայն փորձաքննության տեղեկատվական ապահովումն այսբանով չի սպառվում: Քննիչը, համապատասխան խնդիրներ լուծելով, իրավունք ունի խորհրդակցելու փորձագետի հետ՝ քննչական գործողությունների կազմակերպման և իրականացման ընթացքում նրա պահանջներն ու խնդիրները պարզելու և հաշվի առնելու նպատակով, ներգրավելու փորձագետին դրանց իրականացմանը:

Փորձաքննության խնդիրները որոշելու համար հիմնական, սակայն ոչ սպառիչ նշանակություն ունեն փորձաքննությունը նախաձեռնող անձի կողմից փորձագետին առաջադրվող հարցերը, որոնք դասակարգվում են տարբեր հիմքերով: Ընտրական հանցագործությունների գործերով հիմնականում բնորոշ են այն հարցերը, որոնք վերաբերում են ընտրական գործընթացի կազմակերպմանը և դրա առանձնահատկություններին:

Դատափաստաթղթաբանական փորձաքննությունները կրիմինալիստիկական փորձաքննությունների ամենատարածված տեսակներից են: Այս փորձաքննությունները նշանակվում ու կատարվում են փաստաթղթերի (ընտրական փաստաթղթերի, քվեաթերթիկների, տարբեր գրառումների և այլն) պատրաստման կամ կեղծման եղանակը և դրա համար օգտագործվող տեխնիկական միջոց-

ները (պատճենահանող սարք, գրամեքենա, համակարգչի տպիչ և այլն) պարզելու, վնասված փաստաթղթերի վերականգնման, ինչպես նաև փաստաթղթերի նյութերի (թղթի, թանաքի, համակարգչի տպիչի քարթրիջի և այլն) հետազոտման, նույնացման նպատակով:

Ընտրական հանցագործությունների գործերով փաստաթղթաբանական փորձաքննության հետազոտման օբյեկտները բազմազան են՝ տպագիր և ձեռագիր տեքստեր, կնիքներ և դրոշմակնիքներ ու դրանց դրոշմներ, ձևաթղթեր, ջնջված և անընթեռնելի ձեռագիր տեքստեր (գրառումներ), ստորագրություններ, տառային և թվային նշումներ, թղթադրամներ և արժեթղթեր, պատառուտված և այրված փաստաթղթեր, տպագրական արտադրանք, տպագրական ներկեր, համակարգչի տպիչներ, գրամեքենաներ և գրելու գործիքներ՝ դրանց գրելանյութ, ներկանյութ, թուղթ և այլն:

Ղատափաստաթղթաբանական փորձաքննությունները հաճախ կատարվում են այլ, օրինակ՝ դատաձեռագրաբանական, դատահետքաբանական կամ դատանյութագիտական փորձաքննությունների հետ համալիր կարգով:

Ընտրական հանցագործությունների քննությանը բնորոշ են նաև այլ տեսակի փորձաքննություններ, մասնավորապես՝ տեսանյութի կամ տեսաձայնագրության հետազոտման նպատակով՝ աուդիո և վիդեո, դատադիմանկարային փորձաքննություններ, համակարգչային տեխնիկայի կամ տեղեկատվության կրիչների հետազոտման նպատակով՝ դատահամակարգչատեխնիկական և այլ տեսակի փորձաքննություններ:

Ինչ վերաբերում է ընտրական հանցագործությունների քննության ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումներին, ապա պետք է նշել, որ դրանք հիմնականում իրականացվում են ընտրական գործընթացներին կազմակերպված հանցավոր խմբերի կողմից ներգրավված լինելու կամ այդ ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կատարման դեպքերում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքների ամփոփումը հնարավորություն է տալիս գալու այնպիսի եզրահանգումների, որոնք նպատակաուղղված են ոչ միայն ընտրական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը, ընտրական իրավունքների խախտումների վերացմանն ու ընտրական հանցագործությունների քննության որակի բարելավմանը, այլ նաև մեծ հաշվով ժողովրդավարական ինստիտուտների դերի բարձրացմանն ու դրանց գործունեության կատարելագործմանը:

Նախևառաջ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնում համապատասխան մասնագետների պակասի պատճառով ընդունված բազմաթիվ օրենքներ, դեռևս կատարողներին չհասած, սկսում են անվերջ փոփոխությունների ենթարկվել, ինչն էապես խաթարում է իրավակիրառ գործընթացը երկրում: Քիչ չեն նաև այն օրենքները կամ դրանց առանձին նորմերը, որոնք ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվում են հակասահմանադրական և դադարում են գործելուց: Այդ կապակցությամբ նպատակահարմար է քննարկել.

ա) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում երկրորդ պալատ ձևավորելու հարցը՝ հանրապետության վաստակաշատ և որակյալ իրավաբաններից, տնտեսության, մշակույթի և քաղաքականության ոլորտի առաջատար մասնագետներից: Այդ պալատի առկայությունը հնարավորություն կտա ուղղել, շտկել ստորին պալատի սխալները և հապճեպ ընդունած որոշումները, կնպաստի օրենքների ավելի մանրամասն և խնամքով մշակմանը և ընդունմանը,

բ) Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ պատգամավորության թեկնածուների կրթական և մասնագիտական ցենզի սահմանումը՝ այն հաշվով, որ համամասնական ընտրակարգով ներկայացվող պատգամավորության թեկնածուների ցուցակներում (անցողիկ համարներում) ընդգրկվեն 35-40 տոկոս հանրապետության վաստակաշատ իրավաբաններ, տնտեսագետներ, քաղաքագետներ և մշակույթի ու սոցիալական ոլորտի առաջատար մասնագետներ:

Ժողովրդին պատկանող իշխանությունը յուրացումից զերծ պահելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված նորմը, որի համաձայն՝ իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է (3-րդ մաս) չի կարող դիտվել որպես լուրջ երաշխիք: Անհրաժեշտ է Սահմանադրության 2-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ պարբերությամբ, որում նման դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վերապահվի ինչպես դժգոհության արտահայտման, այնպես էլ դիմադրության իրավունք, ինչը նախատեսված է արտասահմանյան մի շարք ժողովրդավարական կարգ ունեցող երկրների սահմանադրություններում:

Խնդիրն այն է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները չեն կարողացել ապահովել սահմանադրական կարգավորման ենթակա օբյեկտների հավասարակշռությունը: Մասնավորապես, եթե սահմանադրությունը համակողմանիորեն կարգավորում է քաղաքական համակարգի ինստիտուտների իրավական կարգավիճակը, գործառույթները, լիազորությունները, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ապա սոցիումի իրավունքների մասով միայն ունենք մեկ դրույթ, այն է ՀՀ Սահմանադրության երկրորդ հոդվածը, որն ամրագրում է Ժողովրդաիշխանության սկզբունքը: Մինչդեռ Ժողովրդի ներկայացուցիչը համարվող իշխանությունը եթե չի արդարացնում Ժողովրդի վստահությունը, ապա վերջինից ձերբազատվելու որևէ սահմանադրական, առավել ևս օրենսդրական ընթացակարգ չի գործում: Այս տեսակետից հիմնովին վերանայման է ենթակա նաև հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Խնդիրն այն է, որ երբ Ժողովուրդը արտահայտում է իր դժգոհությունը, այն հնարավոր չի լինում արժանացնել իրավական գնահատականի, ինչի արդյունքում պետությունը, օգտագործելով իր վարչական լծակները, հասարակության կողմից դժգոհության արտահայտման ցանկացած վարքագծային դրսևորում որակում է իբրև սահմանադրական կարգի դեմ ուղղված գործողություն՝ սեփական շահերի համար օգտագործելով երկրի հիմնական օրենքը: Նման դեպքերում իշխանությունը կարող է պնդել, որ կատարում է սահմանադրությամբ իր վրա դրված հասարակական կարգը պահպանելու պարտականությունը,

իսկ ժողովուրդը պնդում է, որ իրականացնում է իրեն պատկանող իշխանությունը:

Մարդու կարևորագույն քաղաքական իրավունքներից են ընտրական իրավունքները, որոնց իրականացման դեմ ուղղված իրավախախտումներն ու հանցագործությունները ժամանակակից իրողություններին համահունչ իրավական գնահատական պետք է ստանան:

Ընտրական իրավունքի դեմ ուղղված խախտումները պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝ նախընտրական, ընտրական, հետընտրական: Մասնավորապես, նախընտրական իրավախախտումների թվին են պատկանում քվեարկությանը նախորդող օրը քարոզչություն կատարելը, թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը և այլն: Քվեարկության օրը կատարվող իրավախախտումներից են տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը և այլն: Հետընտրական իրավախախտում է համարվում ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը: Կան նաև այնպիսի իրավախախտումներ, որոնք կարող են կատարվել ինչպես քվեարկությունից առաջ կամ հետո, այնպես էլ քվեարկության օրը, օրինակ՝ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը), ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, ընտրողի կողմից թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից կաշառք ստանալը կամ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը և այլն:

Մեր կողմից ուսումնասիրված քրեական գործերը ցույց են տալիս, որ խաբեության կամ կեղծիքի միջոցով ընտրախախտումներ կատարելու դեպքերը մեծամասնություն են կազմում: Բազմաթիվ են նաև լրագրողի նկատմամբ բռնության, լրագրողական գործունեությանը խոչընդոտելու դեպքերն ու ընտրակաշառքի հետ կապված դեպքերը:

Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի՝ ԱՊՀ անդամ պետությունների քրեական օրենսգրքերում նախատեսված են ընտրական գործընթացներին վերաբերող այնպիսի իրավախախտումներ, որոնք նախատեսված չեն հայրենական օրենսդրությամբ: Մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրքերում պատասխանատվություն է նախատեսված թեկնածուի, խմբակցության, ընտրական կամպանիայի ֆինանսավորման կարգի խախտման համար: Իսկ օրինակ՝ Տաջիկստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններ են համարվում միայն ընտրական իրավունքի իրականացմանը կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքների իրականացմանը խոչընդոտելը և ընտրությունների, հանրաքվեի փաստաթղթերի կեղծումը կամ ձայների սխալ հաշվարկը: Փաստորեն, Տաջիկստանի Հանրապետությունում օրենսդիրն ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների մասով սահմանափակվել է միայն երկու հոդվածներով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը՝ հարկ է նշել, որ չնայած կատարված օրենսդրական բարեփոխումները ապահովել են դրական առաջընթաց, այնուամենայնիվ ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներ պարունակում են այնպիսի ձևակերպումներ, որոնք կարող են դժվարություններ առաջացնել իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես, անհասականալի են ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածում «քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը» կամ «քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթուղթ» արտահայտությունները: Խնդրահարույց է նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2 տարբեր մասեր, ըստ էության, պատասխանատվություն են նախատեսում նույն արարքի համար:

Ինչ վերաբերում է ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկային ու դրա կատարելագործման հեռանկարներին, ապա հարկ է նկատել, որ այս տեսակ հանցագործությունների քննությանը բնորոշ օրինաչափություններն ու առաձնահատկությունները հիմնականում պայմանավորված են դրանց կատարման եղանակների բազմազանությամբ: Ընդ որում, ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկայի ամբողջական ուսումնասիրման տեսանկյունից հարկ է նկատի ունենալ, որ դրանց քրեաիրավական, դրանով պայմանավորված նաև կրիմինալիստիկական բնութագրերը բավական դինամիկ են և ժողովրդավարության զարգացման որոշակի փուլերում դրանք ձեռք են բերում որոշակի առանձնահատկություններ: Այլ կերպ ասած՝ այս տեսակ հանցագործությունների քրեականացման շարժընթացն ուղղակիորեն պայմանավորված է տվյալ երկրում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ու զարգացման մակարդակով, ընտրական գործընթացների վերահսկման և ընտրությունների կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիական կառուցակարգերի ու գործիքակազմի ներդրման հնարավորություններով և այլն:

Այդուհանդերձ մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկան՝ որպես կրիմինալիստիկական մասնավոր մեթոդիկա դեռևս տեսական կատարելագործման կարիք ունի՝ հաշվի առնելով այս տեսակ հանցագործությունների քննության օրինաչափություններն ու մարտահրավերները: Հատկանշական է, որ ընտրական հանցագործություններին մասնակիորեն բնորոշ են նաև պաշտոնեական, կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների քննության մեթոդիկաների հայեցակարգային դրույթները, քանի որ, որպես կանոն, այս տեսակն հանցագործություններին ներգրավվում են կազմակերպված հանցավոր խմբեր, պաշտոնատար անձինք, արձանագրվում են կաշառքի դեպքեր և այլն:

Ընտրական հանցագործությունների քննության որակի բարելավման համար առանցքային նշանակություն ունի տիպային քննչական իրադրության ամբողջական բացահայտումը և դրան համապատասխան քննության պլանավորումը, քանի որ, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, դրանց բնորոշ են իրավիճակի արագ փոփոխումը, դեպքերի ու փաստերի

տարերային կամ անկանխատեսելի զարգացումը (եսկալացիան) և այլն:

Քննության կազմակերպման արդյունավետության բարձրացման տեսնակյունից՝ վարույթն իրականացնող մարմինը համագործակցում է ոչ միայն քրեադատավարական սուբյեկտների, այլ նաև ՋԼՍ-ների, հասարակական կառույցների ներկայացուցիչների, տարբեր ֆիզիկական անձանց հետ: Ուստի, հաշվի առնելով այս տեսակ աշխատանքի տեսակարար մեծ կշիռը, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ու տեղեկատվության տարածման արագ շարժը՝ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այս գործընթացի կազմակերպման վրա՝ մի կողմից ստանալ հավաստի ու լիարժեք տեղեկատվություն, իսկ մյուս կողմից՝ քննության ընթացքի մասին հասարակությանը տրամադրել համաչափ տեղեկատվություն՝ չվտանգելով անմեղության կանխավարկածի ու նախաքննության գաղտնիության սկզբունքների պահանջները: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն այլ տեսակի հանցագործությունների, ընտրական հանցագործությունների քննության ընթացքի և արդյունքների նկատմամբ առավել մեծ հետաքրքրություն են դրսևորում քաղաքացիական հասարակության անդամները՝ անհատներ, հասարակական կազմակերպություններ և այլն:

Քննության տարբեր փուլերի վերաբերյալ մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ընտրական հանցագործությունների քննության ընթացքում իր կարևորությամբ առանձնակի ընդգծվում է քննության սկզբնական փուլը՝ հատկապես ստուգողական փուլը, երբ որոշվում է քրեական գործ հարուցելու և քրեական հետաանդում իրականացնելու անհրաժեշտության հարցը: Այս փուլում բացի քրեադատավարական գործողություններից, ակտիվորեն իրականացվում են նաև կազմակերպատեխնիկական միջոցառումներ, որոնք ուղղված են ստացված և ստացվող տեղեկատվության ստուգման, զնահատման, համակարգման աշխատանքներին և այլն: Եթե հաշվի առնենք նաև, որ մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական իրավունքների իրականացման դեմ ուղղված ոտնձգությունների մասին հաղորդումները մեսամասամբ ստացվում են ընտրության կամ հանրաքվեի օրը, ապա կա-



րելի է պատկերացում կազմել քննության այս փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքի ծավալի ու նշանակության մասին:

Եվ վերջապես, կրիմինալիստիկական տակտիկայի տեսանկյունից կարևորվում է ընտրական հանցագործությունների քննության ընթացքում անսպասելիության գործոնի կիրառումը, մինչդեռ ընտրական և հետընտրական որոշ գործընթացների (արդյունքների բողոքարկման, ծայների վերահաշվարկի և այլն) ներկայիս իրավակարգավորումների պարագայում դրա պահպանումը գրեթե անհնար է:

Այսպիսով, ընտրական հանցագործությունների քննության մեթոդիկայի կատարելագործումը, ի թիվս օրենսդրական բարեփոխումների և քրեադատավարական արդյունավետ գործունեության, պահանջում է կազմակերպատեխնիկական և տակտիկակրիմինալիստիկական միջոցառումների ժամանակակից ալգորիթմների մշակում և ներդրում այս տեսակ հանցագործությունների քննության ընթացքում: